

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ  
Ա.Մ.Ս.Ա.Գ.Ի.Բ

№ 2-3 1899

ՓԵՏՐ.-ՄԱՐՏ

№ 2-3 1899

ՅԱՍՆՈՒՄՔՆԵՐՈՐԴ ՅԱՐԻ

Երես


1 ՊՈՒՇՎԻՆԻՑ Յ. Տէր-ԳէօՐԳԵԱՆ	157	Պալուաւա. (պոկմա, վերջ).
2 ԱՐԵՎԵԱՆ, Ա. . . . .	173	Ակեսուրը (վերջ):
3 ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ ԽԱՏՈՒԲԵԱՆ	200	Բանառելզմութիւններ:
4 ՓՈՇԱՅԵԱՆ, Կ. Յ. . . . .	202	Օդ և կլիմա (վերջ):
5 ԽԱՇՀՈՎԵԱՆ, ԱԽԵՏԻՔ . . . . .	214	*** (բանասրի ձութ.):
6 ՏէՐ-ՄԵՐԱՔԵԱՆ, ՅՈՎ.Հ. . . . .	215	Դեռահասների ազար ընթերցանութիւնը:
7 ՇՈՒՆԹ . . . . .	234	Ազար բանասրելծութիւններ:
8 ԽԱԺԱԿԻԵԱՆ, ԳԱՐԵԳԻՆ . . . . .	238	Հարկերը Տաճկաստանում (շար.):
9 ԱԹԱՅԵՍՆ, ԱՐԵԱԿ . . . . .	249	Զինուրի երգերից (բանասր.):
10 ՅՈՎ.ՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԵԼ . . . . .	251	Սոցիալական էւոլյուցիա (շար.):
11 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ . . . . .	260	Գարնան մօրիւներ I—IV:
12 ԶԻՒՐԻԿԱՐԵՍՆ, Ա. . . . .	263	Զեռքի աշխ. դպրոցներում (վերջ):
13 Վ.Ա.ՆԵՑԵԱՆ, ԳԲ. . . . .	278	Հակերէնը մշակելու նիւթեր:
14 Վ.Ա.ԶԱՐԵԱՆ, ԵՐԻԱՆԴ . . . . .	282	Անցեալի վիշատակը (վերջ):
15 ԱՂԲԱԿԻԵՍՆՑ, Ն. . . . .	288	Ճուղուրեանցի Աշխատ. Սարգիսը:
16 ՄԱՐ. ՅԱՐ. . . . .	291	Շանթի սԴարձուց:
17 Ա. Ե. և Ա. Ա. . . . .	297	Մուրճի մի զրախոսականի առթիւ:
18 ՄԱՐԴԱՆԵԱՆ, ՖՐԻԴՈՆ . . . . .	304	Նաւթալին քրոնիկ, III:
19 ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . . .	316	Բաքրատ հաւոց գրադարան-Ընթերցանութիւնը:
20 ՍԱԼԻՒԹԻՐԵԱՆ . . . . .	324	Վաշինոսութիւնը Ախալքալաքի գաւառում:
21 Ա.ՐԿՈՄԵԴ Տ. . . . .	328	Քաղաքագին ինքնավարութիւն II.
22 ՅԱՐՄԱՐԵԱՆ Ս. . . . .	334	Պարսկասրանից, II.
23 ԽՄԲ. . . . .	340	Զանազան լուրեր:

Յայտարարութիւններ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. Ա-ՕՏՒԵԱՆՑ

Տիպոգրաֆия М. Д. Ротиниана, Гол. пр., 1. № 41.



# ՄԱԿԱՀ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 2—3 1899

ՓԵՏՐԻԿՈՒՐ—ՄԱՐՏ

1899 № 2—3

ՏԱՄՅԱԼԻՄԵՐԻ ՏՈՒՐ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Ա. Դ. ԱՕՏԻՆԵԱՆՑԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротніанца Гол. пр., д. № 41.

1899

# СИРИЛ

СИРИЛ, ДОЧЬ СИРИЛЫ АДАМОВЫ

ИЛЬЯ МУРЖИН

СИРИЛ  
СИРИЛ  
СИРИЛ

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го Марта 1899 г.

# „ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Բ Ը

մանելու է առաջիկայ 1899 թւականին իւր գոյութեան

## ՏԱՏՈՒՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

ՀՐԱՑԱՐԱԿԻԵԼՈՎ ՆՈՅՆ ԺՐԱԴՐՈՎ, ՈՐՊէՍ ՄԻՆՉԵԿ ԱՅԺՄ  
ՀԱՐՍՏԱՑՆԵԼ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ, աւելի բազմակողմանի դարձնե-  
լով ամսագրի բաժինները, և դորա համեմատ մնծացնել  
Մուրճի ծառալը—այդ ամենը կախւած է բաժանորդների  
թւից:

ԱՇԽԱՏԱԿՅԱԱՆ ԽՈՒՄԲԸ բաղկացած է շուրջ երեսուն հոգուց, որոնք  
ծանօթ են ամսագրիս մշտական լնթերցողներին:

ՀՐԱԿԻՐՈՒՄ ԵՆՔ հայ լնթերցող հասարակութիւնը որ պաշտպանի  
Մուրճը բաժանորդագրութիւնով, որը միակ զրաւականը կա-  
րող է լինել ամսագրի յարակեութեան, ճոխութեան և հրա-  
տարակման կանոնաւորութեան:

ԴԻՒՐՈՒԹԻՒՆԵՐ են արւած քիչ ունեորներին բաժանորդ գրւելու,  
որպէս զի Մուրճը կարողանայ կարելիին չափ լայն խաւերը  
թափանցել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ նաև ներկայ համարի հետ դրկուում են  
բոլոր բաժնորդներին ծրարներ նամակներով։

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ դիմել խմբագրատուն՝ Տիֆլիս, ՅԵ թ-  
դակցիո „ՄՈՐՎԵ“։ արտասահմանից Tiflis. Rédaction de  
Mourtch. Կարելի է դիմել նաև այն բոլոր անձերին, որոնց  
խմբագրութիւնս հաւատացել է անդորրագրերի թանկներ խըմ-  
բագիր հրատարակչի ստորագրութեամբ։

ԲԱԺՆԵԳԻՆԸ 10 ռուբլի է, որ կարելի է վճարել կէսը ստորագրւե-  
լիս, միւս կէսը մինչև յունիսի վերջը 1899 թ.

ԽՄԲԱԳՐԱՑՈՒՆԸ գտնուում է Թիֆլիս, Սերգիևսկայա փողոց, տուն  
№ 6 և բաց է ամեն օր, ժամ 12—2, 5—7։

ՄՈՒՐՃԻ ՏԱՍԸ ՏԱՐԻԱՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ կազմում է  
և պիտի հրատարակի առանձին բրոշիւրով։ 1899-ի բաժա-  
նորդները այդ ցուցակը պիտի ստանան ձրի։

# ՊԱԼՏԱԿԱԾ

## ՊՈՒՅԱ

Ա. Ս. ՊՈՂԻՉԿԻՆԻ — Թարգմ. Յակ. Տէղ-Գէորգեևնի

### ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

Հոգու խոր վիշտը արգելք չէ լինում  
Ուկրայնացի ծեր զօրավարին  
Յանդուգն, աներկիւղ ձգորելու հեռուն  
իւր նպատակին անշեղ դիմում է,  
Նւէդների հպարտ կայսրի հետ գաղպնի  
Նա իւր կապերը շարունակում է:  
Բայց նոյն ժամանակ իւր ոստիների  
Կասկածու աչքը խաբելու համար—  
Խմբով բժիշկներ շուրջն է հաւաքում,  
Կարծես փանջւելիս լինի չարաչար,  
Եւ հառաջելով օգնութիւն խնդրում:  
Կրքի և հոգսի և հիւանդութեան,  
Ռազմի և վշտի բոլոր պրուզներն—  
Մօգալուս մահւան այս կարապեպներն,  
Տանջանքի մահիմ զլորեցին նորան:  
Ուզում է առնել սրբազան կարգը,  
Իւր հոփւապեփին կանչում է ահա,  
Եւ խորհրդաւոր օծանելիքը  
Հոսում է իւր նենդ ալիքների վրա:

Անցնում են օրեր։ Իզուր էր Մոսկվան  
Ռուբէ առ ըսպէ հիւրերին սպասում,  
Եւէդների համար, հին թշնամական  
Եիրիմների մէջ, ազօթքներ կարդում։  
Քայլ Կարլոս յանկարծ երեսը դարձրեց  
Եւ Աւկրայնայ ռազմը փոխադրեց։

Եւ ժամը հնչեց։ Ելաւ իւր մահճից  
Զարքաշ կմակրը—հիւանդ Մագէպան,  
Կենդանի դիակն, որ բիւր ցաւերից  
Տանջւում էր երէկ իւր շիրմի վերան։  
Արդ զօրքի առաջ շրջում է զւարժ  
Իբրև Պետրոսի ոսոխ զօրաւոր,  
Հրացայր աչքերը պսպղում հպարտ,  
Դաշոյնը շարժում և նժոյզն յորդոր  
Նեշպակի դէպի Դեսնան է վարում։—  
Չիդ պարիների լծիցը ճնշւած  
Յայրնի խորամանկ կարդինալի պէս,  
Որ հւոմէական խոյրով պսակւած՝  
Դարձաւ և' ջահիլ, ողջ և' զւարժերես  
Կայծակի նման լուրը դարածւեց,  
Յուզւեց, մրրկեց ողջ Աւկրայնան։  
«Նա միւս կողմն անցաւ, նա երգման զրժեց,  
Կարլոսի առաջ ինչպէս դաւաճան  
Նա խոնարհաբար բունչուկը թեքեց...»  
Բռնկեց բոցը. ժողովրդական  
Կռւի արիւնուր օրօրը ծագեց։

Ով կարէ արդեօք թագաւորական  
Անզուսպ զայրոյթը նկարագրել.  
Կարդում են բանադրանք ողջ դաճարիներում,  
Դահիճն այրում է զեւմանի պափկեր。  
Աղմկում, վիճում, նոր գեգման ընդրում։  
Եւ Ենիսէի ամայի ափից

Կաչուբէց, Խսկրայի ընդանիքները,  
Խաբւած Պետրոսը շուր յեպ է կանչում,  
Արդասաւում նրանց հետ, փաղաքում նորից  
Եւ փառք ու պարտով առար վարձապրում:  
Մաղէսպալի ոսոխ—քաջարի հեծոր  
Ծերունի Պալէյն—ձգեց հեռաւոր  
Աքսորն և զարձաւ դէպ' Աւկրայնան,  
Դէպի բանակը թաղաւորական:  
Ապստամբութիւնն մնում է որբացած.  
Պարմարանի վրայ թևերը կախած  
Գլուխը վայր դրեց յանդուգն Չեչէլը, <sup>23)</sup>.  
Եւ զապարոժցի ալբամնը:  
Դու էլ—ուազմական փառքի սիրահար,  
Որ սազաւարտի հետ փոխեցիր թագը,  
Քո ժամն էլ մօտ է. վերջապէս դեռար  
Դեռ հեռասրանից Պալրաւալի թումբը:

**Թաղաւորական զօրքերը նոյնապէս**  
Փոթորկի նման նոյն տեղ շրապեցին.  
Եւ երկու գնդեր երես առ երես  
Սի հովտի միջին բանակ խփեցին:  
Այդպէս է յաճախ կռիւներում ջարդւած,  
Առաջուց արդէն արնով արբեցած  
Դու ախոյնանը վճռական ժամին  
Տեսնում ցանկացած հակառակորդին:  
Զարախինդ կարլոսն չը տեսաւ էլ արդ  
Նարւալի խղձուկ փախստականներ  
Ցան ու ցրիւ եղած,  
Այլ պապրաստ շարքեր, փառահեղ, հանդարս,  
Հնաղանդ ու աշխոյժ՝ արագալաց  
Եւ կազմ գնդերի,  
Անսասան պարնէշ նոյա սւինների:  
Բայց դարձեալ վճռեց—ուազմ լուսադիմին!  
Դորին քուն միաւ շւեղների բանակ.

Միայն երկու հոգի լուռ, կէս զիշերին  
Հանդարս շշնջում են մի վրանի տակ:

Ո՛չ, պեսնում եմ ես, օ հը, իմ Օրլիկ.

Աճապարեցինք այսպէս այնորեղի.

Յանդուգն և անողեաք հաշիւ բանեցինք,  
Գիտեմ, նորանից մեզ շահ չի լինի.

Իմ նողադակս երեխ կորաւ,

Եսոր նշանաւոր մի վրիսպակ գուի—

Այդ Կարլոսը սպասածս չեղաւ.

Նա մի մանուկ է աշխոյժ, անվեհեր.

Երկու կամ երեք յաջող յաղթութիւն

Կարող է անշուշոր հեշտութեամբ պանելու

Ընթրիքի ժամին հասնել թշնամուն <sup>24)</sup>),

Ումբին ծիծազով միայն պարսսիանել <sup>25)</sup>).

Ո՛չ սղակաս ճարպիկ

Քան ոռւս ներաձիդ

Անցնել զիշերով թշնամու բանակ—

Ինչպէս որ այժմ—կազակ պապալիլ,

Վէրք հարուցանել վէրքի փոխանակ <sup>26)</sup>).

Բայց նա չէ կարող այլ ևս զիմադրել

Ինքնակալ հսկաց հակառակորդին:

Նա ճակարտազրին ուզում է սպիսիկ

Իւր զօրքի նման հնազանդել թմրկին:

Նա կոյր է, յամառ, թեթև ու անմիտ,

Գոռող, անհամբեր և շար մեծամիտ:

Ի՞նչ է իւր յոյսը—Ասրւած գիտէ այն:

Նա հակառակորդ նորանոր ոյժերն

Հին յաջողութեամբ կշռում է միայն.

Գիտեմ, կը փշրի նա իւր եղջիւրներն:

Ամ ծթ ինձ, որ իմ այս ծեր գարիքում

Մի բախտախնդիր զինւոր գլորաւեց.

Վախկուր կոյսի պէս նորա քաջութիւնն:

Յաղթութիւնների անցաւոր բախտը:

Աչքս շլաքրեց:

## Օ Բ Լ Ի Կ

Սպասենք զեռ կուին. թագաւորի հետ  
նոր դաշն կազելու ժամը չէ անցած.  
Դեռ կարելի է չարիքը ուզգել.  
Զարդ կրելուց յեպոց Պետրոսն անկասկած  
Չի մերժի մեզ հետ հաշոռութիւն կատել:

## Մ Ա Զ Է Պ Ա

Ո՛չ, ուշ է արդէն. ոռւսաց թագաւորն  
Այլ ես չի կարող ինձ հետ հաշոռել.  
Վաղուց այրում է ինձ չարիքն անզօր,  
Վաղնաց է անդարձ բախոս վճռւել:  
Սզովի մօդն էր. մի գիշեր միասին  
Թագաւորի հետ զւարճանում էինք.  
Քաժակներ զինով փրփրում էին,  
Ճառերն էլ նրանց հետ պաքանում էին.  
Եւ ես համարձակ մի քան առացի...  
Զահիլ հիւրերը ողջ վրդովւեցին.  
Թագաւորն յուղւած բաժակը թափեց,  
Սպառնաց, և սպիտակ բեխերս ձգեց:  
Կակ ես լուեցի անզօր ցասմունքով.  
Քայց երդում ուրի, որ վրէժս հանեմ:  
Եւ ինչպէս մի մայր, որ անհուն ինամքով  
Արգանդում պահում է իւր նորածնին —  
Պահել եմ երդումն. հասել է ժամը...  
Ալ յիշէ նա ինձ ընդ միշտ յաւիրեան.  
Նորա պսակի թար լ պերեների  
Փհւշն եմ, պատիժ եմ ուղարկւած նորան:  
Ալ ուայ պարզեներ, կեանքի թանգ ժամեր,  
Միայն թէ դարձեալ առաջւայ նման  
Նա Մաղէպացի բեխերը ձգէր:  
Քայց զեռ յոյս ունինք. թէ ով կը փախէ՝  
Այդ — արշալոյսը միայն կը վճռի:

Լոեց և փակեց յոզնած աչքերը  
Առուսաց թագաւորի դաւաճանը:

Վառւում է ելքը նոր արշալոյսով,  
Թնդանօթները հովտի մէջ շարւած՝  
Արդէն դզրդում են բլուրներում:  
Վարդագոյն ծուխը, թանձր օղերով  
Վաղորդեան պայծառ շողերի զիմաց  
Տարութելով՝ երկինք է ենում:  
Զօրավնդերը ամուր սեղմ եցին.  
Ներածիդները՝ թվերի միջին.  
Թռչում են բոմբեր, գնդակներ շաչում,  
Սառն սւինները օդում ցոլացին:  
Եւ յաղթանակի սիրած զաւակներ—  
Կրակւած թմբերով մղւում են շվեդներ.  
Հեծելազօրքը թւում է խռնւած,  
Խոկ հետեւակը նորան հետեւում:  
Եւ իրա անշարժ ու խուլ ծանրութեամբ  
Նորա ընթացքն է ամրապնդում:  
Եւ օրհասական դաշտի կոփւն ահեղ  
Վառւում, թնդում է այսրեղ և այնպեղ:  
Բայց ահա արդէն պարերագմական  
Բախտը սկարզապէս  
Ծառալում է մեզ:  
Գերին են փառում կոյփերի նման  
Հըրազարկ եղած զօրագնդերը.  
Ռովէնն պաշարւած՝ քաշւում է, զնում,  
Խոկ նիստներախը անձնապուր լինում:  
Խաւարում է նրանց փառքի համբաւը.  
Զարդում ենք նրանց բոլոր գնդերը:  
Եւ պարերազմի Աստծոյ շնորհած  
Օրհնութիւնն է մեր շաւզին գրօշմւած:

Եւ ոգևորւած սրբազան կրակով  
 Պետրոսի ձայնը լսելի եղաւ.  
 Ծեղ հետեւ Ասպարած. ի գործ—և խմբով,  
 Երջապարաւած իր սիրելիներով,  
 Վրանից դուրս ելաւ:  
 Փայլում են աչքերն, դէմքն է սոսկալի.  
 Շարժւածքն է արագ. գեղեցիկ է նա.  
 Կարծես երկնային պատուհաս լինի.  
 Եկաւ... մի նժոյգ ահա մօդ բերին.  
 Խոնարհ կանգնած էր հաւագարիմ ձին.  
 Եւ օրհասական կրակի հոս զգալով  
 Դողում է, աչքը խէթ-խէթ է զցում,  
 Հպարփանով հզօր հեծւորով,  
 Դէպի ռազմական բոցերն է սլանում:  
 Մօդ է կէսօրը: Տօթը այրում է.  
 Հնձւորի նման կռիւը հանգչում է.  
 Տեղ, որեղ աչքի են ընկնում կազակներ.  
 Կարգաւորում են զօրագնդերը.  
 Լոել է նաև երաժշութիւնն.  
 Բլուրների վրայ թնդանօթները  
 Կորել են իրանց քաղցած դզրդիւն:  
 Եւ յանկարծ հովում թնդալով ահա  
 Որորաց հեռու մի ահեղ ոււռան—  
 Անհամբեր զօրքը ուսաւ Պետրոսին:  
 Եւ նա սլացաւ նոցա առաջով  
 Ինչպէս որ կոխւը—հզօր, խնդագին.  
 Նա ամբողջ դաշտը ուկում էր աչքով.  
 Նորա յեփեից խմբով գնում էին  
 Պետրոսին բնի այն թռչունները,  
 Որոնք նորանից անբաժան էին.  
 Կառավարութեան, ռազմի հոգսերում,  
 Եւ փոփոխական երկրային բախտում,  
 Նորա ընկերներ, զաւակներն էին:  
 Եւ Երեմետիւն ազնւական,

Երիւսը, Յոուէրը նոյնալէս և Առպանին  
Եւ ճակարտագրի փայփայած որդին—  
Տիրապետը կէս թագաւորութեան:

Եւ իւր ուազմասէր զօրքի կատկասզոյն  
Նարքերի առաջ կարլոսն էլ ահա,  
Վէրքից տանջւելով անշարժ և դժողովն  
Երևաց նոյնալէս, իր մահճի վրայ.  
Իրան յեպեւում իւր զօրականներ:  
Եւ նա մոքերին եղաւ անձնապուր.  
Վրդովւած հայեացքն արտայալում էր  
Մի նոր վրդովւմունք—օրար, անսովոր:  
Յանկալի կոխուը կարծես Կարլոսին  
Գցել էր տարրամ մոքերի միջին:  
Եւ յանկարծ ձեռքը թոյլ կերպով շարժեց  
Եւ ոռւսների վրայ զօրքը խաղացրեց:

Եւ հովուում նոքա թագաւորական  
Բանակների հետ ծխում կոխւ մորան.  
Եւ թնդայ կոխւ,  
Պալրաւայի կոխւ:  
Կրակում, շիկարասպ խխո կարկուի տակ  
Շաբքեր, նոր շաբքեր բնինում են կուրակ。  
Հեծելազօրքը մուժ ամպի նման

Սանձով, դաշոյնով  
Խուլ աղմկելով  
Խառն, անկանոն զարկւում են իրար.  
Եւ զիակների հին կոչուերի վրայ  
Նոր, թարմ կոյսիկ գոյացնում է նա.  
Պողպարէ գնդերն շուրջը, ամեն պեղ  
Թռչում են, շաշում, հարւածում ահեղ,  
Մահ են փարածում, արեան մէջ վշշում.  
Ռուսը շւեդներին ջարդում է, փշրում.  
Թմրկի թնդոցներ,  
Ճիչ, կրծպոցներ,

Թնդանօթների ահեղ զղբիւն,  
Հառած, խրխնջնց, ձիերի զոփիւն,  
Եւ մահ ու զժնիք է շուրջը շնչում...

Իրարանցման և յու զմունքի ժամին,  
Զօրականները բորբոքող կռւին  
Ոգեսութեամբ հանգիստ նայում են  
Եւ պատերազմի բախտն են դիտում.  
Յաղթ և պարտութիւն նախարարեանում են  
Եւ առանձնակի զըրոյց են անում:  
Բայց ով է Մասկւայի ցարի մօս կանգնած  
Ալեզարդ գլխով այն զինորակտնն,  
Երկու կազակի թերին յինւած,  
Նայում է փորձւած հերոսի նման,  
Եռացող կռւին:  
Նա ծեր է, այլ ևս չի հեծնի իւր ձին,  
Հալ ու մաշ եղաւ խաւար աքսորից,  
Է՛լ կազակները Պալէցի կանչին  
Չեն հաւաքւելու ամենայն կողմից:  
Բայց ինչու յանկարծ նորա աչքերը  
Փայլագակեցին. խաւարի նման  
Ինչու զայրոյթով խոժուեց զէմքը,  
Ի՞նչը կարող էր վրդովել նորան.  
Գուցէ ռազմական խիտ ծխի միջին  
Տեսաւ հին ոսոխ նա Մազէպային.  
Եւ անզօր ծերը ապեց իւր լուրիքն,  
Որ էլ պէտք չէին այդ իսկ բոսէին:

Բարեկամներով, քաջ սերդիւկներով  
Մի խումբ խոռվարար իւր կազակներով  
Ծրջապարւած էր Մազէպան. կռւին  
Նայում էր սուզած մոքերի միջին  
Յանկարծ մի պայթիւն... Ծերը նայում էր,  
Դեռ Աւյնարովսկու ձեռքին նորարձակ

Հրացանի եղէգնը ծխուրում էր.  
 Եւ փոքր հեռու մի ջահիլ կազակ  
 Գեղսի վրաց, արեան մէջ թաւալւում էր:  
 Իսկ իւր ձին փոշուր, ողջ փրփուր կորած,  
 Ազար զգաց իրան, թռաւ, սլացաւ,  
 Եւ հեռու, հեռու հրդեհով պարած  
 Տարածութեան մէջ խորասուզւեցաւ:  
 Բարկութեան բոցը վառւած աչքերում,  
 Դաշոյնը ձեռքին—կազազի կազակն  
 Դէպի Մազէպան էր ուզիղ դիմում:  
 Ծերը մօպեցաւ հարցու մով նորան,  
 Բայց խեղճ կազակը արդէն մեռնում էր,  
 Հանգած աչքերով ուռսաց թշնամուն  
 Դեռ սպառնում էր,

Եւ Մարիացի քաղցրաձայն անունն  
 Կազընկած լեզուն հազիւ թոթւում էր:  
 Բայց մօտ է ահա բովէն յաղթութեան.  
 Ուռա՛... ջարդեցինք. շւէդներն նահանջեն.  
 Օ՛ փառաւոր ժամ; օ վիհ գիսարան,  
 Մի հարւած դարձեալ, և սորին արդէն  
 Փախուսոր է դալիս. նորա յեցուից  
 Հեծելազօրքն է հարւածներ պեղում.  
 Սրերը բթանում են սպանութիւնից,  
 Չորս կողմը բոլոր խաւար է պարում:  
 Կարծես մորեխի սեսսե կոյսերից  
 Անթիւ դիերով դաշտն է սեանում:

Զւարճանում է Պեղորսն: Հպարտ և առոյգ  
 Եւ միառքով լի է նորա հայեացքը.  
 Արքայալայել շքեղ է խնջոյք,  
 Ուրախ գոչում է իւր բոլոր զօրքը.  
 Իսկ նա վըրսնում հիւրասիրում է  
 Ե՛ւ իւր, և օդար զօրապետներին.  
 Եւ աղնուական իւր գերիներին.

Նա փաղաքշում է,  
Եւ իրա նախկին ուսուցիչների  
Կենաց պարպում է:  
Բայց մոր է արդեօք առաջին հիւրը,  
Առաջին ահեղ մեր ուսուցիչը.  
Որի գաղղնահաս ոխը բազմամեայ,  
Սրմարից կարեց հերոսը օրւայ:  
Ո՞ւր է չարազործն, մոր է Մազէսկան,  
Ո՞ւր է երկիւզից փախել այն Յուղան.  
Եւ ինչու կայսրը հիւրերի մէջ չէ,  
Ինչու զաւաճանը զիսագուած չէ:

**Մերկ** անապատի լոռւթիան միջին  
Գևորգանն ու կայսրը սլանում են միասին.  
Փոխչում են... բախուը կապել է նոյա:  
Ներքին չարութիւնն, վաճագ մօրակայ,  
Նոր ոյժ են տալիս յաղթւած կայսրին:  
Ռուսների ձեռքից փախչում զլիսիկոր,  
Խւր ծանր վէրքը դրած մօռացման:  
Եւ հաւապարիմ զօրք և սպասուոր  
Շնչառապառ, հազիւ հեղեռում են նրան:

**Հեռնւ,** ու շաղիր շրջահայելով  
Դաշտավայրերի լայն կիսաշրջանն,  
Նոքա միասին սլանում են շփապով...  
Յանկարծ առաջներն մի խուսոր գեսան:  
Խ՞ոչ էր... Մազէսկան կարծես վախեցաւ,  
Ինչու նա շեղւեց շինութիւնն մօրով,  
Մորակեց իւր ձին և անյայրացաւ:  
Սրդեօք ծերուկին ամայի սրահը,  
Կամ առանձնացած դունը և այդին,  
Դէպ' զաշփը նայող բացւած այդ դուռը—  
Մի հին սլապմութիւն այժմ լիշեցրին:  
Ո՛, դու կործանիչ սուրբ անմեղութեան,

Ծանծթ է քեզ այս օժեւանն արդեօք,  
 Այս տունը—երբեմն ուրախ և անհոդ,  
 Այս տունը—որպես գինուց փաքացած  
 Բարեկամների շրջանում 'նստած՝  
 Ճաշի ժամանակ կարակում էիր:  
 Անշուք ապաստանն արդեօք չիշեցիր—  
 Ուր համե'սու, խաղաղ հրեշտակն էր բնակում:  
 Ազգին—որպիղից զիշերւայ մթնում  
 Դուրս բերիր նորան... Ո՛, ճանաչեցիր...

Ողջը ընկղմեց մութ սպահներում:  
 Տարածւած կապոց Գնեպրի եղերքին  
 Զգոյշ նիրհում է ժայռերի միջում  
 Պետրոսի և սուսաց թշնամին:  
 Հերոսի քոնը խնայում են ցնորքներն,  
 Նա Պալտաւացի կորուսով մոռցաւ,  
 Բայց Մազէպայի հանդիսովը շփոթ էր,  
 Նորա մռացլ հոգին հանգիստ չը գտաւ:  
 Յանկարծ զիշերւայ լրութեան միջին  
 Կանչում են նորան, գարթեց, փեսնում է,  
 Իւր գլխավիրե մարով սպառնալով  
 Մէկը հանդարտիկ լուռ խոնարհում է:  
 Նա սառսուաց ուժգին, ասես կացնի տակ.  
 Նորա առաջին դժողոյն և նիհար,  
 Ցնցորիք հագած անխօս, հերարձակ,  
 Փոս ընկած աչքեր պազզում են պայծառ,  
 Լուսնի շողերում կանգնած առերես.  
 Երազ չէ արդեօք. Մարիա, դու ես...

Ա՛խ, հանդարտ, հանդարտ բարեկամ... լսիր,  
 Հայրս և մայրս հէնց նոր նիրհեցին,  
 Սպասիր, մեզ այսուեղ կարող են լսել...

Մ Ա Զ Ե Պ Ա

Մարիա, խեղճ Մարիա... ուշքի եկ, խօսիր.  
Ասուած իմ, ասա, ինչ է պատահել:

Մ Ա Բ Ի Ա

Լսիր, ինչպիսի սպոռ խարդաւանանք,  
Կայ ծիծազաշարժ բան են պատմում նրանք.  
Երբեք մի գաղփնիք նա ինձ հաղորդեց,  
Որ իմ խեղճ հօրը տեսել է մեռած.  
Եւ ինձ լոելեացն կամաց ցոյց գուեց  
Ալեսոր մի գլուխ.—արարիչ Ասուած...  
Առա, մեր փախչենք չար լեզուներից.  
Մուածիր, այն գլուխը մարդկային չեր,  
Այլ բոլորովին գայլի զլուխ էր:  
Տես, ինչով էր նա ինձ ուզում խարել.  
Ամօթ չէ որ ինձ գանջում են այսպէս.  
Եւ ինչու համար, որ չը կարենամ  
Այսօր միասին քեզ հետ փախչել ես:—  
Կարելի՞ բան է. — խոր վշպով նորան  
Անգութ սիրելին ականջ էր դնում:  
Բայց խորասուզւած խառն մաքերում—  
Յամենայն դէպս, շարունակեց նա—  
Յիշում եմ դաշտը... ոտնն աղմկալից,  
Անթիւ դիակներ... ամբոխն էլ ահա,  
Մայրս այս տօնին տարել էր և ինձ.  
Իայց մեր էիր գու... ինչու առանց քեզ  
Գիշերով, մենակ թափառում եմ ես:  
Նար ուշ է արգէն... գնանք տուն շուպով...  
Ախ, տեսնում եմ ես, գալուսրկ ցնորքներով  
Իմ գլուխը լի է: Սխալմամբ էր. ես քեզ  
Աւրիշ կարծեցի. հեռու թող ինձ, ծեր.  
Դու ծաղրող, գաժան հայեացքներ ունիս.  
Դու անճոռնի ես... նա գեղեցիկ էր.  
Նորա աչքերում սէր էիր կարգում,

Հեշտասիրութիւն—նորա խօսքերում։  
Նորա բեխերը սպիտակ իբրև ձիւն,  
Իսկ քոնի վրայ սառել է արիւն  
Եւ նա վայրենի ծիծաղով ճշաց,  
Ապա մի ջահիլ այծեամից թեժե,  
Արագ վեր ցարկեց և վագեց յանկարծ։

Փաշւում էր մութը. ելքը կարմրում.  
Կազակի կրակը բոցավառում էր.  
Կազակները ցորեն են եփում.  
Իսկ դրաբանուները Դնէպրի եղերքին  
Զուր էին տալիս անթամբ ձիերին։  
Կարլոսը զարթեց. օհ, ժամանակ է.  
Մազէպա, զարթիր, տես, լուսանում է:  
Բայց ծեր գետմանը վազուց չէ քնած.  
Խորին թախիծը սիրոն է կրծովում։  
Ընձայն և անխօս թամբելով իւր ձին,  
Փախչող կայսրի հետ արագ սլանում է.  
Մնաս բարեւ տալիս հայրենի հողին,  
Դէմքը կարաղի փայլարակում է։

Անցել է մի դար.—բայց ի՞նչ է մնացել  
Այս հզօր, յայդնի, հպարտ մարդկանցից,  
Որոնք կրքերով միշտ լի են եղել—  
Ո՛չ ոք չէ մնացել նոցա սերնդից։  
Երանց հետ՝ անդարձ անցել են գնացել  
Անգութ բռնութեան, և թշլառութեան  
Եւ յաղթանակի արիւնու հետքեր։  
Եւ հիւսիսային զօրեղ պետութեան  
Պարերազմական, յուզւած վիճակում  
Դու, Պալպաւալի հերձ, դու միայն  
Կանդնեցիր քեզ մի վիթխարի արձան։  
Այն երկրում, որուեղ կարգով կան շարւած  
Անթիւ ջրաղացներ — բարձր, թե աւոր,

Որոնք մի խաղաղ պատճեց են կապած。  
 Բենդէրի ամայի լանջեր հեռաւոր,  
 Որդեղ ռազմական շիրիմների մօս  
 Թափառում է միշտ գումշների հօս.  
 Այնքեզ—աւերւած սրահի մնացորդներ,  
 Եւ ապա երեք, խոր ընկած հողում՝  
 Եւ մամուվ պարած հին ասպիճաններ—  
 Նվերների կայսրի մասին են պատմում:  
 Անմիտ հերոսը ահա այնքեզից  
 Երկար դիմում էր, կանգնած միայնակ,  
 Տաճկական զօրքի շուն աղմկալից,  
 Եւ իւր սուրբ գրեց նրանց բունչուկի տակ:  
 Տիսուր ճամբորդը ի զուր կ'որոնի  
 Այնքեզ շիրիմը ծերուկ գեպմանի.  
 Մոռացւել է վաղուց Մազեպան:  
 Միայն սրբազն հանդիսի ժամում,  
 Դիու մինչև այժմ գարին մի անգամ,  
 Նորան սպառնալի անէծք են կարդում:  
 Բայց պահպաննել է յեռ մի զերեզման  
 Աւր երկու թշւառ աճիւն են հանգչում:  
 Եկեղեցին նրանց կուել է օթեան  
 Հին արդարների զերեզմաններում:  
 Դեռ Դիկանկայում անհոգ ծաղկում են  
 Հին կաղնիների շաբքերը երկար,  
 Որոնք թոռներին անվերջ պարմում են  
 Երանց զլսագուած հայրերի համար:  
 Իսկ ի՞նչ է եղել յանցաւոր դուսորը—  
 Աւանդութիւնը ոչի՞նչ չէ ասում:  
 Նորա գանցանքներ, նորա վախճանը  
 Ծածկւած են մեզնից դարաւոր միջնում:  
 Երբեմն միայն զիւզում ամբոխին  
 Երբ կոյր երգիչը Ռւկրայնացի  
 Գեպմանի երգերն է հնչեցնում,

Նորա յանցաւոր դափեր մասին  
Հարևանցի է միայն ակնարկում:

Ժ.Ընկ 1897

Հեղինակի արած նկատողութիւնների շարունակութիւնը:

20. Կաչուբէլի գիւղը:

21. Արդէն մահւան զարտապարուած կաչուբէլին գետմանի զօրքի մէջ տանջանքի ենթարկեցին. թշւառի պատասխաններից երեսում է, որ նրան հարցնում էին իւր թագցրած դանձերի մասին:

22. Գետմաններից ռոճիկ սրացող զօրք:

23. Չեչէլը լուսահատ կերպով պաշտպանում էր Բագուրինին Սենչիկովի զօրքի դէմ:

24. Դրեզդէնում, Աւգուստ կալսբին:

25. «Ա՛խ, Յ. Մ. բնմբ,... Խնչ կապ ունի բոմբը իմ քեզ թելադրած նամակի հետ. գրիր. այդ աւելի ուշ է պատահելու»:

26. Ինքը կարլոսը, գիշերով մեր բանակը դիմելիս՝ վրայ հասաւ կրակի չուրջը նսորած կազակների. նա ձին քշեց ուզիղ ախ կողմը և նրանցից մէկին անձամբ հրացանազարկ արեց. կազակները երեք անգամ արձակեցին նրա վրայ և ծանր վիրաւորեցին ոտքը.

# ՍԿԵՄԱԻՐԼ

(ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ)

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն և գեղջ<sup>1)</sup>)

IV

Սկեսրի տրպունջները անվերջ էին; Խօսում էր աչն ամենի վրայ, ինչ որ հարսը նրա քէֆով կամ կամքով չէր կարարում; Մարդու հոգի էր սղոցում իր շարունակ զժզոհութեամբ ու գանգապաներով և պահանջում էր հարսի կողմից անպայման հնազանդութիւն:

Հարսի երևակայած երջանկութիւնը օգն էր ցնդել; Սկեսրի կոպիկ վարմունքը խոցովում էր նրա սիրով; Սաթենիկը պիտուր էր և ճնշւած; Յուսախաբ կեանքի առաջին խոչնդորի հանդէպ ընկծւած էր արդէն և վհափութիւնը մղմուզի պէս մաշում էր նրա զգայուն սիրով; Սաթենիկը յիշում էր իր հայրենական տունը, այնպեղ վայելած ազապութիւնը, իր վաղաթառամ տենչանքներն, և այդ ամենն աւելի էին սասպիկացնում նրա սրտի կոկիծները; Զահիլ հարսը իրան միայնակ էր զգում այդ տանը և որբացած; Ամուսինն էր առ այժմ նրա միսիթարութիւնը, բայց նա էլ պառաւի հետ խիստ չէր վարւում, աշխատելով մի կերպ ցարմարւել:

Սաթենիկի յաճախ գանգապները սպիտեցին ամուսնուն, վերջապէս, միջամրել և խնդրել մօրը, որ սա հարսին խօսեցնի:

1) Տե՛ս «Մուրա» № 1.

—Այ ազի, ասաց նա, ախր հարսը խեղճ է. էլ պանն ուրշի մարդ չկայ. ես եմ դու. ես գանը շատ չեմ նստում, նստած ժամանակս էլ հարսը մնում է անխօս. ախր պա խեղճ չի, պա նրա սիրուը չի ուզումքեզ մի քանի խօսք ասել: Ախր ջահիլ է, վհարւում է: Պա Ասուած լեզու է դւել մարդուն, որ չխօսաց:

—Գէորգ ջան, պարասիսանեց մայրը ծանր ու բարակ, —դու իմ որդին ես. ինչպէս էլ լինի, խելքդ իմ խելքից շատ չի կարող լինել: Ժամանակը կը գայ կը խօսեցնեմ: Հիմայ շուփ է. թող էսպէս մնայ, որ մեծի պարիս ճանաչի:

—Ազի, խնդրում եմ, թող խօսայ. իմ խաթրու արա էդ: Հասկացող, պարւաւոր և համեստ հարսը միշտ մեծի պապիւը կը պահի, նրան կը յարգի, իսկ լիրք հարսը թէկուզ անխօս էլ լինի՝ իրանից մեծին ամեն կերպ կարող է կծոցել: Դա չի կախւած խօսալուց կամ չխօսալուց: Օրինակներ շատ դեսած կը լինես:

—Զէ, էլի չխօսան է լուս Խոնչ ես վռազում. թող հլա մի կէս տարի անցնի: Քեզ հետ խօսում է, չի կշուանհնեմ:

—Լոիր, ազի, ասաց Գէորգը վճռական եղանակով, —հրէս երկու շաբթից յերոց ճանապարհ եմ ընկնելու օրարութիւն, որ հարսին չխօսացնես մինչ էդ օրը՝ ասելու եմ առանց քո հրամանի խօսայ:

—Կարող է որ, —ասաց Թամամը սասպիկ կը քով, — ծամերը կը քանդեմ, ծամերը:

Գէորգը յայրնեց կնոջը մօր պարասիսանը: Սաթենիկը մի թեթև անէծք ուզզեց պառաւի հասցեին, յերոյ խոնարհից գլուխը և կրկին խորասուզւեց գիտուր միքերի աշխարհը: Մարդը նրան յուսադրում էր ուրախ կենալ, իսկ նա վշտալի եղանակով և դառնութեամբ պարասիսանում էր.

—Ինչպէս ուրախ լինեմ. զու էարեզ ես որ մայրդ հետո էսպէս է վարում, պա քեզանից յերոյ ինչ է լինելու: Հիմայ ինչքան չլինի — քեզանից քաշում է. յերոյ, որ ես մենակ մնամ, գլխիս ով գիրէ ինչ քար ու կարկուր է մաղելու: Դու էլ դնում ես...

Եւ խեղճ հարսը նորից արդասւեց:

— Էղքան անխիղճ չի լինիլ, սիրելիս, պարասիսանը Գէորգը փաղաքշանքով, մի կերպ եօլա պար. պա ինչ անենք. մեր մայրն է.

կարելի՞ է դէն ձգել, կարելի՞ է դուրս անել: Պառաւ կնիկ է. շաբուշը մի դարձրու ասածների վրայ և մի կերպ եօլա տար:

—Եօլա տար, վրայ բերեց Սաթենիկը հեղնութեամբ, —քեզինչ. Թող իմ հոգին դուրս գայ, զու չես խօմ պանջւողը: Հեշու է միշտ էլքան կոռոց լսելը: Մի բան եմ անում, որ քէֆովը չի լինում կամ իր ասածով, թէկուզ դա անուեղի էլ լինի, գիտեսինչ օյին է դնում՝ զլիսիս. հայոցանքներ, անէծքներ է թափում ժէ իմ և թէ ծնողաց զլիսին: Խնչպէս ուրախ կենամ:

—Մի կերպ համբերիր, սիրելիս, հրէս գնում եմ խանութս հաւաքեմ բերեմ գիւղը. նրանից յերոյ միշտ քեզ մօս կը լինեմ և չեմ թողնիլ, որ մէրս քեզ նեղութիւն սպառնառի: Համ էլ դէ էն ժամանակ դու խօսում կը լինես, էլ խեղճ չես մնալ. ծուռի դէմ ուղղիղը կասես. նա էլ կնիկ է. քեզ կը սովորի և կամաց-կամաց լեզուն իրան կը քաշի:

Ամուսնու ուրած առագայ յոյսով փոքր ինչ թեթեացած՝ Սաթենիկը դուրս եկաւ տան կփուրը աղափ շունչ առնելու: Հարեւանի աղջիկ Սոնան, որ արդէն հարսնացու աղջիկ էր, կանգնած էր իրանց կորին և գուլորայ էր գործում: Սաթենիկը մօտեցաւ նրան. մի խոր հոգոց հանեց ու ասաց.

—Սոնա, որ քեզ ուզող լինի, մարդու չգնաս. էս կեանքը կեանք չի, այլ ցաւ ու կրակ: Ափսոս չէ աղափ կեանքը:

Սոնան ոչինչ զգուաւ պարասիանելու. նա միայն ամօթխածութեամբ աչքերը գերին խոնարհեց ու ժպաց.

—Որ մենակ դու լինես ու մարդդ, էլի հլա ոչինչ. բայց որ ակեսուր ունենաս, էն էլ իրասածի, անհաշփ սկեսուր, վայը քոճարին: Սթէ խելքդ կորի, մարդու չես գնալ. կը գնաս, կը փոշմանես:

—Ինչու. սկա էնքան աղջիկերք մարդու են դնում, ինչու չեն փոշմանում, —պարասիանեց Սոնան, դէմքի նոյն արտայաբութիւնը պահպանելով:

—Մէկ հարցրու նրանցից, շապերը քեզ միւնոյն բանը կ'ասեն:

Սաթենիկը այդ խօսքերի հետ միասին մի խոր հառաջանք արձակեց և սկսեց դիտել Սոնալի ձեռքի գուլպան:

Երեկոյեան դէմ էր: Պառաւ թամամը նկատեց նրան և կանչեց բուն:

—Ինչ ես կանգնել կտրին և խօսում. ջահիլ հարսն ես, պաքեզ վայել է: Փողոցով մարդիկ են անցնում; ախր տեսնում ենք Մարդդ էլ ասում՝ է շապ եմ խօսում: Ի՞նչ հողը տայ գլխին մէրը որ չխօսի:

Սաթենիկի դէմքի վրայ, որպէս պարասխան, տրպունջ արտայալուղ մի կնճիռ ցնցւեց և նա արագութեամբ հեռացաւ սկեսրից նրա բարկութիւնը նկարեց Թամամը:

—Աղջի, էդ մւմ վրայ ես նեղանում, — գոշեց սկեսուրը, — մւմ վրայ ես թողդ թափ տալիս. ես քո ճռւդն եմ: Էդ մւմ մօդ ես սովորել. այ քո խրապ ուռողի աչքերը քուանան: Էդ էր պակաս, հ՞ա... Տղաս էլ ասում է հարսին խօսցուր. դէ խօսցուր, հը:

Այս ամենը Թամամը ասում էր բարձրաձայն, որ որդու ուշագրութիւնը գրաւի:

—Այ ազի, դէ հերիք է էլի, ասաց որդին զայրացած, — ախր ամենազարկ բանի վրայ կը խօսմն: Հարսը ի՞նչ մեղք արեց, որ կտրին կանգնեց. է, թող փողոցով անցնող տղամարդիկ տեսնեն, խօմ հարսիդ չեն ուտելու: Ախր ինձ էլ ես համբերութիւնից հանում:

—Դու էլ էղակս ես ասո՞ւմ: ապրես կնկանդ բաց թող, ինչ ուզում է թող անի: Էլ ես ոչինչ Ռւմ համար եմ էսքան հաշում, հը, բարձրացրեց իր ձայնը Թամամը՝ արսաւելով, — մւմ համար: Մէրը կը բարկանայ, կը մըթմըթայ, կը հայոցի, հարսին կը թակի, բայց էդ ամենը իր որդու օգափ համար է անում, որդուն սիրելով է անում: Իսկ զու զրա փոխարէն սրպիս դիմչում ես և ինձ լացացնում: Ասլրես...

—Ազի, ախր խի՞ էդպէս ես խօսում, — բացականչեց որդին համբերութիւնից դուրս եկած, — պա ես քեզ մի անզամ մի ցուրտ խօսք ասել եմ: Դու ես իզուր սեղից քո սիրու նեղացնում: ես ի՞նչ մեղաւը եմ:

—Լաւ, լաւ, գիտեմ: զու գնա կնկանդ ծափով պար եկ. մօրդ ողափիւը քեզ համար ոչինչ...

—Ազի, Ասրւած վկայ, հերիք է. էնպէս բաներ ես խօսում: որ...

—Ես սուս կը կենամ, միայն թէ կնկանդ քէֆը խարաք չգառայ: Դու նրա կամքով նարիր վեր կաց: Մօր ջանը թող դուրս դայ. նրան նվ է լսողը:

Եւ լոեցին։ Լուռ ու մունջ, առանց միմեանց երեսի նայելու, խոռվածի պէս՝ ընթրեցին և սուս ու փուս ննջելու հեռացան։ Սաթենիկը ամբողջ գիշերը անքուն անցկացրեց։ Դէմ առ դէմ կանգնած անհաշր սկեսուրը քուն չէր տալիս նրա աշքերին և հոգեմաշմրածմունքները խանգարում էին նրա հոգու հանգստութիւնը։

## V

Գէորգի ու զեռորւելու ժամանակը մօպենում էր։ Դրա հետ միասին Սաթենիկի կրծքի վրայ օրէցօր ծանրանում էր այն քարը, որ վաղուց ճնշում էր նրան։ Վերջին օրերը նա լաճախ, մանաւ անդերեկոները, ամուսնու հետ միայնակ մնալուց լաց էր լինում։

—Գնում ես, ինձ մենակ թողնում, մրմնջում էր Սաթենիկը, — ինձ էլ հետո տար։ Պա ի՞նչ ալիրի լինի իմ ձարը մօրդ ձեռքին...

Ամուսինը խնդրում էր նրան թողնել այլպիսի տիտուր և յուսահաւ մոքերը, միխթարում, յուսադրում էր նրան և խոսկանում շուրջ վերագաւանալ։ Սակայն Սաթենիկի դէմքին վաղուց էր դրոշմած պիսրութեան ինիքը այն օրից, երբ նրա երեակայած ամուսնական երջանիկ կեանքը թունաւորւիլ էր շնորհիւ մի անձնաւորութեան, որը ամբողջովին հակառակ էր Սաթենիկի սիրած ուսուցիչ։ Դրաւանեանի քարոզած գաղափարներին և ձգուտմներին Ամուսնական կեանքը նրան մի քայլ էլ առաջ պիտի մղէր այն ճանապարհով, որ բաց էր արել նրա առաջ հոգեոր դպրոցի աշակերպը։ Բայց ահա մի հսկայ խոչնդու կանգ էր առել նրա առաջ և մաշում էր ջահիլ հարսի հոգեկան ու բարոյական ոյժերը։ Արդէօք նա կարողանալի էր զիմանալ այդ ցաւին։

Որդու օրարութիւն գնալուց երեք օր առաջ սկեսուրը խօսցրեց հարսին։ Գէորգը սրիութեց նրան այդ անելու։

—Մարդդ գնում է, ասաց Թամամը, մենակ ես մնում։ Հիմա խօսա։ Տանը մնում ենք ես ու դու։ Հնազանդ կաց, խոնարհ ու խելօք, որ ես էլ ուրախ լինեմ, դու էլ։ որ կարողանանք սիրով ապրել և էդպէսով մեր թշնամոց աչքերը հանել։ Առ էս մանէթը և խօսա։

Սաթենիկը քիչ տականուելուց յերոյ լնդունեց արծաթէ դրամը և առաջին անգամ խօսաց։

—Շնորհակալ եմ, Ասրւած պահի տղիգ։

Այս դէպքը թեթևութիւն պարճառեց նրա ճնշւած կրծքին, թէս միւս կողմից մատաղ հարսի սիրտը շորունակ լաց էր լինում ամուսնու հեռանալու պարճառով։ Իսկ մի անախորժ ընդհարում կարծէք դիրմամբ եկաւ աւերելու Սաթենիկի ուրախութեան նշոյլ-ները։

Նորահարսը գանը նստած՝ ամուսնու համար սպիտակեղէն էր կարում։ Նա ինքն էր ձեւել ամեն ինչ և ինքն էլ կարում էր։ Սկեսուրը հսկում էր նրա շշստափանքը։ Մի շապիկը արդէն պարտասոր էր։ Թամամը վերցրեց այդ և աչքի անցկացրեց։ Շապիկի կրծքին երկու կոճակ էր արւած, իսկ թեւերի դաստակները լայն էին կարւած և առանց կոճակի։

—Ես ի՞նչ ես արել, աղջի, —նկատեց Թամամը զայրովթով, — ի՞նչ հարկա որ է կրծքին երկու կոճակ. զուր է, մէկը հերիք է։ Պատաստակներին ի՞նչու չես կոճակ արել. էսպէս լայն բան կը լինի. Քանդիր, դաստակները նեղացուր և կոճակներ կարիր։

—Կրծքին երկու կոճակ է հարկաւոր, որ բաց չգայ, պատասխանեց Սաթենիկը հոմեստութեամբ, —իսկ դաստակներին կոճակ անելը աւելորդ է, որովհետեւ լայն-լայն եմ անում։ Էսպէս գեղեցիկ է. նեղ դաստակները անշնորհք են։

—Անշնորհքի բան չկայ էստեղ. ի՞նչպէս ասում եմ, էնպէս էլ արա։

—Այ ազի, ախր ես տղիդ շապիկներին նայել եմ. քաղաքում կարւած է. ես էլ ի՞ն տեսակ եմ կարում։

—Որ քաղաքի եղաւ՝ մեծ բան է... էլ մի երկարացնիլ. ի՞նչ որ ասում եմ՝ ի՞ն արա։

—Խաչը վկայ, ազի, զարմանալի կնիկ ես, շապիկը բերեմ գիւտ Սաթենիկը արագութեամբ վեր թռաւ տեղից, մօտեցաւ անկիւնում դրւած սնդուկին, միջից մի շապիկ հանեց, որ քաղաքի կար էր, և ցոյց տւեց սկեսրին։

—Հա է, հա, գոչեց սկեսուրը բարկութիւնից ելած, —ի՞նչ ես ցոյց տալիս... Ախր առանց կոճակի դաստակներ կը լինին. ով է տեսել։ Իմ ասածը արա։

—Լաւ, տղիդ կը հարցնեմ. ի՞նչպէս նա ուզի, էնպէս էլ կ'անեմ։  
—Ի՞նչ, տղիս կը հարցնես, գոչեց սկեսուրը զայրացած, —լիի,

ես ինչ եմ, որ տղիս ես հարցնում: Եդ էլ իմ պատիւն է, հմա... Սխր ասում են հարսին խօսցրու: Խօսացնում ես, վերջը պատիւդ դա է լինում:

— Ամօթ է, ամօթ,— ասաց Սաթենիկը վիրաւորւած եղանակով,— մեծ կնիկ ես, դադարկ բանի համար սրբնեղութիւն մի զցիր էս լունը: Շապիկը տղադ է հագնելու. նրա քէֆով չկարեմ, քն քէֆով եմ կարելու: Սրանով խօմ քո պատրին չեմ դիպշում:

— Սրա լեզւին, սրա լեզւին... Տես ինչպէս համարձակ-համարձակ խօսում է... Օձ կծի քեզ, քեզ խրափ վառղի էլ աչքերը քոռանան: Քեզ ասում եմ էսպէս արա, դու էլ արա: Աղջի, հենց պիուի հակառակւթա:

Սաթենիկը ոչինչ չպատասխանեց: Պառաւի վերջին խօսքերը խիստ խոցեցին նրա սիրավը: Վիշտն ու թախիծը պաշարեցին նրան: Սրբասուքը չէր չորանում նրա աչքերի աղբիւրներում, իսկ մագոները մեքենայաբար առաջ էին գանում չարաբասրիկ շապկի կարը:

Հեղուեալ օրը նա ճանապարհ դրեց իր Գէորգին օպարութիւն: Վշտի, թախծութեան և վհապութեան մարմնացումն էր նա այդ օրը: Նրա աչքերը կարմրել էին, այնքան լաց էր եղել նա Գէորգից բաժանւելու ժամին և դրա նախընթաց գիշերը:

## VI

Գէորգը արդէն Բաքու էր գգնուում: Նրա հեռանալուց անցել էր մօռ երեք ամիս: Գրում էր, թէ աշնանը խանութը ժողովելու և գիւղն է տեղափոխւելու: ընդմիշտ այդտեղ մնալու նպաստիով: Գիւղում ոչ մի խանութ չկայ, զրում էր նա, — ամենայարմար ժամանակն է այժմ: կարգին առուպուր կ'անեմ, համ էլ ձեզ համար դժար չի լինիլ:

Սաթենիկը անհամրեր այդ օրին էր սպասում: Ոկեսուրի անվերջ կրկնութիւնները, թէ հարսը պիտի սկեսուրին հնազանդ լինի, նրա ամեն մի խօսքը լի, և քանի որ վոքրաւոր է, միշտ մեծի կամքով պիտի գնայ, ոչ մի գործ իր գլխի չկապարի՝ մաշում էին Սաթենիկի սիրավը: Նրա վհապութիւնը սաստիանում էր միայնութեան և անօգնութեան պարճառով, իսկ յղիութիւնը նրան բոլորովին թու լասիրու և զիւրազգաց էր դարձրել:

— Ա'ին, Ասպաւած, բացականչում էր Սաթենիկը յուսահարս ըստ  
պէներին, -- Ե՞րբ կը գայ Գէորգը, որ մի քիչ սիրոս բացւի. սա օր  
չի, որ ևս եմ քաշում։

Աւրախ և գոհ րոպէները հազւագիւղ էին Սաթենիկի համար։  
Եթէ լինում էլ էին, իրառածի սկեսուրը մի որ և է դադարկ պատ-  
ճառով աւերում էր խեղճ հարսի ուրախութիւնը։ Սաթենիկը ամեն  
օր գիւսնում էր իր երազած օրերի և գառն իրականութեան մէջ  
զփնւող անդունդը։ Կեանքը կամաց-կամաց կորցնում էր նրա աշ-  
քում՝ իր նշանակութիւնն ու քաղցրութիւնը։ Նա առ այժմ իր  
Գէորգի յոյսովն էր ապրում և այն արարածի սիրոյն, որի անորոշ  
էութիւնը խանդաղարանք էր պատճառում նրա հոգուն։ Զգալով իր  
կապարեալ անզօրութիւնը տիրապետող չարիքի դէմ և ներքուսու-  
անկարող լինելով հաշվել զրա հեգ՝ նա ամբողջապէս ընկզմէլ էր  
իր մէջ և լացում էր իր գրութեան վրայ։ Խսկ հոգեկան մշտապե-  
ցաւը զգալի կերպով աղդում էր նրա առողջութեան վրայ։ Սաթե-  
նիկը օրի վրայ մաշւում և գունափուում էր Սայրը անհանդիսու-  
էր աղջկայ զրութեամբ, իսկ սկեսուրը նրան նկապում էր.

— Ոչինչ չկայ. յղի է, զրանից է։

Հարսի ծնունդ նստելու ժամանակը մօդինում էր։ Սկեսուր Թա-  
մամի միրքը այդ ժամանակ մի հարցով էր զրազւած։ Ճնունդը  
աղջիկ է լինելու թէ աղայու։ Եւ նա ամեն օր աղօթում էր։ Այ-  
Մարիամ Ասպաւածին, գու ամեն ինչ իմ սրբով անես, մի պղաց  
պարգևես իմ որդուն.... Առաջին ծնունդը օր աղայ լինի, զաւակը  
հօր ջանին շուրով կը հասնի։ Բայց եթէ աղջկով սկսւեց, նրանից  
յետոց միշտ աղջիկ կը լինի։ Ասպաւած, քեզ զուրբան, գու լսիր իմ  
աղաշանքը։ Պառաւը զրա համար բոլոր սուրբերին մոմեր էր խոս-  
պանում։ Բացի զրան նա հարսին էլ նախազգուշացնում էր ասելով։

— Աղջի, օր բերածդ աղջիկ լինի, էլ ինձանից չես պրձնիլ.  
գուրս կ'անեմ փողոցը երեխիդ հետ միասին, լսում ես։

Սկեսուրը այդ ասում էր հանաքի ձեռով և մեղմ ժպիտը երե-  
սին, այն ինչ զրա թելագրողը նրա սանձարձակ կամքն էր, որ  
հարսի վրայ նրա ոյժից վեր պատասխանափուութիւն էր զնում...։

Տարմէրը սկեսուրն էր։ Ծննդին ներկայ էին և հարսի մայրն  
ու քոյրը։ Երկունքի ահեղ և սարսափելի ցաւերի ձեռքին դանչ-

ևում էր Սաթենիկը։ Նա շարունակ լաց էր լինում և յուսահափ ու սրբաշարժ ճիչեր արձակում, ծկլրալով

— Վայ ինձ, մեռայ...

Սարսափելի զրութիւն, որ ծննդանին տանում է մինչ մահան գուռը և նորից եպ բերում։ Մահն ու կեանքը մարս են մղում միմեանց դէմ, իսկ նոյն անեղ հարւածներին ենթարկւողն է մի թուլ, գուրգուրանքի և կարեկցութեան արժանի էակ։

Սաթենիկի մայրը բանած աղջկայ կոներից՝ յօյս և սիրափ էր պալիս նրանու Մացրը տիմուր էր. աղջկայ տանջանքները կտիծեցնում էին նրա սիրափը։ Սաթենիկի քոցրը կուչ էր եկել տան մի անկիւնում և թաշկինակը աչքերին բանած արրաւում էր։

Սակայն այդ ամենը ոչինչ էր պառաւ Թամամի համար։ Նա մինչև անդամ բարկանում էր ծննդկանի վրայ ասկիլով։

— Աղջի, հերիք է, քիչ զարաշութիւն<sup>1)</sup> արա. կէսդ չգնաց. ինչ է ողարահել քեզ, չմեռար խօմ.. Հաւարա մենք իսկի երեխայ չենք բերել։ Համբերիր էլիս։ Քո մէրը քեզ ինչպէս է բերել։ Հերիք է. էնքան կը գրգռաս, որ երեխայի գլուխը մի փորձանք կը բերես։

Վերջապէս երկար տանջանքներից յերոց, որ վեևց տասը ժամ, ծննդկանը աղափւեց, նւիրելով իր ամուսնուն մի փափլիկ աղջիկ։

Լուեց մանկան յուսահափ և աղեկուր ճիչը, որ արձակում էր նա ընդհափ-ընդհափ, երեխ զարհուրելով նոր աշխարհի օպարուի պայմաններից։

Թամամը փաթաթելով նրան խանձարուրի մէջ՝ յուզւած և կուրւած սրբով մըմբթում էր.

— Որ աղջիկ էիր լինելու, ինչու ծնւեցիր։ Տես է, տես իսկի ձայնը կորում է... Տէրսէրը գայ քեզ տանի։

Փաթաթեց մանկան, ծննդկանի կողքով պառկեցրեց և, դառնալով հարսի մօրը, արհամարանքով տսաց։

— Դէ, էս էլ ձեր գոված աղջիկը. տեսմք խօմ։

Խնամին, որը նոյնակս շատ էր ցանկանում, որ ծնունդը տղայ լինի, աշխարելով ծածկել իր վիշտն ու վիրաւորանքը, ծիծաղելով պապասխանեց։

<sup>1)</sup> Բոշարութիւն։

— Լաւ, խնամի Թամամ, մնաս չունի. Ասպւած ողորմած է. Էն միւսը տղայ կը լինի: Ի՞նչու ես յոյսդ կարում: Ախր որ էղակս ես խօսում, ծննդկանի սիրան էլ ես կոտրում: առա խեղն չի:

— Լաւ եմ անում: ինչու է աղջիկ բերում, որ ես էսպէս խօսամ: Թող տղայ բերէր, հարսիս պաշէի զնէի ճակարիս:

Ծննդկանը ուժասպառ մեկնած էր անկողնում և փակել էր աչքերը: Լուս էին ամենքը: Միայն երեսն լսում էր մանկան ճրոցը, որն երեխ գոհ չէր իր վիճակից:

Թամամը մրմրթալով՝ տարմէրի գործերով էր կացել: Ծննդկանի մայրը նսպել էր հիւանդի գլխարտակին և թաշկինակով քշում էր աներես ճանճերին նրա երեսից:

— Փառքդ շափ, Ասպւած, մրմնջում էր մայրը, — աղջիկս ազագւեց ողջ առողջ, սիրու միամբւեց. մնացածը եօլա կը գնայ:

## VII

Ծննդկանի քառասունքը նոր էր լրացել: Սաթենիկը արդէն կազդուրւած լինելով՝ կարողանում էր զբաղւել տնացին գործերով:

Մի օր արեւը մայր մդնելու վրայ էր, որ նա նսպած կար էր անում: Սկեսուրը նկարեց նրան, թէ օջախ վառելու ժամանակն է: Հարսը ասաց թէ շուտով ձեռքի կարը կը վերջացնի և այնուհետ վեր կը կենաց կը վասի: Մի բոսէ ևս համբերեց սկեսուրը և ապա կրկնեց.

— Աղջի, ախր քեզ հետ եմ: վեր կաց օջախը վառիր, կերակուր գիր վրան, ուսն առաջը աւելիր:

— Այ, դէ վեր կը կենամ էլի. ձեռքիս գործը քիչ է մնացել. վերջացնեմ, որ էզուց ի զուր տեղից սրա վրայ ժամանակ չկորցնեմ: Ի՞նչ կաց որ. չմթնեց խօմ: հլա արեւը մայր չի միրել:

— Օհօհօհօ... Պապանձւի լեզուդ, պապանձւի... Ի՞նչորէս կարելի է. քո զիթը<sup>1)</sup> պիտի առաջ տանես: Թաթոսենց տանը ինչ ասեմ, որ քեզ նմանին լոյս աշխարհ է հանել... իմ ասածը թողած՝ իր էշն է ուզում առաջ քշել:

— Հայնոցիր, հայնոցիր, վրայ բերեց Սաթենիկը յուզւած և արհամարանքով:

<sup>1)</sup> Կամակորութիւն:

—Պա չհայհոյեմ ինչ անեմ:

Թամամը հարսի ձեռքից խլեց կարը և բարիացած գոշեց.

—Դէ վեր կաց էս սհաթին:

Բարձրացած աղմուկից մանուկը արթնացաւ օրօրոցում և լաց եղոււ: Աաթենիկը ուշադրութիւն չդարձնելով սկեսրի հրամանի վրայ՝ մօտեցաւ օրօրոցին, բարձրացրեց ծածկոցը և սկսեց ծիծ գալ երեխային: Նրա այդ վարմունքը աւելի ևս կտրաղացրեց սկեսրին: Այս անգամ նա սկսեց արդէն գոռալ.

—Անզգամի ծնունդ, պարմառը երեխան ես բերել, որ քո էշը քշես:

—Այ կնիկ, կամս յ խօսա, ասաց Սաթենիկը զայրոյ՛՛ով, ախր ամօթ է. հարեանները լսեն ի՞նչ կ'ասեն:

—Թող լսեն, թող իմանան, որ քեզ նման մի լիրք հարս ունեմ, որ չի ուզում ամեն բան իր ժամանակին անել. իր ժամակին օջախ կը վառեն, ջրի կը գնան, հաց կը թրջեն և սկեսուրի խօսքին չեն հակառակւիլ:

—Լաւ է, լաւ, ընդհափեց Սաթենիկը, —թող երեխիս ծիծ դամ, յերոյ քո ասածը կ'անեմ:

—Երեխիդ որ յերոյ ծիծ դաս չի լինիլ. կէսը կը գնայ, թէ կը մեռնի: Զի մեռնիլ, մի՛ վախենայ. աղջիկ է, երեսը պինդ կը լինի:

—Տէր Ասրւած, գոշեց Սաթենիկը համբերութիւնը հապած. ցաւ է էլի, ցաւ:

—Ծհ՛ը, էդ էլ իմ պսորիւն է համա. ծաղկես, ծաղկես... Վեր ընկնի քո հօր փունը, որ քեզ նմանին չըերէր իմ ջանովը դցէր:

Սաթենիկը պահ մի լուռ սկեսրի երեխին նայեց և ապա ասաց.

—Որ բերածս ողաց լինէր, խօմ էղպէս չէիր խօսալ հեփս:

—Հա, պա չգիտես:

—Լաւ, ես ի՞նչ մեղաւոր եմ, որ աղջիկ է ծնւել, արդասանեց հարսը աղեկուր ձայնով: Նա արդասաւեց և քիչ յերոյ լի արելութեամբ շարունակեց.

—Սուր ես խօսում: եթէ պղայ էլ լինէր, դու էլի էսպէս էիր վարւելու հեփս, որովհեպեւ դու ուզում ես, որ ամեն ինչ քո կամ քով, քո քէֆով և ասածով լինի. խոռվարար կնիկ ես. քեզ հեփ հվ կարող է կառավարւել: Ես եմ, որ քարշ եմ դալիս էս կեանքը:

Ասաց, ծածկեց օրօրօցի վարագոյրը և զնաց օջախը վառելու։ Երեխան արդէն քնած էր։ Թամամը ունիքերը կիպած՝ շարունակում էր իր խրապները, գանգարները և անէծքը։

— Իհարկէ, դու չես մեղաւոր, ասում էր նա ինքն իրան, — մեղաւորը ես եմ, որ թողեցի քեզ նման ցաւ ու ցեցը բերեն իմ ջանը գցեն...

### VIII

Աշնան սկզբներին օփարութիւնից վերագարձաւ Գէորգը։ Նա խանութից իր բաժին ապրանքը բերեց։ Մալրն ու բարեկամները շատ ուրախացան նրա այզպիսի վերագարձի համար։ Սաթենիկի ուրախութիւնը կրկնապատիկ էր։ Նա այլ ես մենակ չէր իրասածի և կամակոր սկեսուրին զիմաղբելու համար։

Ամուսնուն զւարճացնելու նպագանիով Սաթենիկը կամեցաւ իր հարեանունու երեխային զիրկն առնել՝ մարդուն զիմաւորելուց նրան ցոյց գալու թէ սա է քո զաւակը, իսկ յեպոյ մի կուշտ ծիծաղել, բայց խսդասիրաւ սկեսուրը արգելք եղաւ գրան, ասելով։

— Էղ էր պակաս. շոր մի երեսդ պարզ է մարդու տառջ...

Ասէք մի կուժ սառը ջուր ածեցին խեղճ հարսի զլիսին։ Նա թողեց այդ միուքը և իր զգացմունքները զսդած դիմաւորեց ամուսնուն։ Թամամը տուաջ անցաւ, գրկեց որդուն և երեք անգամ համբուրեց նշան ճակապից։ Յեպոյ անվասահ և երկիւզած քայլերով մօպ գնաց Սաթենիկը և բարեկց ամուսնուն Գէորգը ամուր սեղմեց նրա ձեռքը, բայց չհամարձակւեց մօր մօր նրան համբուրել։

Քրէնտարները բեռները վեր բերեցին գրագներից և ջորիները տարան գեղաւորցնելու։ Բարեկամների և ազգականների այցելութիւնները վերջացան երկու օրւայ ընթացքում, որից յեպոյ Գէորգը իր խանութի գործով կացաւ։ Դիւզսմիջում մի յարմար տուն կար, վարձեց՝ տարեկան չնչին քրէնով՝ և բերած ապրանքը տեղափոխեց այնտեղ։ Խանութի իրեղէնները բաղկացած էին զըլխաւորապէս չժեղէնից, ամանեղէններից և այլ մթերքներից։ Ամենքը նախանձում էին և ասում։

— Գէորգը էսպեղ լաւ աշխարանք է վերցնելու, էս սազ գիւղերը կը գան նրանից առուցուր կ'անեն։ Կոչաղ շարժւեց, ափփերիմ Գէորգ։

—Գէորգ, սա երբ պիտի խանութդ շնորհաւորենք, ասում էին նրա հասակակիղ մի քանի երիտասարդներ,—մեզ պիտի հիւրասիրեա:

—Աչքիս վրան. երբ որ ուզէք:

Ասելն ու անելը մէկ եղաւ երկու օրից յեփոյ կիւրակի էր: Ֆի խումբ երիտասարդներ Գէորգի տանը ուրախութիւն էին անում: Թողասաւորը Սաթենիկն էր, իսկ խոհարարուհին սկեսուրը: Այսպիսի խնջոյքներում, ուր տանորիկնոց վրայ մեծ պարփականութիւն է լինկում: սկեսուրը շերեփը իր ձեռքից չի թողնում: Խոհանոցը նա պիտի կառավարէ:

Տղամարդիկ ուտում էին և կենացներ վայելում: Սաթենիկը ուրի վրայ սպասաւորում էր նրանց: Զնայած սկեսորի նկապողութիւններին, նա երբեմն կանգնում էր հիւրերի մօր և նրանց քէմին նայում: Թամամը խիստ միջոցներ չէր կարող առնել զրա դէմ, որովհերկ հիւրեր կացին. դան ներքին կեանքը ուրիշների առաջ պիտի քօղարկւած մնար:

Սրբ Սաթենիկը վերջին անգամ խորոված բերաւ և շամփուրը ուղղակի թամագացին մարուցեց, վերջինս ուրախութեամբ ընդունեց նրա ձեռքից անուշանուր և համեզ խորփիկը, դաք-դաք խորովածը վեր շարեց պնակի մէջ, յեփոյ իւղոու մասները լսարելուց ցնուոյ՝ լիքը բաժակը ձեռքն առաւ և տասց.

—Կամոզանեա, խնդրեմ լսեցէք, էս թաս զինին խմում եմ Սաթենիկ բաշու կենացը: Սաթենիկ, Ասդւած քեզ էլ, որկուդ էլ, մարդուդ էլ պինդ ձեռքով պահի: Մարդ ու կնիկ միշտ սիրով լինէք և մի բարձի ծերանաք: Ասոււած, ինչ որ սրբներումդ բարի բան կայ, կապարի: Տղերք, շխմողը նամարդ է:

Ամենքը մեծաւ հաճութեամբ խմեցին երիտասարդ տանորիկնոց կենացը: Այնուհետ թամագան լցրեց նորից բաժակը, մեկնեց Սաթենիկին և խնդրեց, որ սա շնորհակալութիւն յացրնի: Սաթենիկը ընդունեց բաժակը և մի բողէ մնաց շշկւած: Զգիրէր ինչպէս յացրնէ իր շնորհակալութիւնը. երիտասարդների մէջ գործում էր Գէորգի քաւորը, որի հետ Սաթենիկը անխօս էր: Նա մօրեցաւ ամուսնուն, կամենալով սրա միջնորդութեամբ յացրնել իր շնորհակաւութիւնը, բայց թամագան կանդնեցը նրան և ասաց.

— Քո լեզով պիտի ասես, Սաթենիկ, որ ամենքս լսենք: Եթումնից ես անխօս:

— Քաւոր Յովսէփի հետ չի խօսում, պարասխանեց Գէորգը կնոջ փոխարէն:

— Դարարկ բան է, գոչեց թամադան, որի զլուխը արդէն քաքացել էր գինուց, — ինչքան անխօս է մնացել, հերիք է: Քաւորի հետ անխօս մնալը մըն է: Դարարկ բան է:

— Քաւոր Յովսէփն է մեղաւոր, որ մինչև հիմայ չի խօսացրել: ասաց Գէորգը:

— Այ քաւոր, ես ինչ անեմ, պարասխանեց Յովսէփը ամաչկութութեամբ, քանի անդամ եմ՝ ուզել խօսցնեմ, չի եղել, մեծ սահամերը հակառակել է, չի թողել:

— Դարարկ բան է, կրկնում էր թամադան, աղջի, խօսա:

— Սահամեր, դէ խօսա էլի. ուսնում ես ինձ խարառակում են:

**Ամենքը բարձր ձոյնով ծիծաղեցին:**

Սաթենիկը մրտանջութեան մէջ էր ընկել: Նա դադանւում էր առանց սկսուրի հրամանի այդ քայլը անելու: Բայց պառաւին յայրնելը նշանակում էր մի արգելք ապեղծել: Առանց իրաւունքի խօսալ նշանակում էր առիթ դալ սկսորին նոր փոթորիկ բարձրացնել և սրբնեղութիւնների պարճառ դառնալ: Ո՞րը ընդրել: Սաթենիկը մօդեցաւ ամուսնուն, կռացաւ նրա ականջին և խորհուրդ հարցրեց.

— Հարկաւոր չէ ազուն ասելը, պարասխանեց Գէորգը բարձրաձայն, — էդ բանում մեղք չկաց: Քաւորը ասում է, էնքան մարդ էլ խնդրում է, էլ ինչ ես սուս կացել: Եթէ ազին դրա համար խօսալու լինի, ես նրա պարասխանը կը դամ: Շուտ արա, մարդիկը սպասում են:

Սաթենիկը ժողովեց իր բոլոր ոյժերը, բաժակը բարձրացրեց և անհամարձակ ձայնով արդասանեց.

— Շնորհակալ եմ, որ արժան համարեցիք իմ կենացը խմելու: Սաղ լինէք ու բախ:

Խմեց դինին և շասպով գնաց խոհանոց:

— Աղջի, ինչ եղար դու, էդքան ուշացար, դոչեց թամամբ

վրդովւած,—ի՞նչ ես ծնուադ կախ գցում, էն պղերանց մօս կանգնում։ Դու էլ մի ամաշես։

—Ես ի՞նչ անեմ. ի՞րանք պահեցին, պարասխանեց Սաթենիկը ժպալով։

—Ի՞նչու պահեցին, հարցրեց Սկեսուրը հետաքրքրութեամբ։

—Կենացս խմեցին, յեպոյ թէ պիտի քո բերանով շնորհակալութիւն առնես։ Ես էլ դէ քաւորի հետ չեմ խօսում. նա խօսցրեց, ես էլ շնորհակալութիւն յայտնեցի։ Ասացի թողէք գնամ ազուն յայտնեմ, աղադ՝ թէ ես ազուն պարասխանը կը գամ։

Մինչ Սաթենիկը պարմում էր իր կարարած քայլի մասին, պառաւը արդէն իր կարաղութեան գագաթնակէպին էր հասել։ Նրա շրթունքներն ու ձեռները դողում էին։ Ուզում էր խոհանոցի փայտերից մէկը վերցնել և հարսի գլխին խփել, բայց իրան զսկեց։ Արամների արանքով, ձայնը խեղգած և լի կրքով նա գոչեց։

—Գեղինը մրնես դու, որ մեզ խայրառակում ես. էդ ի՞նչ ես արել քո գլխի... Աղջի, էլ օյին էր մնացել... Խայրառակւես դու, որ մեզ խայրառակում ես... Քեզ մեծացնողի աչքերը քուանան, հը՛ը՛։

—Ո՞ինչ խայրառակչութիւն չկայ, պարասխանեց հարսլ յուգած, —ի՞նչ ես էլի անէծքներդ սկսում։ Ենքան մարդ որ քիթ կալելս աւելորդ էր համարում, էլ դու ինչու ես խօսում։

—Լեզուդ օձ կծի, հը՛ը՛, արդասանեց Թամամը լի կրքով և բարկութեամբ։

Լուց, այլ ես ոչինչ չխօսաց։ Զապեց իրան, որովհետեւ ընդհարումը կարող էր հիւրերի ականջին հասնել։

—Քեզ հետ յեպոյ կը խօսամ; աւելացրեց նա։

Խնջոյքը վերջացաւ, հիւրերը վերկացան զնացին, իսկ Թամամը դեռ քանդում էր հարսի միսը։ Տղան մէջ մրաւ, բարկացաւ մօր վրայ և ասաց։

—Դէ հերիք է էլի, ի՞նչ ես գլուխներս գանում։ Ամեն մի բանի համար, որ քո քէֆին, քո կամքին հակառակ է, պիտի սրբնեղութիւն գցես էս գունը։ Ի՞նչ մեղք ունի հարսը, որ նրան էդակս լաց ես զցել։ Որ ճարումդ ճար լինի, հաւագա էս խեղճին կենդանի-կենդանի կը խեղդես... Ի՞նչ է եկել քեզ... Մենք ինդրեցինք,

քաւորը ուղեց, հարսն էլ խօսեց։ Կամաց-կամաց պիտի վերանայ էզ ցիմար սովորութիւնը, խօմ էսպէս չի մնալու։ Ուղում ես որ միշտ ամեն ինչ հին կարգով գնայ... Զի կարելի... Անհաշու կնիկ ես։ Պա չես խղճում սրան։

Նա ցոյց ուեց Սաթենիկի վրայ, որը պատուհանում՝ նստած՝ թաշկինակը աչքերին էր տարել և լացում՝ էր։

—Ապրես, ապրես, պատասխանեց մայրը դառնութեամբ և վիրաւ որանքով, էդ էր մնացել, որ մօրդ ասես... Էնքան դինի ես խմել, որ խելքով կորցրել ես. պա էպաէս չես խօսիլ, պա թաթերդ կնկանդ վրան չես քաշիլ։ Քեզ համար ոչինչ, որ կնիկդ էնքան մարդու մօր քաւորի հետ իր գլխի խօսում է և ինձ խայտառակում։ Ապրես, ապրես, կնիկդ մեր տան նսմուսը կորցնում է, քեզ համար ոչինչ. հլա մօրդ էլ լանդիմանում ես. ամօթ քեզ համար։

Եւ արդասեց։

## IX

Սաթենիկը միշտ տիսուր էր, տիսուր՝ ինչպէս իր ազատութիւնը նոր կորցրած թունակի նա շատ էր մարդում իր անմիսիթար վիճակի մասին և հոգեկան գանջանքները հալ ու մաշ էին անումնրան։ Նա շարունակ գունար էր և օրը տօրէ նիհարանում էր։ Ամուսինը անհանգապահում էր կնոջ այդ փոփոխութեամբ, իսկ սկիսուրը նկատում էր։

—Մի փոք երեխայ ես բերել, որ էդ օրն ես լնկել, պա յետոյ քո հալը ինչ կը լինի։

Վերջին ընդհարումից յեպոյ Սաթենիկը լաճախ գանգարւում էր Գէորգին, որ սա սաստէ մօրը իր հետ կարգին վարւելու։

Գէորգը այդ մասին նորից խօսակցութիւն ունեցաւ մօր հետ և խնդրեց նրան, որ հարսի գործերի մէջ շատ չխառնւի։ Բացադրեց թէ հարսը երեխայ չէ, իր պարտականութիւնները հասկանում է, ընդունակ է դոցա կարարելու և ուրեմն սկեսրի պահանջը, թէ հարսը ամեն ինչ նրա քէֆով պիտ անի, անկարելի է և նոյն իսկ վետասակար։ Շեշտել էր այն կետի վրայ, թէ նոր ժամանակները կեանքի վերաբերեալ նոր սովորութիւններ և հայեացքներ են մըսց-

րել մարդկանց մէջ, որոնց դէմ կռւելը անխելքութիւն է։ Զպիտի յեւ մնալ ժամանակից, այլ պիտի նրա հետ առաջ ընթանալ...

Այդ խօսակցութիւնից յերոյ Թամամը մի առ ժամանակ այլ ևս չէր խօսում։ Բայց նա լռել էր ոչ թէ համոզւած լինելով որդու ասածների մէջ, այլ որ նրա խօսքերից նեղացել, խռովել էր։ Նա վճռել էր այլ ևս ոչ մի բանի մէջ չխառնւել։

— Թող քանդւի ամեն ինչ, ասում էր նա ինքն իրան, — շատ հարկաւոր է։ դէ որ չեն հասկանում, որ պարիւս չեն ճանաչում, թող ամեն ինչ քանդւի։

Որդու և հարսի համար էլ հէնց այդ էր հարկաւոր։ բայց ափսոս, որ երկարապէս չէր սկսուի լոռութիւնը։ երկու շաբթից յերոյ նա դարձեալ իր իրաւունքների մէջ մրաւ և նորից ցոյց պւեց իր իշխանութեան զօրութիւնը։

Գարնան գեղեցիկ օրերը հասել էին։ Գիւղի այգեստանները և արբորացքը ծփում կին նորաբաց կանաչի և ծաղկած ծառերի բազմերանդ ծաղիկների մէջ։ Եղանակը բաք էր, երկինքը պարզ, ջրերը վարարած։ Ծոչունները ծլլում է Ամենու ըեք կենդանութիւն էր շնչում։ Գիւղացիք օրւայ պարապ ժամերը անց էին կացնում այգիներում, վայելելով բնութեան գեղեցկութեան պարճառած բաւականութիւնները։ Կիւրակի օրերը երիւասարդ կանացք և պղամարդիկ այգի էին գնում։ Թէյ խմելու դալար կանաչուաների վրայ և ծաղկած ծառերից բուրոզ անուշնուպութեան մէջ։

Սցովէս մի խումբ հարսներ իւրաքանչիւր կիրակի այգի էին գնում։ Բացի թէյուտումից նոքա ունէին մի այլ զբաղմունք ևս Մէլիք Մելքումենց Աւագի հարսը, որ այդ խմբի մէջն էր, բոլորովին այլ բնաւորութիւն էր ուել թէյուտումին։ Տիկին նւարդը, ինչպէս կոչում էին նրան զիւղում, մօրիկ գպնւող Շ. գիւղաքաղաքիցն էր։ Աւագը իր որդուն Շ-ի դպրոցումն էր ուսում որւել և այդ իսկ պարճառով գիւղաքաղաքից հարս բերել որդու համար։ Իր գիւղից նա լացեղ չէր արել աղջիկ ուզելու Տիկին նւարդը աւարուել էր իր հայրենի քաղաքի օրիորդաց երկասեան դպրոցը, մի քանի պարուց յերոյ մարդու էր դնացել և այժմ ո՞նաչին աշխափանքներից զար պարապում էր ինքնակրթութեամբ՝ իր մրաւոր զարդացման ասրիճանը բարձրացնելու։ Նրա ամուսինը, որ

գիւղի յայսնի արհեստաւորն էր, նոյնպէս հետաքրքրւում էր դրականութեամբ, թէև նրա միտաւոր կերակուրը գլխաւորապէս լրագիրն էր: Ամեն ինչ նա լրազրի մէջն էր գտնում և լրազրով էր սնւում: Կնոջ համար նա անդամ էր գրւել Հրաժարակշական ընկերութեամբ: Ացդպիսով Նւարդը միջոց ունէր յագեցնելու իր ընթերցանութեան ծարաւը: Բայց նա միայն իր համար չէր հոգում: Նա մուածում էր և իւր ընկերուհի հարսների մասին, որոնք գրել կարդալ չգիտէին: Նւարդը ացդպիսիներին ժողովում էր իր շուրջը, այդի էր տանում, կարգում էր նրանց համար գրքեր և կարգացածից խրապներ դուրս բերում: Ամենքը գոհ էին նրանից, ամենքը սիրում էին նւարդին:

Սաթենիկը իմացաւ այդ ժողովների մասին և մի անգամ ցանկութիւն յայտնեց մասնակցելու դրանց: Նւարդը պատասխանեց թէ ուրախութեամբ ընդունում է նրա ինդիրը և աւելացրեց, թէ որքան շատ լինի մասնակցողների թիւը, այնքան լաւ:

Մի կիւրակի, երբ հարսները որոշեալ ժամին պիտի գնային ալգի, Սաթենիկը մօտեցաւ սկեսուրին և յայտնեց իր ցանկութիւնը:

Թամամը նրան կուպիր ու կորակի պատասխանեց.

—Ես էղալիսի ծռորիպարի բաներ չեմ սիրում: Կինը ի՞նչ, զիրք կարդալը ի՞նչ: Հարկաւոր չի: մարդ դրանով չի խելօքանալ: Մեծիդ հնազանդ կաց—դա ամենից լաւ կը լինի: Քիչ ես համարձակ, որ հլա գնաս Նւարդի հետ էլ նարես վեր կենաս, վերջն էլ ելնես զլուխս: Նա ինչ հարսն է, որ իր պատրոնի հետ պսակից պուն գալուն պէս խօսացել է: Զահիլ ողերանց հետ փողոցում պատահելուց հանգնում զրուցում է: Մի զոնազ <sup>1)</sup> գայ գունները, բեսար իսկոն գլուխը բաց մէջ եկաւ, բարե տսեց և զոնազի կողքին նստեց: Ինքն էլ ոչինչ չի անում: միայն կոկում է և դէս ու դէն գնում: Նրանից ի՞նչ պիտի սովորես:

Պառաւի վերջին խօսքերը Սաթենիկը զրադարպութիւններ անւանեց, բերելով ապացոյցներ: Սոքա ցոյց էին տալիս Նւարդի՝ որպէս միակեսուհութիւնը: Միայն այդ գնդպեսութիւնը:

<sup>1)</sup> Հիւր:

Հակառակ էր պառաւ Թամամի հասկացողութիւններին և պահանջներին:

Այսպէս թէ այնպէս, բայց սկեսուրը հակառակում էր և չնաշած հարսի կրնակի խնդրանքին, նա Սաթենիկին թուլ չփուց ժողովի գնալու: Սաթենիկը այդ դէպքի մասին երեկոյեան յացոնեց ամուսնուն:

— Քանի-քանի հարսներ գնում են այգի, ասաց նա, — Նւարդը նրանց համար զիրք է կարդում, լսում են, նոր նոր բաներ են սովորում, իսկ ես փանը մենակ նստած պիտի ամեն բանից զուրկ մնամ: Ուրիշները կարգալ գրելը չգիտեն, գնում՝ են. իսկ ես զիգեմ: ամենից առաջ էղպիսի գործի յերեկից ես պիտի գնամ: պամօթ չի փանը նստմը: Զգնացի, որ մէրդ սրբնեղութիւն չգցի ես պունը, համ էլ քո խորհուրդն էլ կը հարցնէի:

— Գնա՞մ, անպարհառ գնա՞մ, լաւ բան է, պատասխանեց Գէորգը վճռական եղանակով, — միւս անգամ ուշ մի գարձուր մօրս խօսքերին. գիտեմ: որ նա հակառակելու է մինչև վերջը: Դու գնա՞մ, ես նրա պատասխանը կը դամ:

Հերեւեալ կիրակի հարսները Նւարդենց այգին էին ժողովւել: Սաթենիկին էլ իմաց էին արել: Այդ օրը Թամամը ճաշից առաջ մի փեղ հիւր էր գնացել: Այնտեղից նա երկու հիւանդի պիտի այցելէր, այնպէս որ երեկոյեան դէմ հազիւ կը վերադառնար:

Սկեսուրին առանց նախօրօք յացոնելու, Սաթենիկը երեխացին խոփիրն առաւ և գնաց Նւարդենց այգին:

Արեւ մայր միրնելու մօտ Թամամը դուն վերադարձաւ և փանը ոչ ոքի չգտաւ: Տղան խանութումը կը լինէր, իսկ համրսը: Դէս նայեց, դէն նայեց, հարեւաններից փեղեկացաւ, բայց ոչ մի կերպ չիմացաւ. թէ հարսը ուր է գնացել: Զարութեան որդերը շարժւեցին պառաւի ուղեղի մէջ և նա սկսեց իր անէծքները:

Արեւ նոր էր մայր մկնել, որ Սաթենիկը եկաւ: Պառաւը նրան փեսնելուն պէս յարձակւեց վրան և գոռաց.

— Այ քո փեղը դապարկ մնայ, էս ուր ես կորել. եկել եմ դուն, ոչ ոք չկայ: Փեղ ովկ է իրաւունք ուել գնից դուրս դալու: Պա չես իմանում, որ փանը էնքան պիտի նադիս, որ սկեսուրդ գայ: Թըրքեղ էիր գնացել, ասա մի փեսնեմ:

—Նւարդենց այգին, պատասխանեց Սաթենիկը յուղւած, զգալով, որ փոթորիկը անխուսափելի է:

—Այ դու մեծ զալաթ էիր արել քո հօր, քո մօր և մեծ պապիդ հետո, լսեցի՞ր... Անզգամ, ես քեզ էն անգամ ասացի չգնաս էնպեզ. էլի քո ուղածն ես անում, համա: Իմ խօսքերը բանի տեղ չես գնում:

Կոացաւ, ոսքից քօշը հանեց և խփեց Սաթենիկին: Քօշը զիպաւ հարսի ուսին և սաստիկ ցաւ պարճառեց: Ճշաց խեղճը, լաց եղաւ և մրաւ սենեակ: Երեխան սարսափից սկսեց ձայնակցել մօրը:

—Այ Ասոււած, մըմնջում էր հարսը, —կամ ինձ տար կամ էս պառաւին, որ միմեանցից ազատւենք: Էս օր չի, որ ես եմ քաշում:

Տուն եկաւ Գէորգը և տեսաւ կնոջը սենեակի անկիւնում կծկւած: Դեռ հեկեկում էր: Իմացաւ եղելութիւնը և զարձաւ մօրը լի արելութեամբ.

—Ազի, ամօթ քեզ համար, ամօթ. ա, դու ի՞նչ սիրու ունես, քո սիրու ինչտէս է տարել, որ ևս անմեղ գառան վրայ ձեռք ես բարձրացրել... Անսիրու կնիկ ես: Ներիք է, ախր ինձ համբերութիւնից հանում ես... Խայրառակելու ես մեզ: Մի օր էս տանը ուրախ օր չրեսաց, ամեն օր կոմիւ, կոիւ: Պարճառն էլ ամեն անգամ դու ես: Այդի է գնացել, շար լաւ է արել: Ես եմ ասել, որ գնայ: Ե՛ս—իմ կինը, խօսքդ ի՞նչ է: Զես թողնելու էս հարսին մի ազատ շունչ քաշի: Դէ հերիք ես, ամու Ասոււած վկայ, խանութս կը հաւաքեմ, դուն փեղս կը ծախեմ, կնկանս վեր կ'առնեմ կը գնամ էսդեղից և քեզանից կ'ազագուենք: Հերիք է. ախր ամեն բանի էլ չափ ու սահման կը լինի:

—Ապրես, ապրես որդի, պատասխանեց Թամամը այլայլւած ծայնով,—մօրդ լաւ պատիւ ես տալիս: Հա, մերն է վապը, մերն է մեղաւորը, իսկ կնիկդ արդար է... Աչքերս քուանան, որ թողեցիդրան ինձ համար հարս քերեն... Էն ժամանակ պիսի մեռնէի պրծնէի, որ էս ամենը չփեսնէի:

Եւ արսաւալի աչքերով հեռացաւ միւս սենեակը:

Ամենքը որխուր էին: Տան վրայ մի սև վարագոյր էր կախւած: Մի ինչ որ ծանրութիւն ճնշում էր ամենքի կուրծքը: Առանց

ընթրելու նրանք շաբ կանուխ անկողին մոտան և քնեցին։ Երկար ժամանակ Սաթենիկի աչքերին քուն չէր գալիս։

## X

Աշնան ցրո՞րը հասել էին։ Երկինքը շարունակ ամպամած էր, անձրել անպակաս և օդը խոնաւ։ Սարերի կափարներին շարունակ պրոյրներ էր գործում՝ թանձր մառախուղը։ Արտերն ու այգիները կորցրել էին իրանց կենդանութիւնն ու շքեղութիւնը։ Գիւղի ցեսուր փողոցներով անցնելլը դժւարացել էր։ Տարւայ այն ժամանակ գիւղացիներից իւրաքանչիւրը ասես մի.մի ծանրաչափ լինէր, եղանակի հետ միասին նրանք էլ մուայլ էին և գիսուր։ Հոգսն ու թախիծը չէին վերանում նոցա դէմքերից։ Ամեն ոք ունիքերը կիրած, ձեռները գրպանում, մաքամոլոր կանգնած էր լինում գիւղամիջի մի ծայրին և լուռ ու մունջ միածում։ Զկամ էին միմեանց հետ խօսում։ Մանր և անախորժ ժամանակ էր. շուպով հարկ պիտի ժողուէին, իսկ շաբերի գրպանում կոպէկ չկար։ Ոչ օրարականներն էին փող ողարկել և ոչ բամբակն էր ծախւել։

—Էլի պարոք պիտի արած, ճար չկայ, ասում էր ամեն մէկը ինքն իրան։

Ոսկանենց Պէորզը այդ կողմից հոգս չունէր, նա կարող էր ոչ միայն իւր, այլ և մի քանի աղքաղների հարկը վճարել։ Առձեռն փող կար նրա մօր։ Սակայն նա ևս հոգսից զուրկ չէր։ Այդ հոգսը նրա մայր Թամամն էր, որ շարունակում էր անհաշփ վարւել Սաթենիկի հետ և վշտամահ անել խեղճ հարսին։ Մարդ ու կնի՛ մի ուրախ օր չէին գեսնում իրասածի և անհաշփ սկեսրի շնորհիւ։

Եւ այդ կինը հալումաշ եղած կրկին յղի հարսի ականջին ամեն օր կրկնում էր։

—Տես, հրէս ասում եմ. եթէ բերածդ էլի աղջիկ լինի, էս տանը չմնաս, էլ իմ երեսը դուրս չդաս։ Էլի մեր սիրոը պիտի սեացնեմ։ Պա դղաս խեղճ չի։ Առաջ դղաց ժառանգը պիտի ծնւի։

—Մարդս քեզ նման չի, որ պիսրի, պատասխանեց Սաթենիկը, —պղայ լինի, չլինի-էլի դու մեր սիրոը սե ևս պահելու.քո բնաւորութիւնը լաւ եմ ճանաչում։

—Օհօհօհօ, էլի լեզուն բլբլացրեց. որ իմ խօսքիս խօսք չա-

սես, որ ինձ պարասխան չփառ, չի կարելի... Ինչպէս կարելի է. խանի աղջիկ ես ախր...

Լոռում էր Սաթենիկը, չկամենալով ընդունեկան անախորժ փոթորկի առիթ քալ: Նա զզւել էր դրանից և խղճում էր ամուսնուն:

—Ախ, Ասպուած, ի՞նչ կը լինէր, որ էս անգամ դղայ լինի, մքածում էր Սաթենիկը,—պեսնես երաբ սէր ու խաղաղութիւն կը լինի էս դունք:

Ահա նորից Սաթենիկի ցաւը բռնել է և երիտասարդ կինը իր բոլոր ոյժերը լարած՝ ջանք է անում դիմանալ երկունքի ահեղ ցաւերին: Դարձեալ սկեսուրն էր քափոմէրը, որը աչքերը հարսի երեսին յառած, կարծես շարունակ մոփում կրկնում լինէր. «Է՞», որ աղջիկ բերես, կը թափեմ, պնից դուրս կ'անեմ քեզ»: Ներկայ էր և հարսի մայրը:

Գէորգը առանձնացել էր և անկողին մգել: Երիտասարդի քունը չէր գալիս, կնոջ վրանգաւոր դրութիւնը շարունակ անհանգստացնում էր նրան և նա անհամբերութեամբ սպասում էր մի ուրախ լուրի:

Սաթենիկը ձեռները ծալած անց ու դարձ էր անում իր համար պարասպած սենեակում: Դեռ ցաւը այնքան սաստիկ չէր և խեղճ կինը, իրան մոռացած, ուրիշների մտախն էր հոգում:

—Ախ, Ասպուած, ծնունդս թող դղա լինի. ծնողներս խեղճ են, սկեսուրիս երեսին չեն կարողանում նայեն... Թող դղա լինի, որ էս աներես պառաւը մի քիչ ուրախանաց, երեսիս ծիծաղելով խօսայ, իմ սիրով բացւի և մեր քան խոռովութիւնները վերանան: Խեղճ մարդուս ունքերը իսկի չի բարձրանում, ի՞նչ ասեմ էսպէս պառաւի...

Նա մկանծում էր ծնողաց պատւի և ընդունիքի բախտաւորութեան մասին, մի բախտաւորութիւն, որը հիմնւած էր աշխարհ եկող զաւակի աղջիկ կամ դղա լինելու վրայ:

Վերջապէս Սաթենիկը ազագուեց, բայց, ո՛հ դժբախտութիւն, այս անգամ ևս ծնունդը աղջիկ էր:

—Վայ, գոշեց Թամամը, երկու ձեռքով գրող անելով ծնընդկանի գլխին,—ի՞նչ կը լինէր, որ քո մէրը լոյս աշխարհ չգցէր քեզ:

Այ քեզ զուրբան, Ասպուած, ախր իմ մեղքը որն է, որ ինձ հսկէս պարիժ ես գուլիս

Սկսուորի իր խօսքերը Սաթենիկի ականջին հասան և հիւանդի ցաւը կրկնապարկւեց: Խոլորովին ուժասպառ և շնչասպառ՝ նա փուեց իր գուղում: Աղջկայ մայրը այս անգամ ոչինչ չպարասիսնեց անխղճմանք սկիսրին: Նա մօրեցաւ աղջկանը և նագեց նրա անկողնի մօս:

Թամամը քիչ յետոյ գնաց որդուն աւետելու:

—Հը՛, ազի, ինչպէս վերջացաւ, առանց փորձանքի ազարութեց, հարցրեց Գէորգը սրբարովի անհամբերութեամբ:

—Հա՛, բախսպաւոր, ազափւեց. աղջիկ է բերել, հիմիկւանից բաժինք հազրիր Խանութդ էլ ծախես, չես կարողանալու աղջկերանցդ մարդու դախըլ ծախըլ հանես:

—Այ մէր, հերիք ես, ասաց Գէորգը բարկացած և ապելութեամբ, —քիչ կռոայ էդ հարսի գլխին: Էդ իմ զարդն է, թէ ինչպէս եմ իմ աղջկերանց մարդու դախըլ: Սխր քեզ ով է հարցնում: Թէ կնիկս դղայ է բերել կամ աղջիկ... էսպէս էլ բնաւորութիւն կը լինի... Թու...

Եւ վերմակը ուսերին քաշելով, երեսը շրջեց մօրից:

—Որդի, ինչու ես նեղանում, ախր ես քեզ ծիծ եմ գուել մեծադրել. ինչի ես թքում վրաս: Սրտիդ գիպչնում է, որ նս էսպէս եմ իտուն մ... Անխելքը ես եմ, որ քեզ համար մրածում եմ: Քո հոգսն եմ քաշում: Հողը իմ գլխին էլ, իմ բախսի գլխին էլ...

Եւ թաշկինակը արտասւալի աչքերին կանելով, հեռացաւ որդուց:

Հերմետալ առաւօփեան մանկանը լողացնելուց Թամամը հանագով քողարկւած անհձքներ թափեց նորածնի գլխին և երբ Սաթենիկի անդրանիկ աղջիկը՝ դարի և կիսական Եղիսաբէթը՝ մօփեցել էր դարին ու զարմանքով մասը դէպի նորեկ քրոջն էր անում, պառաւը ծիծաղելով պարասիսնեց:

—Հա՛, էս է. սա էլ քո կրորն է. քեզ էլ, սրան էլ մի պատանի մէջ զնեմ դամ դէրդէրին դանի թաղի, հման...

—Այս, պարասիսնեց երեխան միամրաբար:

Մի քանի օր դրանից անցած, առաւօփեան Թամամը կրկին

լողացնում էր մանկանը, որը այդ օրը անընդհափ լաց էր լինում։  
Ոչ մօր ծիծր, ոչ լողացնելը, ոչ օրօրը — ոչինչ չէր օգնում։ Երեխ  
ցաւող տեղ ունէր։

— Ի՞նչ անեմ ես, գանգապուռում էր սկեսուրը համբերութիւնը  
հապած, — գլխիս եմ դնելու պահեմ... Նար մի աչքիս լոյսն ես...  
Սնւս, սնւս...

Յեփոյ դսունալով հարսին՝ զայրոյթով ասաց.

— Աղջի, վերցուր ծիծ տուր նորից, որ ձայնը կտրի:

— Դէ հիմիկս դւեցի էլի, պարասխանեց հարսը ուղնքոնքալի՛  
ձայնով, — սուս չի կենում։

— Են ցեղից է, որ սուս անի, լնկել է մօրը էլի։ ասում՝ եմ  
վերցուր ծիծ տուր, իսկի ինձ լսում է։

— Դէ հը՛, էս էլ ծիծը, ասաց Սաթենիկը բարկացած և երե-  
խային արագութեամբ գիրին առնելով, — սիր իսկի կաթն էլ չի  
ուզում։ զօռով կարող եմ ծիծ տամլ։

— Աղջի, էղ մում վրայ ես փոշիդ թափ տալիս, դոչեց սկե-  
սուրը, — ես ինչ մեղաւոր եմ։ ծնողը դու, երեխան քոնը. ով է  
մեղաւոր, որ էլուէս մի պարիժ է ծնւել։ Հարս բերի, որ թոռներ  
գեսնեմ, սիրսո բացւի, հանգիսփ ապրեմ։ էս տանը, չելաւ։ Զհան-  
նամը, ծնունդը տղայ լիներ։ էլի ոչինչ...»

Եւ լուեց, սպասելով պարասխանի։ Սաթենիկը, որ այդ օրը  
երեխայի լացի և իր ցաւերի պարմառով մելամաղձուր և դիւրա-  
գլրգիւր էր զարձել, ներքուսոր սաստիկ յուզւած էր պառաւի խօս-  
քերից։

— Հը՛, ինչի սուս կացար, ասաց նա արհամարանքով և ապե-  
լութեամբ, — մին էլ ասա, որ կշրանաս։

— Պա ինչի չեմ ասիլ, դոչեց սկեսուրը, — միս հարսի աչքն էլ  
կը հանեմ... Կարծում ես թէ սուս եմ մնալու։ Գու ինձ ու էս  
տան համար ցաւ ու կրակ դարձար։ Ասուած ինձ իմ ուզած հարսը  
չհասցրեց։ Քեզ նման հարսին դանը պահելու չի, դանը Երկու  
աղջկանդ էլ ձեռք դալու է և հօրդ տունը եփ ուզարկելու։

Սյդ խօսքերը, որոնք չափ ու սահմանից անց էին, խոր խո-  
ցեցին Սաթենիկի քնքոյց սիրուր։ Նրա ողն ու ձեռը զող էր լնկել,  
զոյնը բոլորովին թռել էր և զէմքի վրայ երեսն էին դալիս մէկ-

մէկ ցնցումներ ու կրկին չքանում: Հսրւածը ստարիկ էր և խեղճը շիարողացաւ զիմանալ դրան: Կամեցաւ խօսալ, բայց ձայնը խեղդւեց կոկորդում: Եւ նրա աղեկուուր լոցի միջից լուեց հերկեալը.

— Սպանիթ, սպանիթ մեռնեմ քո ձեռքից պրծնեմ էլի... Կը գնամ, կը կորչեմ էս պնից, միայն թէ զու ուրախ լինես, միայն թէ քո երեսը չփեսնեմ: Անորէր չեմ, որ միշտ գերի մնամ քո ձեռքին:

Նա վեր թռաւ պեղից, թեթև շալլ ուսերին ձգեց և շփապով գուրս ելաւ ոնից:

— Աղջի, ուր ես գնում, գոչում էր նրա յերեխից սկիսուրը, — աղջի, երկու օրւայ ծննդկանը սպա գուրս կը գայ: Աղջի, կաց, մեզ մի խացրառակիր:

Բայց Սաթենիկը չէր լսում: Նա արդէն փողոցումն էր և շփապով գնում էր հերանց: Փաքրիկ նզիսարէթը լաց էր լինում մօր յերեխից, իսկ նորածինը շարունակում էր իր մզկիրոցը:

Թամամը խղճաց երեխաներին: Նա մօրեցաւ, գիրին առաւ նզիսարէթին, համբուրեց նրան և ասաց:

— Լաց մի լինիլ, նանան քեզ զուրբան, մայրիկը հրէս կը գայ... Վաս մայրիկ... Լաց մի լինիլ. գնանք քեզ չամիչ որամ:

Դրան ացգոյէս լուեցրեց, իսկ նորածին խանձարուրը գիրին առնելով սկսեց անց ու դարձ անել սենեակում: Եւ զրկումը օրօրել նրան: Քիչ յեսոյ նորածինն էլ իր ձայնը կորեց, կարծես նա մի փոթորկի էր սպասում:

— Էսպէս էլ խացրառակչութիւն կը լինի, կրկնում էր յաճախ Թամամը, ձեռքը գլխին խիելով:

Տուն եկաւ Գէորգը:

— Ուր է Սաթենիկը, հարցրեց նա:

Մայրը պապմեց եղելութիւնը: Երիտասարդը ձեռքը ճակատին զարկեց և շանթահարի նման զուրս թռաւ ոնից: Սներոջ որունը մինելով տեսաւ, որ կինը պառկած է: Զոքանչը երկու վերմակով ամուր ծածկել էր նրան, իսկ ինքը կողքին նսպել: Աչքերի արսուսուքը դեռ չէր չորացել:

— Էլ օյին էր մնացել, որ մէրդ աղջկանս զլուխը չբերի, ասաց զոքանչը, — սպա ծննդկանի հետ էլուս կը վարւեն: Եկաւ էսորեղ.

երեսի գոյնը էդ պատրի գոյնն էր գառել։ Սաղ ջանով կողում էր։ Ծածկել եմ, նոր է սկսել տաքանալ։ Հրէս Սբնացին ուզարկում եմ, որ գնայ երեխաներին բերի. փոքրիկին ծիծ դալ է հարկաւոր էս գիշեր։

—Ի՞նչ անեմ ես, գոչեց Գէորգը յուզւած և լացակումած, — ջնկելու եմ, կնկանս հետ առանձին ապրեմ։ Ինչ որ մէրս ուզի կը գտամ, միայն թէ կնկանս ազար թողնի։ Գիւզացիք ինչ ուզում են թող խօսան. իմ կնոջ կեանքը ամեն բանից թանկ է ինձ համար. էլ չեմ կարող համբերել ու դանել...

—Ինչ ուզում ես արա, մըմնջում էր Աթենիկը ոնքալի ձայնով, — միայն ինձ ազարիր էդ ցաւ ու կրակից։

Նրա ձայնը ասէք յարակի դալիս լիներ։

Սաթենիկը այդ գիշեր սասպիկ դենդ ունեցաւ։ Այնուհետ օրի վրայ նրա մարմնի տաքութիւնը բարձրանում էր։ Հարսը սարսափելի վսանգի էր մափնւած։ Նրա ծնողները և ամուսինը յուսահարութեան մէջ էին և չպիտին ինչ անեն։ Խեղճ մացրը ծածուկ լաց էր լինում, նախազգալով ազջկայ զրութեան անյուսալի վախճանը։ Սաթենիկը ծնողին յաջորդող դենդ էր սրացել։ Հայրական դուռն եկած օրւանից երեք օր անցած նա՛ զուրկ բժշկական օգնութիւնից՝ ծանր դանչանքների մէջ աւանդեց իր հոգին, խորսդի մէջ թողնելով թէ ամուսնուն և թէ ծնողացը։

—Կշառացմբ, արաւասուքի միջից գոռում էր Գէորգը, դառնալով մօրը, — կշառացմբ, դէ զինջացիր։

Թամամը, որ խնամուց դուն էր եկել հարսի մահւան պագմառով, ծեծում էր իր զլուխը և ողբում։

—Ասպւած, ինչու ինձ չպարար հարսիս դեղ. ովա խեղճ չէր դղաւ, սկա խեղճ չի էս ծծկեր երեխան։

Գէորգը լաց լինելուց դադար չէր առնում։

—Վայ իմ անբախտ! Սաթենիկ ջան, գոչում էր նա անդադար։

Երբ աշքերը ընկնում էին երկու փոքրիկների վրայ, Գէորգը մագերն էր սկսում փեղել և անէծք ու նախարինք ուզում իր մօրը։ Խսկ մացրը այլ ևս լուռ էր կացել և միայն առար առուք էր թափում նա մնացել էր քարացած անսպասելի աղէսի առաջ և չէր կարողանում ոչ ոքի երեսին նայել։ Գլուխը քարը՝

թաշկինակը շարունակ աչքերին էր տանում։ Լուռ էր։ Զգում էր նա արդեօք իր յանցանքի ամբողջ ծանրութիւնը, թէ ներքուստ չարանում էր անհնազանդ հարսի վրայ։

Վաղաթառամ էակի մարմինը հողին յանձնեցին։ Համարեա բոլոր գիւղացիք ներկայ էին յուղարկաւորութեանը։ Ամենքը ծանր տպաւորութեան դակ վերադարձան գերեզմանափնից, ծանօթ լինելով Սաթենիկի ցաւարանջ կեանքին։

Կարճ միջոցից յեպոյ մօր թարմ գերեզմանի կողքին գոեղ գուաւ նորածինը, որ կարծես կագարւած աղէտի ծանրութիւնից և Թամամ դարի ապագայ կուոցից ազատւելու համար՝ գնաց մօր երեխից...

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԵՐՄՈՆՑՈՎԻՑ

ԹԱՐԳԻՄ. ԱԼՔԱՅՈՒԴԻ ԺԱՏՈՒՐԵՑՆԻ

I

Ա Պ Օ Թ Վ

Ահանքիս զժւարին, ծանըր բոպէին  
Թէ լուռ թախիծ է ճնշում իմ հողին,  
Ես աղօթում եմ. միայն ուրբազան,  
Աքանչելի աղօթք մըրմնջում բերանո

Եւ ջերմ աղօթքում այնքան ներդաշնակ  
Կայ հըզօր մի ոյժ, մի ոյժ կենսառաք.  
Կայ ոգևորիչ մի գեղեցկութիւն,  
Մի անմեկնելի, առւրբ գեղեցկութիւն:

Եւ աղօթելիս՝ ես նորոգւում եմ,  
Կասկածը հեռու, հեռու է փախչում.  
Ես հաւագում եմ; ես արդասում եմ,  
Եւ թեթեանում; և' ազակ շընչում:

## II

## Մ Ա Ր Դ Ա Ր Ե

Այն օրից, երբ Տէրն յաւերժ, երկնաւոր  
ինձ մարդարէի պարզեց շընորհ,  
ես պարզ կարդում եմ, զերդ տիսուր մի էջ,  
Արար ու չարիք մարդկանց աչքի մէջ:

Ես ըսկսեցի քարոզել մարդկան  
Ե՛ւ սէր, և՛ ուսմունք սուրբ նշմարդութեան,  
Բայց զինւած իմ դէմ իմ մերձաւորներ՝  
Մոլեգին վերաս նեղեցին քարեր:

Եւ գլլիսիս վերայ ես մոխիր ցանած,  
Անապատ փախայ՝ աղքատ, հալածւած.  
Այնուեղ եմ ահա ասղում զոհ կեանքով,  
Որպէս թռչուններ—Տիրոջ բարիքով:

Այնուեղ Բարձրեալի պարուերը պահած՝  
ինձ խոնարհում է ամեն արարած.  
Այնուեղ և՛ ասղողեր եթերի միջից  
Խնդագին փայլով ունինդիր են ինձ:

Բայց երբ անցնում եմ արադ քայլերով  
Ես աղմկաշատ քաղաքի միջով,  
Վերաս ցոյց պալով՝ ինքնասէր, սիդանձ  
Ժըսպում են ծերերն ու ասում մանկանց.

«Վայեցէք, ահա, նա ձեզ օրինակ,  
Գոռող էր—մեզ հետ չըվարեց հաշտ կեանք.  
Անմիտն ուղում էր համոզել մարդկանց,  
Որ նորա լեզով խօսում է Աստւած:

«Վայեցէք, որդիք, ոուք նորա վերայ.  
Ինչպէս և՛ մըսացը, և՛ զունադ է նա,  
Ինչպէս նիհար է, մերկ, անօդնական,  
Ինչպէս ամենքն էլ ափում են նորանու:

## ՕԴ ԵՒ ԿԼԻՄԱ

ԴՈՔՏ. Կ. Յ. ՓԱՇԱՑԵԱՆԻ

(Ծարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

Օղին խոնաւութիւնը.— Օդը բացարձակապէս խոնաւութենէ, այսինքն ջրաշոգիէ զերծ չլինիր, միայն անոր չափին աւելնալովն ու պակսելովն օդին խոնաւութիւնը զդալի կը լինի: Օղին խոնաւութեան աստիճանը խոնաւաչափ (hydrogromètre) լսւած գործիքով կը չափւի: Օդին խոնաւութիւնը ամառը առաւօպէն մինչև կէսօրին երեք ժամ մնացած շաբանալ կը սկսի, անկէ կէսօրը մինչև չորս ժամ անցած կը սկսի, յեպոյ նորէն աւելնալ կը սկսի: Չմեռը կէսօրը մինչև երկու ժամ անցած կը շաբանայ, և արելը մարը մնած միջոցին կը սկսի: Օդը ցամաքի վրայ աւելի չոր է քան այլուր: Հովիրը խոնաւութեան վրայ մեծ ազդեցութիւն ունին: Եեռներու և անփառներու մօտաւորութիւնը խոնաւութիւնը կ'աւելցնէ, խոնաւութիւնը միջավացրի մը միջին գագութեան հետ խորորնակ կր համեմատի, մթնոլորպին ցած մասերէն աւելի բարձր խաւերուն մէջ նւազ է:

Օղին ջերմութիւնը.— Հասարակածի մօտ ջերմութեան միջին աստիճանը դրիմէ անփոփոխ է, թէեռներուն մօտենալով պարբերութիւնը կ'աւելնայ: Միջին հաշով ջերմութիւնը իւրաքանչիւր 180 մէտր բարձրութեան մէկ աստիճան կը սկսի: Մովին և ընդ-

հանրապէս բոլոր ջրերուն մօրաւորութիւնը ջերմութեան ասրի-  
ճանը կը բարեխառնէ. այս պատճառաւ իրենց ջերմութեան միա-  
կերպութեամբ նշանաւոր են ծովային կլիմանեթը և ցածաքային  
կլիմանեթը։ Անդառներու օղը դաշտի օդէն աւելի փաք և աւելի  
միակերպ է։

Օդին ջերմութիւնը շնչառութիւնը և արեան շրջանը կ'արա-  
գացնէ, մորթին պաշտօնները կը ժրացնէ, մէզին չափը կը սրակ-  
սեցնէ, ջղային դրութիւնը կը տկարացնէ, ախորժակը և մարտու-  
թիւնը կը նւազեցնէ։ Չափազանց բարձր գաքութիւնը արևահա-  
րութիւն, ջղառանցանք և կամ կազմութեան սպառում յառաջ  
կը բերէ։ Չափառոր ցուրտը արիւնը կ'աւելցնէ, ֆիզիկական և մուա-  
ւորական կարողութիւնները կը կանոնաւորէ. ընդհակառակը, չա-  
փազանց ցուրտը անդամուլուծիչ ներգործութիւն մը ունի, որ  
կրնաց մահ իսկ պատճառելի։ Մարդ սաստիկ ցրտերուն գէմ լաւ  
սնունդով և չափաւոր շարժումով մը կրնաց ինքզինքը պաշտպանել։  
Եթէ մարդուն բնական գաքութիւնը 37-էն (Յէլսիուս) 29 աստի-  
ճանի իջնայ, մահը վրայ կը հասնի։

Հովեր. —Եթէ մթնոլորդին մի քանի կէտերուն վրայ օդին  
խրութիւնը հաւասար լինելէ գագրի, այն ապեն առաւել կամ  
նւազ ուժգին հոսանքներ կը կազմէ ին, որոնց հով կամ քամի անունը  
կը տանք։ Օդը միայն եթէ մի կէտի վրայ տաքանայ, ընդլայնի և  
բարձրանայ, անոր տեղը կը յաջորդէ աւելի պազ օդի հոսանք մը։  
Հասարակածի մօր օդին չափազանց տաքցած մասերը մթնոլորդին  
մինչեւ վերջին սահմանները կը բարձրանան, ուրիէ գէպի բևեռները  
կ'ուղղվին, միևնոյն ժամանակ բեեռներուն ցուրտ օդն ալ կուգայ  
անոնց բեղը բռնել, ասկէ յառաջ կուգան ալիզեան և հակալի-  
զեան կոչւած քամիները, երկու կանոնաւոր, ընդհանուր և հաս-  
պարուն հոսանքներ, որ երկրին արեւմուղէն արեւելք դառնալուն  
հետեւանքով փոխան հարաւէն հիւսիս և հիւսիսէն հարաւ երթա-  
լու, մեր կիսազնոյին մէջ հարաւարեւուք և հիւսիսարեւելք  
կը միջն։

Մասնաւորապէս, ալիզեան և հակալիզեան հովերը միջերկրա-  
կանի կողմերը կը գոնւեին, այսինքն միստրալ կոչւած սրազ քամին,  
որ հիւսիսարեւելքէն կը միջէ և Ալիրոք ըսւած դաք քամին հա-

րաւ-արև մուտքէն։ Պարբերաբար փշող քամիներ ալ կան, ինչպէս Ս'ուսիմը, որ հնդկաց ծովուն մէջ հոկտեմբերէն մինչև ապրիլ հիւսիս-արևելք և ապրիլէն մինչև հոկտեմբեր հարաւ-արևմուսք կը միջն, առաջին սպարագային չորութիւն կը բերեն, իսկ երկրորդին անձրեներ: Էթեշիէն ըսւահ քամիները ամռան միջոցին Միջերկրականի մէջ կը միջն, որոնց արտօրին հոսանքը հիւսիս-հարաւ և վերին հոսանքը հարաւ-հիւսիս կ'ուզզւին, և չնիկ ասպեզի օրերուն բաքութիւնը կը բարեխառնեն:

Զափառող քամին մէկ մանրերկրորդի (=սեկունդ) մէջ 2 մէսր կ'ընթանայ, ուժգինը 10 մէտր, աւելի ուժգինը 15 մէտր, խիստ աւելի ուժգինը 20 մէտր, փոթորիկը 25 մէտր, ուրագանը 35 մէտր: Սիքլոն և Ռիֆոն ըսւած սասարիկ մրրիկները պուպուպակաւոր արագ շարժմամբ կը բեզզափոխիւն:

Քամին, մանաւանդ չորը, մարմինին ջերմութեան կորուսուր և շոգիացումը կը զիւրացնէ, հողը և մթնոլորսուր կը մաքրէ կասկածելի մասնիկները ցրւելով, առանց սակայն ախտաբոցը սերմերը շար հեռուները տեղափոխելու, երկրի մը չորութեան և խոնաւութեան վիճակը կը կանոնաւորէ: հեղեաբար քամին կլիմաներուն անհրաժեշտ դարրերէն մին է:

Մթնոլորտին ելեքտրականութիւնը.—Մթնոլորսուր նոյն իսկ առանց ամպերու և փոթորիկի ելեքտրականութիւն կը պարրասպէ, մանաւանդ դրականը. մթնոլորսին բարձր խաւերուն մէջ աւելի առափ կը գտնւի: Փոթորիկները մեր կլիմաներէն աւելի այրեցեալ գոտիին մէջ շար յաճախ կը պատրահէն և աւելի ահարկու են: Փոթորիկի ժամանակ՝ առափ ելեքտրականութեան պարճառաւա՝ ջզային, հիւանդ և ապաքինող անձերը տկարութիւն և սրբնեղութիւն մը կզգան: Նանթարձակումը աւելի յաճախաղէպէ է ամառը, ցերեկէն աւելի գիշերը, քաղաքներէն աւելի գիւղերը. և ուզզակի կամ վերագարձ շանթահարութիւնը անմիջական մահ և կամ միայն այրում; անդամալուծութիւն կը պարճառէ:

Աշխարհագրական դիրք ըսելով պէտք է իմանանք կլիմաները, լեռները, ծովերը, գետերը, ձորերը, անտառները և գաշտերը։ Այս զանազան դիրքերը խորապէս կ'ազդեն մարդկացին, ինչպէս նաև կենդանացին սեռի կազմութեան, բնաւորութեան և առողջութեան վրայ։

### Դ Հ Ի Մ Ա

Աշխարհագրական դիրք ըսելով պէտք է իմանանք կլիմաները, լեռները, ծովերը, գետերը, ձորերը, անտառները և գաշտերը։ Այս զանազան դիրքերը խորապէս կ'ազդեն մարդկացին, ինչպէս նաև կենդանացին սեռի կազմութեան, բնաւորութեան և առողջութեան վրայ։

Կլիմաները։—Կլիմաները իրենց անհուն գարբերութեամբ խորապէս կը ներգործին կենդանացին կազմութեան վրայ։ Հնդկաստանի կլիմացին դակ ապրող հաւը Խուսամարանի մէջ ապրող հաւէն շաբարքեր է։ Կոյնապէս հիւսիսացին սառուցեալ երկիրնեռուն մէջ ապրող արջը մեր բարեխառն կլիմաներուն դակ ապրող արջէն կը դարբերի։ Խոյնապէս են նաև մարդիկ։ Ամերիկացի դասպահաց կլիմացին դակ ապրող սևամորթը բնաւ չը նմանիր բարեխառն կլիմաներու դակ ապրող սպիրակամորթին։ Կլիմաները ընդհանուր բնութեան վրայ մէծ ազդեցութիւն ունին, կարծես բարքեր կլիմաներ մէկ մէկ գարբեր աշխարհներ են։ Երկու բարքեր կլիմաներու մէջ գոնուող անասունները, մարդերը, բոյսերը, և այլն, անհամեմադապէս իրարու աննման են։ ամեն կլիմա ունի իր բարտէ բոյսը, կենդանին ու մարդը. Բնչ հրաշալի մէծ կերպարանափոխութիւնն։...

Կլիման՝ երկրի մը ընծայած մթնոլորդացին հանգամանքներուն ամբողջութիւնն ըսել է, ինչպէս լայնութեան ու բարձրութեան ասդիմանու, ջերմութիւնը, չորութեան և խոնաւութեան վիճակը, հողերը, ելեկարականութիւնը։ Սակայն ընդհանրապէս կլիմաներու բաժանման մէջ այս հանգամանքներէն միայն ջերմութեան ասդիմանը հիմ բռն ելով գլխաւոր հինգ կլիմացական գորի կ'որոշւե՞ալիքեալ, ջերմ, բարեխառն, ցուրու և բնեռացին կլիմաներ։

1) Այրեցեալ կլիմաներ։—Երկրագնդին երկու զուգահեռ + 25° ասդիմաններուն մէջ կ'ինաց եւրոպա անոր դասկը չիցնար. այս կլիմացին դակ գրնուող երկիրներն են Ասիոյ մէջ՝ Արարիա, Հնդկաստան, Հնդկա-Չին։ Ափրիլէի մէջ՝ Աւսէգալ, Կոնգո, Աահարա, Սուդան, Հաբեշաստան, Սոգամբիք, Մադագասկար. Ամերիկայի մէջ՝ Մեքսիկա, Կեդրոնական Ամերիկա, Անդիլք, Կոլոմբիա, Գիւանա,

Երազիլի հիւսիսակողմը. Մալայայի մէջ՝ Ֆիլիպպեան, Մոլիկեան,  
Նոր Գոհնէ, Գալուեան, Մալգիւզեան և Զոնդի կղզիները:

Այրեցեալ զորիին մէջ օդային ձնշումը, պաքռութիւնը և խո-  
նաւութիւնը քիչ փոփոխական է, դրեթէ միակերպ է: Բնակիչները  
թոյլ կազմ մը և ընդհանուր վասուժութիւն մը ունին: Թոքախորը  
հոն արագընթաց է: Մասնաւորապէս հոն կը տիրէ ճահճացին՝ ջեր-  
մեր, սարզ կամ մահաբեր ջերմերու զանազան փեսակներ և անընդ-  
հայր ջերմեր. վրանգաւոր թանջքեր, լերդապատ, ժանդապենդ, յա-  
ճախ մահացուցիչ կապոնի անարիւնութիւն, արեւահարութիւն, արիւ-  
նամիզութիւն, ուսուզ կեղ, հալէպի կեղ և զանազան մորթացին հի-  
ւանդութիւններ, վնասակար ճճիներ, բոր, դանկ, և այն:

Սևամորթերը ընդհանրապէս այս կլիմաներուն դակ կը գտնւին.  
անոնց մորթերուն սեութեան պարմառը՝ արեգական կիզիչ ճասա-  
գացմներուն դակ արեան կրած մշտական փոփոխութիւնն է, որով  
գոյացած է դոյն զւող մասնաւոր նիւթը. և այդ սերունդը ժառան-  
դաբար կը վայելէ ացդ հանգամանքը: Այս կլիմաներուն անդրանիկ  
ընակիչները ի հարկէ մեզ նման սպիտակ մորթեր ունին, սակայն  
դարերու ազգեցութեան և արեգական ծայրացեղ կիզիչ ներզործու-  
թեան դակ գոյներնին հետզհետէ սեւացաւ: Արեգական այս ազգե-  
ցութիւնը մեր բարեխառն կլիմաներուն մէջ երկար ճամբորգողնե-  
րու վրաց ևս կը գեսնւի, թէև թեթե և ոչ վեւական կերպով: Տար-  
բերութիւնը ուրեմն ներգործութեան երկարաւու լինելուն մէջ կը  
կայանայ, նոյնողէս արեգական կիզիչ յագկութեան ասպիճանին մէջ:  
Սևամորթերու մազերը ողորկ, ալեծածան, դանգուր և գուող են:

2) Զերմ՝ կլիմաներ.—Զուգահեռ + 25° և + 15° աստի-  
ճաններուն մէջ կը դարածւի: Հիւսիսային կիսագնդին ջերմ կլի-  
մաններուն դակ դպնուղ երկիրներն են Եւրոպայի մէջ՝ Սպանիա,  
ծովացին Իտալիա, Յունաստան, Ֆրանսացի, միջերկրական ծովեղերքը.  
Ասիոյ մէջ՝ Արաբիոյ և Պարսկաստանի հիւսիսակողմը, Ասիական  
Տամկաստան, Աֆղանիստան, Թիւրքիաստան, Չինաստանի հարաւը.  
Աֆրիկայի մէջ՝ Մարոք, Ազգացիր, Տունիս, Տրիպոլիս, Նորմանիա.  
Ամերիկայի մէջ՝ Մեքսիկացի հիւսիսը, Միացեալ նահանգաց հա-  
րաւը. Ովկիանայի մէջ՝ Մարեան, Մագելլան և Սանդուիչ կղզիները.  
Հարաւային կիսագնդին դակ կը գտնւին, Աֆրիկայի մէջ՝ Բարեխու-

սոյ զլուվսը, Հորենափօ. Ամերիկայի մէջ՝ Կերու, Բրաղիլ. Ովկիանայի մէջ՝ Աւստրալիա, Նոր Կալեգոնիա:

Այս կլիմայցին բարեկան միջին տաքութիւնը 16-էն 20 աստիճան է (Ցէլսիուս). ջերմութեան փոփոխութիւնները ցերեկը աննշան, իսկ դիշերը շատ զգալի են: Ճահճացին ջերմերը՝ որ յաճախ վատնգաւոր ձև մը կ'առնեն՝ Զեզայիրի մէջ շատ կը պատահին. Հոն կը տիրէ նաև Պիսքիրա ըսւած կեղլ, բեզուիներու քոս, երեզակ, փորհար, թանջք: Եգիպտոսի մէջ նեղոսի կեղլ: Փոքր Ասիոյ մէջ Տալէպի կեղլը: Նոր-Կալեգոնիայի մէջ թոքացին և աղիքացին հիւանդութիւններ և թոնիկա ըսւած մորթացին ախտը: Այս կլիմայի բնակիչներուն մազերը կարծր ու չոր կ'ըլլան, ինչպէս Արաբացիներուն, Հնդկաստանցիներուն, Իսալացիներուն, Սպանիացիներուն մազերը:

Հեղինակներ կան որ ցիշւած այս երկու կլիմաները իրարմէ չեն զանազաններ և ջերմը կլիմա անւան բակ կը ճանչնան, ինչպէս նաև քիչ ցերոյ թւելիք ըեւեռային և ցուրտ կլիմաները ցուրտ կլիմայ անւան բակ կը ցիշեն: Մենք հինգ բաժանումը ընդունելով հանդերձ երբեմն ընդհանուր նկարագրութեանց համար երեք բաժանումին պիտի հետեւինք, երրորդը յայսնի է որ բարեխառն կլիմա ըսւածն է:

Ջերմ կլիմայի բակ ապրողները ընդհանրապէս ջղացին և նիհար են, շատ կանուխէն արբունքի կը հասնին և շուպով ալ կը պկարանան. ախտրժակնին նւազ և մարսողութիւննին պկար է, դրժւարամարս կերակուրներ չեն կարող ուղիել, նոյնպէս զօրաւոր ուղելիքներ և խմիչքներ: Ընդհանրապէս սրամիր են, ինչպէս եգիպտացին, լոյնը, պարսիկը:

3) Բարեխառն կլիմաներ.—Զուգահեռի+15°-էն+5° ասպիճաններուն բակ կ'ինայ: Հիւսիսային կիսագնդին մէջ կը գտնուին Եւրոպացի մեծագոյն մասը. Ասիոյ մէջ Մոնզոլիա, հիւսիսացին Զինապան, Ճապոն, Ամերիկացի մէջ հիւսիսացին Միացեալ նահանգները: Հարաւային կիսագնդին բակ կը գտնուին Ամերիկացի մէջ Զիլի, Պապագոնիա, Ովկիանայի մէջ Տասմանիա, Նոր-Զէլանդա:

Այս բարեխառն կլիմաները մընոլորսացին փոփոխական հանգամանքներ և եղանակներուն համեմատ բարեբրող իիսոր ալյացլուն

հիւանդութիւններ կընծային։ Ընդհանրապէս առողջարար են Հիւանդութեանց մէջ կարելի է լիշել ճահճային ջերմերը, մորթի և փորի ճճիներ, և ցուրու ու խոնաւ միջոցին հարթխային և տապային հիւանդութիւններ։

Այս կլիմաներուն բնակիչները խելացի ու գործունեաց են, ամեն բնական յափութեամբ միջին վիճակ մը կը ներկայացնեն։

4) Ցուրտ կլիմաներ։ +5-էն — 3 աստիճաններուն մէջ կը գտնեին։ Եւրոպայի մէջ Խոլանդա, Ականդինաւեան թերակղզին և Ռուսաստանի հիւսիսակողմը, Լապոնիա։ Ասիոյ մէջ Սիբիրիա, Կամչադակա։ Ամերիկայի մէջ Սլեսուկա, Լաբրադոր, Կանադա, Նորմերկիր։

Այս երկիրներուն մէջ ճահճային ջերմերը հազւադէպ են։ Հոն թոքախաը նւազ է, յօղացաւը և իջւածացաւը բարեխառն կլիմաներէ աւելի հազւադէպ են։ Հոն աւելի կը պարահեն ձիւնէ յառաջ եկած աչացաւեր և սասելու դիմուտներ։

Ցուրտ և խոնաւ երկիրներ բնակողներուն մագերը սովորաբար երկան, խիստ և կակուղ կ'ըլլան, ինչպէս անդիմացիներուն, հոլանդացիներուն և շւեդացիներուն մագերը։

5) Բեւեռային կլիմաներ։ — Զուգահերի — 5°-էն — 15° աստիճաններուն մէջ կը գտնելի։ Տեսուեալ երկիրները անոր կը պարկանին՝ Եպիցրերգ, Նոր-Զեմլիա, Սիբիրիոյ ամենէն հիւսիսային մասը, Բաֆինի, երկիրը, Գրենլանդ։ Աշխարհիս ամենէն սառ երկիրը Բեհրինդի ծոցն է, միջին դարեկան ջերմութեան աստիճանն է — 23° (Ցելսիուս)։ Տիրող հիւանդութիւններն են ձիւնէ պարմառւած աչացաւեր և սառելու դիմուտներ, ինչպէս նաև երբեմն ըսքորպիկթ և աղիքային խանգարումները։ Այս կլիմայի բնակիչները հասակաւ ամենէն կարճերն են և կազմով ամենէն զօրաւորներն։

Ցուրտ և բեռնային կլիմաներու բնակիչներուն կազմը շարգորաւոր է, ախորժակնին բաց և մարսողութիւննին աշխայժ։ ամենէն դժւարամարս և զօրաւոր ուղելիքները իրենց բաժին ինկածեն։ այրեցեալ և ջերմ կլիմաներու մնունդներով չեն կարող ապրիլ։ Խւդալի, մսացին և նշացին նիւթեր ուղելով միացն կը կարողանան դաշտալ սասարիկ և մշտագու ցրային։ Նար ուշ արփունքի կը հասնին։ Խելքով բարձր դիրք մը չեն դրաւած։

\* \* \*

Օղընտելութիւն.—Անհարի մը իր ապրած միջավայրէն ուարսրեր միջավայր մը, այսինքն մէկ կլիմայէ մը ուրիշ կլիմա և կամ քաղաքէ մը ուրիշ քաղաք փոխադրւելով կրած ֆիզիկական և հոգեկան փոփոխութիւններուն և այդ փոփոխութեանց անվնաս վարժուելու պահմաններուն օղընտելութիւն (acclimatement) կ'ըսւի:

Օղընտելութիւնը միևնոյն կլիմայի տակ գտնւող զանազան քաղաքներու մէջ աւելի դիւրին և անվնաս տեղի կ'ունենաց, որովհետու օդը շատ մեծ սարբերութիւն մը չընծացեր, և հետեաբար ուժգին չներգործեր ֆիզիկականին վրայ: Օրինակի համար, ըսրընխառն կլիմայի տակ գտնւող Կ. Պոլսոյ բնակիչները առանց դժւարութեան կ'ընդուանան միևնոյն կլիմային տակ գտնւող Պարիզ քաղաքի օդին. և այրեցեալ կլիմայի տակ գտնւող Սրաբիոյ բնակիչները դիւրաւ կրնան ընտելանալ նոյն կլիմայի մէջ գտնւող Հարբշիւրանի օդին. նոյնպէս ցուրտ կլիմայի տակ գտնւող Սիրիիիոց բնակիչները նոյն կլիմայի պատկանող Կանադայի օդին դիւրաւ կը վարժւին:

Սակայն իրարմէ շատ սարբեր կլիմաններու տակ գտնւող քաղաքներու մէջ օղընտելութիւնը շատ դժւար տեղի կ'ունենաց և զգուշական միջոցներու կը կարօպի. ասով միայն անհարին ֆիզիկական վիճակը անվնաս կրնայ մնալ: Յուրաք կլիմայի պարկանող քաղաքներու բնակիչները ջերմ կամ տաք կլիմաններու մէջ հոն սիրող հւանդութեանց ենթակայ կը լինին, և ելթէ օդընտելութեան յաղուկ միջոցները, պարերները և կանխազգուշութիւնները չգործադրեն, կլիմայի յանկարծական ուժգին ազդեցութեանց զոհ կ'իրթան:

Միևնոյն կլիմայի տակ գտնւող զանազան քաղաքներու և նոյն իսկ միևնոյն քաղաքին զանազան դիրքերուն համեմատ օղընտելութեան պահմանները կը փոփոխին. այրեցեալ դորիի տակ քաղաքներ կան որ բարեխառն կլիմայի մը հանգամանքները ներկայացնող դիրքեր ու վայրեր ունին: Օրինակի համար, Փոքր-Սսիոյ մէջ իրարուշաւ մօս եղող Թոքաւ և Սըւազ քաղաքներու օդը մեծ սարբերութիւն մը կը ներկայացնէ. յաճախ Սըւազի մէջ ձմեռը իր ուժգնութիւն մը կը ներկայացնէ.

թիւնը պահած միջոցին, Թոքառի մէջ գարնան սքանչելի եղանակ մը կը տիրէ:

Կլիմայի փոփոխութեան մէջ ամենէն աւելի ուղղակի վնաս-  
ւողը ջղացին դրութիւնն է: Օգբնութութեան մէջ ամենէն աւելի  
մեծ զեր խաղացողը ջերմութեան փոփոխութիւնն է:

Ճերմ կլիմաները յառաջ կը բերեն:

1) Մորթացին գործունէութեան տկարացում և առհասարակ  
ջղացին թուլութիւն, այսինքն չափազանց քրաֆինք, հրատուոր ծա-  
րաւ, աղիքներու ծուլութիւն, և այլն:

2) Արեան շրջանի դանդաղութիւն:

3) Արիւնակազմութեան նւազութիւն, որ արեան շրջանի և  
շնչառութեան դանդաղութեան հետեւանքն է: Իրաւ եթէ ջերմ  
կլիմաներու պակ թոքացին գործունէութիւնը կ'աւելնայ, սակայն  
այս փոխարինումը բաւական չլինիր, որովհետեւ թոքերուն մէջ  
մացւած օդին չափը բարեխաւն երկիրներէն աւելի քիչ կը լինի.  
Հետեւաբար սնանումը կը խանդարի և մարմնի ծանրութիւնը  
կը պակսի, մկնացին ոցիը կ'իջնայլ ցիշողութիւնը և ուշազրու-  
թիւնը կը տկարանայ, և մրացին կարողութիւնները իրենց ամ-  
բողջութեամբ կը թուլնան:

4) Մորթացին աշխուժութեան հակառակ երիկամներու պաշ-  
տօնը՝ այսինքն մէկը կը նւազի:

5) Մաղձարակը գործարանին գործունէութիւնը կ'աճի:  
Իսկ ընւեռային կամ ցուրտ կլիմաները ընդհանրապէս հա-  
կառակ ազգեցութիւններ կ'ունենան:

Սակայն, բնախօսական այս փոփոխութիւնները առողջութեան  
հեցւ թնչ յարաբերութիւն ունին: Գաղթական մը որոշ ժամանա-  
կամիջոցի մէջ ճշմարիստ տեղացիութիւն մը կրնայ շահիլ: Փորձը  
մը չափ կը ուեէ:

Այս հարցումներուն սրացածիւանելը որչափ գժւարին, նոյնչափ  
աւ բազմադիմի լինելը յացնի է:

Օգնութեանը գլխաւորաբար նոյն իսկ անհարին յարակից  
խել մը պայմաններէ կախեալ է, և առաջին պեղը կը բունեն նոր  
կլիմացին առողջապահական հանգամանքները:

Նախադէս յայսներք, որ վարառողջ կլիմայի և վայրի մը հետ

օդընպելութիւն կարելի չըլինիր: Հակառակ օրինակները բացառութիւններ կը կազմեն. ամեն օր կը տեսնւի որ ճահճուար և վարառողջ վայրերու մէջ օդընրելանալ ուզող անձերը նոր համաձարակի մը և կամ արդէն գոյութիւն ունեցող համաձարակի մը զո՞հ կ'երթան: Նաև համարձակ կարելի է լսել թէ բուն ըեւեռային կլիմայի հետ օդընրելութիւն չը լինիր: ուր վեց ամիս տևող զիշերւան միջոցին մարդս չափազանց ցուրպի մը ենթակայ կը լինի. բևեռային կլիմացին պէս բացառապէս խոնաւ, ապականւած մթնոլորփի մը մէջ առանց բանջարեղէնի, առանց թարմ սնունդի, առանց զբօսանքի՝ որ մաշեցուցիչ ձանձրութին գէմ մեր միակ պաշտպանն է՝ մարդս գժւար կրնայ ապրիլ:

Նոյնպէս, այրեցեալ կլիմայի մէջ մարդկային կազմը կլիմացին միակ ազգեցութեան դակ ծնունդ առնող բոլոր հիւանդութեանց ենթակայ կը լինի, շատ քիչեր զերծ կը մնան. լիշենք մէկ քանին:

1) Անարինութիւն որ մորթին գեղնութիւն կը պատճառէ. Ամերիկայի սեւամորթերուն համար մորթին այս գոյնը բնական եղած է երկար զարերու յուրվման պարճառաւ. մորթին դակ որոշ կը գեսնւի այս գոյնը: Անարինութեան պարճառները բազմազիմի են, մարսողութեան ծուլութիւնը, արիւնակազմութեան անբաւականութիւնը, չափաղանց քրպինը: Անարինութիւնը մարդս կլիմայական հիւանդութեանց ենթակայ կընէ և հետեւանքները կը ծանրացնէ:

- 2) Դժւարամարսութիւններ:
- 3) Լեարգարապ, և այլն:
- 4) Աղիքարապ, և այլն:
- 5) Դողացաւ, ջղացաւ, և այլն:

Առանց ցիշելու ուրիշ արկածալից վիճակները, ինչպէս արևահարութիւնը, ջղացին ծանր խանգարումները, ինչպէս կարելի է յուսալ որ մարդս կարենայ երկար արեն պահել իր կորովը զիմազրելով այս հիւանդութեանց կամ դեղի ունեցած աւելի կամ նւազիոր աւերումները գարմանել, որոնց վարութիչ ներդորժութիւնը շարունակական է:

Այսուհանդերձ, ջերմ կլիման կուրծքի հիւանդութեանց մէջ նպաստաւ որ ազգեցութիւն մը ունի. հոն այս կարգի հիւանդութիւններ արդէն հազւադէալ են, շնչառական դորժարաններու բոր-

բոքումները եթէ մինչև թարախանալու ասրիճան յառաջացած չեն, կրնան այդ կլիմազին տակ բարելաւուիլ, իսկ եթէ թարախացած լինին, աւելի կը սասպիկանան:

Զերմ կամ այրեցեալ կլիմաներու տակ ախտերու դիմադրելու կարողութիւնը ամենուն համար միեւնոյնը չէ. ահա ձիշդ ասոր մէջ կը կայանայ օդընդութեան գլխաւոր զազոնիքը: Միենոյն կլիմազին տակ կան մարդեր որ կրնան ապրիլ, կան ալ որ չը դիմանալով տեղի կուրան, և ասիկա գլխաւորաբար իրենց կազմն կախում ունի. մանաւանդ հիւանդութեանց դիմադրելու կարողութեան մէջ բարոյական և հոգեկան կարողութիւնն ալ մեծ դեր կը խաղաց: Ամենէն աւելի դիմացկան մարդիկ ջղացիններն են, և ամենէն աւելի տեղի ոււղղները թուլակաղմներն են: Ամեն պարագայի մէջ, արիւնացին կազմ ունեցողները օդընդութեան ամենէն սոսկալի խառնակութեանց ենթակայ կը լինին. դաքին կամ՝ ցրտին ազգեցութեան տակ արիւնը դէպի ներս կամ՝ դուրս խուժելով ծանր վրանգներ յառաջ կուզան. արիւնալին կազմ ունեցողները նոր վայր մը հասնել վերջը շատ դանդաղաբար կրնան իրենց հաւասարակըշութիւնը պահել:

Մեկնւած և հասնելիք վայրերը իրարու որշափ մօտ լինին, կամ աւելի ընդհանուր կերպով խօսելով, երսոր իրենց կլիմացական երեսցթները աւելի նմանութիւն մը ներկացացնեն, օդընդութիւնը այնչափ աւելի դիւրին կը լինի: Կըսւի նաև թէ օդընդութիւնը հասարակածէն աւելի դէպի քեսները աւելի դիւրին է:

Օդընդութիւնը վայրի մը մթնոլորդաբանական փոփոխութեանց հակառակ կը համեմապի, որչափ փոփոխական լինի, նոյնչափ կը դժւարանաչ, և ասոր հակառակը: Հատապուն և կանոնաւոր եղանակ ունեցող կլիմաներու մէջ օդընդութիւնը կը հեշտանաչ:

Երիտասարդները զլիմաներու աւելի հնչափ կը ընդուլանան: Մանուկները թէի իրենց նոր հասած ժամանակ օդընդութեան խանգարումներուն շուպով հնթակայ կը լինին, տսկայն աւելի շուպով և տեսական կերպով ալ կրնան վարժել նոր պայմաններուն: Ընդհակառակը, ծերերը կլիմայի փոփոխութիւններէն խորապէս կ'ազդւին և իրենց կազմը նոր պայմաններու դժւար կը վարժի:

Անհապին համար օդընդութեան պայմանները ի՞նչ են: Այս-

տեղ չենք ուզերու ցեղերու օդընսպելութեամբ զբազիլ Մասնաւորելով մեր խօսքը, ընդհանուր կերպով մը կը թւենք:

1) Նոր կլիմացին առողջապահական հանգամանքները: 2) Այն կլիմացին պակ ապրելու համար ցեղին ընդունակութիւնները որոնք կենդանութեան ոչժով և ծննդականութեան կարողութեամբ կը յայսնախն:

Օդընփելութեան արւեարը ցարդ գտնւած չէ: Տեղ մը օռընսպելանալու համար նախ պէսք է սկսել երկիրը առողջապործել ու մաքրել, և պարագուգութիւնները դիւրացնել, այսինքն այլացեղերու մէջ ամուսնութիւններ կնքել, որպէս զի յաջորդ սերունդը կարենաց պոկալ և վարժիլ նոր կլիմացի պայմաններուն: Խսկ անհապին համար օդընփելութիւնը աւելի զժւար է, մանաւանդ երբոր կլիմացական ներդործութիւնները աւելի ծանր լինին այն արեն ուրիշ բան չըմնար ընել, եթէ ոչ նոյն կլիմացին մէջ աւելի առողջաւելու վայրեր փնտուել և հոն բնակութիւն հաստագուել:

Այս միջոցներէն զար, մննդեան և սովորութեանց ասպիճանարար բարեփոխումը կը յանձնարարենք: Որովհետեւ ջերմ կլիման կը պկարացնէ, հետեաբար օրւան ամենէն պաք միջոցին աշխարութիւնը չափաւորելու է: չափազանց պաքը ուղեղը կը գրգռէ, շեղեւաբար այս միջոցին զայն պանջող մկաւորական աշխագութիւնները դադրեցնելու է, և որովհետեւ քրտինդին առար հոսումը նիշարնալու պարճառ մըն է, չափազանց ըմպելիններ գործածելով զայն վերագրգուելը աւելորդ է: Վերջապէս մնունդը պէսք է կազմութեան ճշմարիս պահանջին համեմատ կանոնաւորել, ոչ թէ ախորժակի քմահաճոցքներուն համեմատ: Այրեցեալ կլիմաներու մէջ դիւրամարս, նւազ մնուցիչ ուղելիքները յարմար են. ո և է գրգռիչ ոգելից ըմպելի մնասակար է, չափաւոր մարմնամարզութեան և մարմնական մաքրութեան մեծ խնամ դանելու է: Չափաւորութիւնը ամեն բանի մէջ լաւ է, խսկ չափազանցութիւնը ամեն փեղ մնասակար, մանաւանդ պարբեր կլիմա մը նոր հասած ժամանակի: Ամեն կլիմացի մէջ սովորական ողջպահիկ կանոններու ճշգութեամբ հետևելու է: Գիշերւան ցրպին ու խօնաւութեան համար ֆլանելի բանկոն և բրդէ գոսի մը կրել հարկ է:

Ցուրպ կլիմաներու մէջ բրդէ լայն հագուստներ, զօրաւոր սնունդ, իւղեղէն, չափաւոր զօրացուցիչ ըմպելի, մարմնամարզութիւն հարկաւոր և օգտակար են:

\* \*

### Ահետիք հսահակեսնի

Ես քարփի պակ խորունկ փորեմ,  
Թաղեմ սիրոս ցաւով լի,  
Մենձ քարափն էլ վրէն շրջեմ,  
Ծանր լինի, դուրս չելնի...

Ա՛յս, շատ վաղուց սիրոս առայ,  
Էնկայ մարդկանց դռները.  
Յաւիս գեղ-ձար շատ խնդրւայ,  
Մարդիկ փակին դռները...

Ե՛ս, ի՞նչ անեմ, սիրոն ի՞նչ պէսք է,,  
Ասի—թողեմ, թող մեռնի.  
ԶԵ որ մարդիկն էլ սիրոս չունին,  
Անսիրոս մարդը ցաւ չունի:

1897 թ. 11 դեկտեմբերի,  
Ալեքսանդրապոլ

ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԱԶԱՏ ԲՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆՆ  
ՔԱՂԱՔԱՐԹԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍԻԱՅԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒ-  
ԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎՀ. ՏԵՐ. ՄԻՐԱԳԵԱՆՑԻ

Դեռահամների գրականութիւնը երկու գլխաւոր հարուածների վերածեցինք <sup>1)</sup> առաջինի մէջ ամփոփելով հեքիաժը, Առբինզոնի պատմածքը, զրոյցն ու պատմածքը՝ պարզեցինք, որ այդ բանահիւսութիւնները բնորոշում են քաղաքակրթական-պատմական աստիճանները, և ցիշելով կենսագրութիւնը, իրական (ուշալ) աշխարհից առած նիւթերը (պատմութիւն, աշխարհագրութիւն ու բնական գիրութիւնները), բանասրեղծութիւններն ու պարբերական հանդէսները՝ այս ճիւղերն էլ ի մի ամփոփելով նոյն աստիճանների լրացուցիչ ու լուսաբանող դարբեր անւանեցինք: Աւրեմն հիմա դառնալով այս երկրորդ հայուածին՝ սկսենք բելլերիստական-պատմական գրւածներից, որոնք միջին դիրք են բռնում; և դառնալով զուր պատմական նկարագրութիւններին կամ պատկերներին՝ կը սկսենք այսպիսով իրական (ուշալ) աշխարհը. կենսագրութեան, բնական գիրութիւնների, ճամբորգական նկարագրութիւնների վրաց խօսելով՝ կ'անցնենք ոգունաւորներին, զրամագիկական գրւածքներին ու վերջապէս պարբերական մամուլին:

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ-ԲԵԼԼԵՏՐԻՍՏԱԿԱՆ ԳՐԻԱԾՔՆԵՐ ԵՒ ԶՈՒՏ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախ վեր առնենք բելլերիստական ձևի վերածւած պատմական գրւածքները, որոնց հեղինակներն օգուր քաղելով բանասրեղծին շնորհւած աղաբութիւնից՝ պատմանիների մէջ դէպի պատմա-

<sup>1)</sup> Տես Մուրճ, 1898, № 9, 10—11.

կան կեանքը հարցասիրութիւն արծարծելու համար՝ մէջ են բերում մփացածին անձեր, պատմականների հետ յարաբերութեան մէջ են գնում և դունագեղ պատկերների շնորհով գրաւում են գեռահաս սրբերը: Եթէ այս կարգի գրւածքներն աւելի համակերպւած լինէին: Ընթերցողների պահանջներին, կարելի էր Ռոբինզոնից ու Կուպէրից յետոյ նրանց ձեռքը դալ: Խնչուիս պատմական վէպերի, նոյնպէս էլ պատմւածքների գլխաւոր անյարմարութիւններից մէկն այն է, որ նրանք ընդհանրապէս բարձր ոճով են գրւած լինում և մին էլ որ սիրայինը նրանց մէջ շատ անգամ անթոյլատրելի եղանակներով է նկարագրւում: Այս էրուական գարը սակայն այդ գրւածքներից դուրս ձգելու ոչ հնարաւորութիւն կայ և ոչ էլ պէտք, քանի որ հին, վերին աստիճանի պատկեանկարու բարոյակրթիչ ուղղութիւնից հիմա ձեռք են վերցնում, գասական երկերն անխռով սրբով դասաւանդութեան նիւթ ընդորելով: Այս կարգի պատմւածքների ու վէպերի մէջ նկարագրւած ուժեղ և կենսալի բնաւորութիւնները կենդրոնացնում են գեռահամաների ներքին աշխարհի և ապագայ կեանքումն էլ նրանց առաջնորդ հանդիսանում: Պատմական վէսն անշուշտ աւելի զարգացած օրիորդների ու պատմանիների ընթերցանութեան նիւթ կարող է դառնալ: Ֆողովուրդն ու գեռահաս սերունդը շատ թերի կամ ամենենին գաղափար չունենալով պատմական երեսոյթների ու նրանց պահմառականութեան մասին, ժամանակակից ու ապագայ կեանքի վրայ էլ շատ սահմանափակ հայեցւածքներ է ունենում: Ահա նախ բելլետրիստական գրւածքներով հարցասիրութիւն զարգացնելով՝ պատմութիւնովն էլ հետաքրքրւելու ձգուում կառաջացնէիք նրանց մէջ: Թէև, ինչու առաջին հագուածում յիշեցինք, Տէնը միայն վեր առած կեանքի ժամանակակից հեղինակների երկերն է իսկական պարհական համարում, սակայն նորագոյն գրականութեան մէջ ացնպիսի դրիչներ են ձեռք զարկել այդ գործին, որ երեխ վեռ երկար ժամանակ ընթերցող հասարակութիւնը զիւթւած կը մնայ նրանց հմացիչ ձեռագործներով:

Պատմական կեանքից վեր առած պատմւածքներից պահանջւում են որ և է միջադէպի կամ շրջանի ճշգրիտ ու վսպահելի պատկերներ: Դործող անձերի կեանքն ու կացութիւնն ացնպէս

պէսք է նկարագրել, որ նրանք իրանց ժամանակակից՝ պայմանները մեղ ակնյացտնի պատկերացնել կարողանան։ Կան՝ աշնաղիսի՝ դրւածքներ, որոնց բովանդակութիւնը՝ ոչ միայն պատմական չէ, այլ և մինչև անգամ հեղինակի կուսակցական միտումներից զերծ մնացած չի լինում։ Հմտութիւնից զուրկ գրողներն էլ շատ անգամ վեր են առնում ու պատմական յաշտնի անձնն են գլխաւոր դերը բալիս և այսպիսով հենց իրանց ձեռքով բանաստեղծութեան՝ թերերը կորագում, նրան ազագութիւնից զրկելով։ Մինչդեռ ընդհակառակը պիտք էր որ սպիզգուած տիպարներն իրրե զլաւոր դերակարարներ հանդիսանացին, որպէս զի համարաւորութիւն լինէր արեստի պահանջման համապատասխան՝ նիւթերը պատմական խիստ պայմաններից անկախ մշակել։ Եաւ անգամ՝ էլ անուններն ու թւականները, միջանկեալ ու կարեւորութիւնից զուրկ անձերն ու եղելութիւնները ծանրաբեռնում են գրւածքը և թոյլչեն բալիս, որ ընթերցողը պարզ գենանել ու հետամուլտ լինել կարողանայ, թէ պատմական ոյժերն ինչպէս են գործում։ Խնչպէս պատմական գլրւածքների ու դասագրքերի մէջ, նոյնպէս էլ վէպերի ու պատմւածքների մէջ պատմերագմների յաճախակի և ընդարձակ նկարագրութիւններն այնքան մթնացնում են պատկերը, որ քաղաքակրթութեան կենսագույն ճառագիտներն ազօտանալով կարծես պատահական ու կողմնակի ցոլքի պէս գոլիս ու անցնում են նրանց վրացից։ Այսպիսով ընթերցողը փոխանակ որ և է ժողովրդի սովորական կեանքի պատկերը բեմնելու նրա առժամանակեայ կրքերի բխրագին գետարանին է հանդիսապես լինում։

Պատմական վէպերի ու պատմւածքների օրինակելի հեղինակներ համարւում են Սկոյ, Ալեքսիս, Ֆրայցագ, Եֆէլ, Յ. Ֆ. Մայէր, Հառով, Կլայսու:

Հայկական գրականութիւնը թէև ունի քիչ շատ պատմական վէպեր ու պատմւածքներ (Մերենց, Ռաֆֆի, Մուրացան), սակայն բուն պատմական ու ժողովրդական դրւածքներ՝ ոչ Եւ քանի որ այս այսպէս է, պահանջ կայ արգեօք եղածներից փոխազրութիւններ անելու։ Եթէ պատմական հարուար բովանդակութիւնով զեզուն վէպեր փոխազրելը բաւականին անշնորհակալ» դործ է, հապա ինչ յոյս կարող էինք ունենալ մեր նոյնանման վէպերի վո-

խագրութիւնից; Իմ կարծիքով աւելի լաւ է զեռահասը մի քիչ ուշ և ուղղակի բնագրերը ձեռք առնէ՝ քան չոր ու ցամաք, անսիրպ ու անհոգի կցկցանքները, որոնց անշահ նմուշներից շատ շատ փես նում են ուրիշ ազգերի գրականութեան մէջ:

Չուփ պատմական նկարագրութիւնները հին ազգերի ընդունեկան, հասարակական, պատմագրմական կեանքից զբաղմունքների, գւարճութիւնների, արդ ու զարդի, շինութիւնների և այլն աւելի գունաւոր պատկերներն են ներկայացնում: Այս կարգի գրւածքները, որոնք գրականութեան մէջ պատմական պատկերներ են անւանւում, պատմական վաղանցուկ անցքերից անկախ՝ ներկայացնում են նշանաւոր որ և է շրջանի քաղաքակրթական գուական բնորոշ երեսիցները: Պատմական պատկերներին իրեւ օրինակ կարող են ծառայել Սլբրէսոր Ռիխտէրի գրւածքները, որոնք որքան էլ հետաքրքրական լինեին զարդացած ու հարցասէր պարանուն, այնուամենայնիւ պատմական վիպերի ու պատմւածքների հրապոյըը չէին կարող ունենալ: Որոշ աստիճանի զարդացման հասած պատանին միայն ձեռք կ'առնէ այդ նկարագրութիւններն անցած զնացած կեանքի մասին աւելի ճիշպ զարդափար կազմելու համար քան դասագրքերն են փալիս:

### Բ. ՆՇԱՆԱՒՈՐ ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս յայրնի է, կենսագրութիւնը պատմութեան դասաւանդութեան սկզբում առանձին նշանակութիւն ունի: Եթէ զրոյցներից յետոց, որոնց մէջ անհարական կեանքն է զբաղեցրել մանկան երեակայութիւնը, անմիջապէս պատմական բարդ ու ընդարձակ երեսոյթներին անցնելու լինեինք, անշուշփ աննպապակ գործի ձեռնարկած կը լինեինք: Այս պատմառով էլ մանկավարժութիւնը դասաւանդութեան առաջին շրջանում անձնաւորութիւնն է ներկայացնում իրեւ պատմական կեանքի շարժիշ (մուտր), ի նկատի ունենալով որ անհարփի կեանքն աւելի պարզ միութիւն է ներկայացնում՝ քան ժողովրդինը: Դեռահասը զարդացման որոշ աստիճանի համելով հետզհետէ վերահասու է լինում, որ այս կամ այն նշանաւոր անձնաւորութիւնն իսկապէս ժամանակակից պատմական կեանքի արդադրութիւնն է, որ նրա ներքին աշխարհն էլ նոյն օրէնքներով է զեկավարւում, ինչպէս ժողովրդինը, և որ միայն հանձարա-

ներին է յաջողւում իրանց ժամանակից մի քայլ աւելի առաջ անցնել:

Մինչդեռ բելլետրիստական-պատմական գունագեղ գրւածքները գրաւում են ընթերցողի սիրով բանասփեղծական ազատ թռիչքով, կենսագրութիւնը հետաքրքրում է ու հիացնում նրան խկական կեանքի չքնազ ու ազդու արրաջացրութիւններով։ Ընդիր կենսագիրը նախ սպազաց խորհրդաւոր կեանքի նշոցները վեր հանելով ասպա ներկայացնում է պատանեկական հասակի ձգորումների շարժառիթներն ու փափանումները ու վերջապէս հասուն շրջանի բնաւորութիւնն ու գործքերը այն չափով նկարագրում, որ չափով որի նկատի առնեած ընթերցողներին հասանելի կը լինեն։ Այս կենսագրութիւնները գեռահասին թէ ուրախութիւն և թէ հաճոյք են պագմառում և թէ բարձրացնում են նրան՝ միտքը պարզելով ու զգացումներն ազնւացնելով։ Անկախ բնաւորութեան գէր մարդու կեանքի ազդու։ Հոսանքին ուշի ուշով ու ոգեորութիւնով հետեղ մասուազ անհատի մէջ էլ մրասլափկերներից առաջանում են ձգորումների ցանկալի հոսանքներ այնպէս, ինչպէս հարիկ հարիկ կաթիլները, ոլոր մոլոր վտակները բնական ազդեցութեամբ միախառնւելով ու որոշ ուղղութիւնն բռնելով, զգալի ոյժ են արդարութում։

Կենսագրական նպատակին ծառայող երեք գլխաւոր գեսակներ կան գրականութեան մէջ։ Մէկը վհապական ծեւով ինքնակենսագրականը, որի արժանաւ որագոյն ներկայացուցիչ Դիկէնսի հիանալի «Դաւիթ Կոպերֆիլդն» է և Լեւ Տոլստօվի «Մանկութիւն», պատանեկութիւն ու երիտասարդութիւնն։ Այս գեսակի և խկական կենսագրութեան մէջ գեղն է բռնում Գէօթէի «Մ կեանքի ճշմարդութիւնն ու բանասպնդութիւնը» շատ բազմակողմանի ու խորացննին երկասիրութիւնը։ Մեր խօսքն այսպեղ, ի հարկէ, այդ գեսակների մասին չէ, որոնց միայն առաջինը չնորհիւ իր վերին աստիճանի թարմ ու հրւթալի բնաւորութեան՝ մանկական գրականութեանն ևս նւիրել է բազմապիսի գեղեցիկ փոխագրութիւններ։ Որքան կենսական ոյժ կայ այդ գրւածքում, որ հազարաւոր էջերի աննըշան քամուքին էլ, յիսուն երեսնոց գրքոյկին էլ, կեանք ու արել է դաշիւ։ Կենսագրութեան գլխաւոր նպատակը, ասում է Գէօթէն,

«մարդուն նրան ժամանակակից» հանգամանքներում ներկայացնելն է»:  
 Հեղեաբար առանձին նոյն խակ հանճարաւոր անհափի կենսագրութիւնը թերի է; երբ նրա շրջապատող կեանքը, ինչպէս այդ պահանջում է վիպասանութիւնն էլ անորեծ է՝ առնւած կամ թերի նկարագրւածի ծաղանդն ու հանճարն էլ իրանց ժամանակի արդիւնք են: Նրանք օժգուած լինելով իւրացոցման ու մշակման հսկայական ոյժերով՝ արտաքոյ կարգի կերպարանագոխութեան են ենթարկում իրանց մակակարարւած նիւթերը: Բայց, ի հարկէ, այդ արտակարգ իմացականութեան շնորհով նրանք մի քայլ էլ ժամանակից առաջ են անցնում, ու այնպիսի իդէաներ յայտնագործում, այնպիսի մեծագործութիւններ են կագարում, որ եփնորդները միայն պատմական կեանքի բնական բերմանը՝ շատ անզամ բոլորովին նրանցից անկախ՝ հասնելով նոյն ասդիմանին, նոր վրահասուն լինում այն ոգիների մեծութեանը: Այս ընդհանուր գեսակէփից անցնելով մանկավարժականին՝ մէջ բերենք Եր. Հ. 1.իցի մի կարևոր յօդւածից<sup>1)</sup> հետևեալ հարւածը. Ո՞րքան ուսուցիչներ կան արդիօք, որ կարող են իրանց համար պնդել, թէ կարող են իրանցից աւելի մեծ մարդու կեանքը գոպաւորիչ ու օրինակելի կերպով պապմել: Արդիօք կարող են նրանք այդ բանն աւելի լաւ անել՝ քան ինքեանք այն մարդիկը, որոնք մեծ մասով իրանց անզին իւրապատում կենսագրութիւններն են մեզ յետ թողել: Որքան էլ որ մեծ կասկածանքով վերաբերւէին «մեռած» գոտին, որքան էլ որ վենդանի խօսքին» առ երևոյթս նախամեծարութիւն գոալու իրաւունք ունենալ կարծէին, այնուամենայնիւ, մեր փորձառութեան համաձայն, գրած խօսքը միջին ու բարձր գաստրանների վրայ յաճախ աւելի զօրաւոր ազգեցութիւն է գործում: Զէ որ հէնց զեռահաս սերունդն է, հէնց մանուկն է, որ ամենից աւելի զգացուն սիրու ունի զէպի ամեն մի մեծ, ազնիւ, պանչելի բան. հէնց նրանց ամենից հեշտ է ոգեւորելը: Ապա շարունակելով նա ասում է, որ կենսագիրը կարող է միայն այն գէպքում խոր ազգեցութիւն գործել, երբ նա ուղեակ է մեծ մարդու ամբողջ կեանքին և ոչ թէ նրա կեանքի միայն առանձին գծերին: Ըստ լարւած մոքով ու հետաքրքրութիւ-

<sup>1)</sup> Այս ազրիւրն էլ վերջը կը նշանակւի

նով հեղաւած պէտք է լինի վեր առած կեանքի զարգացման ընթացքին, ականափես եղած լինի նրա շար փորձերին, թէ աջողութիւններին և թէ անաջողութիւններին, թէ նրա ջանքերին, հոգսերին և թէ ուրախութիւններին...

Հիմա դառնանք մեր աղքափ կեանքին և հարց առաջարկենք, թէ արդեօք պոել է նա մեզ այնպիսի նշանաւոր անձնաւորութիւններ, որոնց կեանքը կրթիչ արժէք ունենար դեռահաս սերնդի համար Այն, կը պարապանեմ ես. այդ մարդիկը գոյութիւն ունեցել են և ունին, բայց նրանց ցանկալի կենսագրութիւնը՝ ոչ թէ քաղաքակիրթ աշխարհներում գործող երեելի անհարներն ապշեցնում են մեզ իրանց հիանալի կեանքի մեծամեծ հնարագիրութիւններով, խորախորհուրդ իդէաներով, բարձր ձգրումներով, այնուամենայնիւ մեր նշանաւոր գործիչներն էլ կարող են այն տեսակէտից օրինակելի լինել, որ նրանց կեանքը հարկադրւած է լինում ասիական աներեւակայելի խոչընդուների դէմ մաքառելով զգալի արդիւնք առաջացնել: Եթէ նրանց մոքի ու սրբի արգաղրութիւնները համաշխարհային հռչակ վայելողների հետ համեմարտութեան էլ չկարողանան զրւել, նրանց բնաւորութեան ոյժն ու բարեբարոյ կեանքը կարող են ազգել գեռահասի ներքին աշխարհի վրայ: Մի Աղիշտանի, մի Պուշեանցի, մի Աղայեանցի կեանքը հայ պարանու համար բոլորովին այլ խորհուրդ ունի քան նենեամին Ֆրանկինը, Պետրալոցցունը, Գէօթէինը... Հայի զաւակը, հայրենի խեղճուկ ու խաւար կեանքի այդ արտադրութիւնը, կարդալով առանց այն էլ լուսաւոր աշխարհի ըուսաւորու ասպղերի կենսագրութիւնը և ապա գարձեալ այդ մութ ու յուսահարական կեանքի հոսանքին դառնալով՝ պէտք է որ բնականաբար նրա աչքերը շլանալին՝ շրջապարող թանձր խաւարի մէջ խարխափելու սփիպելով, նրա վրայ պէտք է որ մի տեսակ վհապութիւն գար այն և իւր հայրենի կեանքի մէջ խոր վիհ տեսնելով Միթէ հնարաւոր է անցնել, վեհերու սրբով կը մոմուար նա: Այն, մի վհագիր, սիրո կրայինք նրան, ով դու եռանդուն պարանի. գլուխութիւն մեծ գործիչներին, ահա նրանք ձեռք են մեկնում քեզ, ճանապարհ են ցոյց գալիս: Այդ մարդիկը երբէք չեն վհափել ու չեն վհափում. ժողովրդի յառաջադիմութեան ծառայող սուրբ սէրը նրանց միշտ յառաջ և յառաջ է մզել:

Ընդունակ այդ նւիրական շաւիղներից այն, որը սրբիդ մօս է, գնա այդ ուղղութիւնով և դու կը տեսնես, որ նա էլ քեզ լոյս աշխարհ կը հանէ: Համոզւիր, մենք կը յորդորէինք նրան, որ այդ փշոս, այդ բազմորդել արահեպներով զգալի արդիւնք առաջացնող մեր գործիչն էլ քի: հիացման արժանի չէ:

Բայց արդեօք այդպիսի խրախուսական կենսագրութիւններ արդէն պարաստել ենք մենք, — ահա հարցը: Եթէ մինչև անգամ մանկական հմուտ կենսագիրներ էլ ունեցած լինէինք, այդ մարդիկ անձարացած պիտի մնային, երբ գրի: վեր առնելու լինէին՝ ազգացին երևելի անձերի պականեկական ու նամանաւանդ մանկական կեանքի գլուխ սու երագիծը ներկայացնելու համար: Մեր ծնողների տգիսութիւնը մի կողմից, մեր կենսագրելի անձերի անփութութիւնը միւս կողմից, պատճառ են եղել, որ այսօր միայն շատ աննշան ու կցիրուր գեղեկութիւններ են մնացել մեր կենսագրական գրականութեան մէջ: Խնչ գիտենք մենք օրինակ Արովեանցի, Նալբանդեանցի, Շանշեանցի, մեր դեռ երեկւաց այս գործիչների կեանքի արշալոյսի մասին: Բարոյական պարտականութիւն ունին մեր նշանաւոր գործիչները իրանց բեղմնաւոր կեանքի այդ խորհրդաւոր շրջանի նկարագիրը դեռահաս սերնդին ժառանգութիւն թողնելու:

Մեր ժամանակակից գործիչներից ամենից լաւ կագարեց այս պարտականութիւնը պ. Ղ. Աղայեանցը Առործնում: Ապա պ. Պաօշեանցը իր Յուշիկներւով սկսեց նոյնը, բայց իր գերդաստանի ծագման ազնւականութիւնը ապացուցանելու հետամնութիւն ցոյց դալով մի գեսակ սխալ սկզբնաւորութիւն արեց: Բայց և այնպէս, այս մասը մի կողմ թողնելով՝ ընթերցողն այս գրքում կարդում է հեղինակին և նրա ժամանակակից նշանաւոր գործիչներին վերաբերեալ բաւականին հետաքրքրական գեղեկութիւններ: Ցանկալի էր, որ մի գնահատող մեկենաս գտնեէր, այս կենսագրութեան շարունակութիւնն էլ տալագրել տար: Մէկի կենսագրութիւնը պետք է ցոյց տար հայ պատանուն, թէ ինչպէս գեղջկական խեղճուկ ու խեղդուկ կեանքից ինքնաշխագութիւնով հսրզհեգուէ հայրենի մրաւոր հորիզոնի վրայ բարձրանում է մի բազմակողմանի տաղանդի դեր մարդ, միւսինը պէտք է ցոյց տար, թէ ինչպէս նոյն հանգա-

ամանքների դէմ մաքառելսվ ժողովրդի սրբից ու հոգուց խօսող մի խնքնարիսկ Պոօշեան է առաջանում, մի բեղմնաւոր Տաֆֆի, մի հայրենասէր խօսնակ ու աշխարութեան հսկայ Ալիշան, մի կամքի ներկայացուցիչ ու անձնւէր Գ. Արծրունի:

Լուսաւոր աշխարհների երևելի անձերի կենսագրութիւններն աւելի վաղ գրաւել են մեր արևմտեան հայրենակիցների ուշագրութիւնը, բայց ժամանակի ընթացքում որքան որ արևելեաններիս մէջ աւելացել են այդ կարգի գրւածքները, նոյնքան էլ նրանց մէջ պակասել են<sup>1)</sup>:

Մեր կովկասեան հայ գրականութեան մէջ նորագոյն ժամանակներս լոյս են գումար թարգմանաբար առանձին գրքոյներով Բենիամին Ֆրանկինի, Վաշինգտոնի, Գարվիլզի («Փայտաշէն խրճիթից մինչև սպիրակ լուսնը»), Աբրահամ Լինկոլնի, Ուրբենոեցի մանուկի (նկարիչ Ռաֆայէլի), Զորջ Ստեփէնսոնի, Ալիքրոր Հիւզօ՛ի և Դաւիթ Լիւինգտոնի (Բագու, 1894). իսկ «Աղրիւրում» նոյնակս կարեոր Խոահակ Զէմսի, Անդերսէնի, Ֆիրդուսիի, որոնք գեռարդարապւած չեն<sup>2)</sup>: Արևմտեան բարբառով սրանցից մի երկուսն են հրարարակւել Կուկ նաւապետի և Յովհաննա Դ'Արկի հետ և բացի սրանցից Ալիշանի «Յուշիկներից» քաղաքացներն ու մասամբ նորագոյն գործիչները: Հ. Մինաս վ. Բժշկեանն ու Հ. Մարթէոս վ. Մ. Թէոփիլեանցն էլ ամբողջ ժողովածուներ են հրարարակել, որոնց բովանդակութեան մասին ոչինչ չեմ կարող հաղորդել, քանի

<sup>1)</sup> Բայց այս երեսութը լոկ կենսագրական գրւածքների նկարմամբ չէ որ աչքի է ընկնում. Դեռահամերին վերաբերիալ թարգմանական գրականութիւնը արևմտեան հայերի մէջ մինչև վերջին սուս-թուրքական պատերազմը բարձրանալով հետզհետէ, այնուհետև արագ անկման է դիմում, իսկ մեր կովկասեան գրականութիւնն ընդհակառակը մինչև այդ գարձակէտը վեճեցոր քաղեր անելով՝ ապա համեմատաբար համարձակ ընթացքով լառաջ է դիմում և ալսօր այնպիսի բարձրակէտի է հասնում, ուր երբէք չէր գործել: Բայց չը մոռանանք որ համեմատական բարձրակէտի վրայ է խօսքը: Մանրամասնութիւնները վերապահում ենք թւական զուգակշռին:

<sup>2)</sup> Մասամբ կենսագրական բովանդակութեամբ է Միրզա-Աւագեանի «Աղբէնլի, նրա կեանքը, գիւրերը և վերջին ճանապարհորդութիւնը», թարգմ. (?). Չեռքս զեռ չէ անցել: «Մահմէդի կանքն» էլ նոյնակս:

որ «Հայկական մատենադիպութիւնը» անձերի անուններն էլ չեցիցում։ Հ. Բժշկեանի «Ալբուրենի կարգով և համառօք» խօսքերը գոնէ ցոյց են դալիս, որ առանձին արժէք ունեցող բան չպէսք է եղած լինէին։ Սցվազեան (Արք. Յ.)։ Հրափարակել է նոյնպէսձմի պմբողջ Շեար հայ կենսագրութեանց, ինձ անծանօթ։ Արևելեան բարբառով, բացի վերոշիշեալ ուշագրութեան արժանի և գնահատելի կենսագրութիւններից՝ ինքնուրոյն կենսագրութիւններ պատանիների համար գեռ մի երկու հափ ունինք։ Պարոյր Հայկազն («Աղբիւրում») Շաֆֆու, Գրիգոր Լուսաւորիչ Միրիմանեանցի և Հայոց մեծ վարդապետ Սուրբ Մեսրոպը—Մելեանցի, որոնց մեջ առանձին արժէք ունի առաջինը։ Մելեանցի աշխափասիրածը գրաբար աղբիւրներից քաղլւած բառերով ու դարձւածներով ծանրացնում է ընթերցումը, իսկ Միրիմանեանցինը նորից ձեռքս ընկնելով թարմ պապաւորութիւն չեմ կարող հաղորդել։

Յարութիւն Արարարեանցի կենսագրութիւնը, եթէ կեղծիքէլ չլինէր, իսկապէս ինչ հետաքրքրական բան կարող էր ներկայացնել նոյն իսկ հարցաւուր զարգացած ընթերցողին։ Մենեվիշեանի կազմածը Ալբանեանի լիսնամեակի առիթով գեռ մի չոր ու ցամաք ուրագիծ է, թերևս փափկանկար հանդամոնքների բերմամբ։ Երւ. Շահաղիզի մեղւաջան ու լուրջ աշխափութիւնով տեղն ու տեղը գլուխ հանած նալբանդեանցի կենսագրութիւնն էլ այնու ամենայնիւ մերնապակի համար գրեթէ նիւթեր չունի։ Աքովեանցի (Ն. Տէր-Կարապետեանցի գրած) պապանեկալան կեանքը հայրենիքում և երեւարդական-ուսանողական կեանքը Դորպագում աւելի յուշիներ է թողել, որ գնահափելի ժրաջանութիւնով հաւաքել է նրա կենսագրողը։ Մանկական ու պարանեկական կեանքի նկարագրութեան թերութիւնն ունի նաև աւելի վազ հրափարակւած Յարութիւն ամիրա Աւզճեանինը՝ աշխափութեամբ Ս. Պ. իւ Յովհաննէս հայկակուածանեանցի կենսագրութիւնը, որ հրափարակեց նորերս սրբազնն Արիստակէս եպիսկոպոս Սեղբակեանը, մեզ հետաքրքրով գրականութեանը նոյնպէս համարեա ոչինչ չի դպիս։ Յարութիւնեանցի «Մարտիան Պալասանեանցը» աւելի զարգացած պարանիների ընթերցանութեան նիւթ կարող է համարւել. Խ. Մալումեանի «Մաքի մշակը» նիւթեր կարող է պալ դեռահասների հա-

մար կազմելիք կենսագրութեան, նոյնպէս և Ա. Երիցեան՝ Ներսէս Աշուարակեցու կենսագրութիւնը: (Նոյնը գրած է և Արժրունիների մասին):

Դ. ԴՐԻՔԵՐ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՇՐՋԱՆՆԵՐԻՑ

Մինչև վերջին ժամանակները գիտութեան հռչակաւոր ներկայացուցիչներն ընդհանրապէս իրանց համար մի դեսակ նւասփութիւն էին համարում գիտութիւններն ու երևելի գիւղերը ժողովրդին ու գեռահասին մասնելի ձեփ վերածելը, զարգացման սրորդին խաւերում գտնողներին էլ նրանց հաղորդակից անելը: Այսպահճառով, էլ երկրորդական ու անարժան երրորդական ձեռքելն էին այդ գերը կապարում և այսպիսով մանաւանդ անկոչ գրչակների շնորհով ժողովրդի ու գիտութեան մէջ մի մշուշ էր պիրում: Գիտութիւնը միայն ընտրեալ գասակարգին հասանելի բան էր համարում: Բայց ան երեսոյթն էլ վերջապէս փոփոխութեան ենթարկւեց. ժողովրդին սրբանց համակիր մասնագէտներ, որոնք իրանց մափենադարաններից ու աշխարհանոցներից, հեռագիտակներից ու խոշորացոյցներից դէն մի խաւար, բայց ուսումնաժարաւ օբյեկտ էլ ուշադրութեան առնելու միտք ու սիրու ունեցան, այս անքնական երեսոյթին այլ ևս չկարողացան լուս. ու անդարբեր պիկանագիս լինել: Ինչն և հետ համար է խսկապէս գիտութիւն, արւեստ. հապա հետ բարօրութեանը պէտք է նրանք ծառայեն: Միթէ պէտք էր բաւականանալ ուսումնարանի աւանդածով, որ հազիւթէ ներշնչւած է լինում հարցասիրութեան ոգւով: Եւ սկսեցին ժողովը դական-գիտական գրքեր լոյս դեսնել, բացւեցին ժողովրդական համալսարաններ, ինչն նախապաշարումների թանձր քողը պակառելով: Եւ ահա ընական գիտութիւնների ժամանակակից ուժեղ հոսանքը նախ այս շրջանից հեղինակաւոր մասնագէտների ձեռքեր շարժեց հմտալից ու մանկավարժական տաքսիով ժողովրդական ու մանկական գրքոյներ հրաժարակելու: Հ. Վագներ, Կրեակին, Ամիլէս, Ֆոլլը՝ Գերմանիայում, Գարւին, Հեգուլի, Ֆարագէյ<sup>1)</sup>, Գայկէ՝

<sup>1)</sup> «Մոմի բնապատմութիւնը, որի մէջ շաղկապւած են բոլոր բնական գիտութիւններից վերառած ամենահետաքրքրական իրերն ու երկողթները. Այս գրւածքն էլ ուսուերէն թարգմանւած է:

Անդլիայում, Ֆլամարիօն Ֆրանսիայում՝ հիանալի արդիւնք առաջցըրին և այսպիսով ապացուցին, որ պարզ ձեմի վերածւած գիտութիւնն էլ կարող է իր պարփառելի բարձրութեան վրայ մնալ: Բայց երբ գիտական գրքոցկը՝ փոխանակ իր իսկական նպատակին ծառացելո, «մի ձեռքով երկու ձմերուկ բռնել է ուզում», այսինքն՝ երբ այսպէս անւանեալ բանաստեղծական» նկարագրութիւններով համեմում են բնական գիտութիւնը ու երբեմն էլ կրօնական զգացումների ջերմեռանդ արդաշայտութիւններ են մէջ բերում, այն ժամանակ այդպիսի գրւածքը միայն ընթերցողի սիրուլ պազեցնելուն է նպատում:

Ժողովրդի և գեռահասի համար աշխարհակրւած գրքոցիները պէսք է քննութեան առնել նաև բովանդակութեան ճշգութեան դիսակէտից, ապա գետնել, թէ արդեօք ացդ նիւթերը լիակապար արժէք ունին և թէ վերջապէս նրանց մշակութիւնն այնպէս համակերպւած է ընթերցողների պահանջներին, որ նրանք հետաքըրքը բարձրութիւնով կարգացին: Քիւնէրը, որ Նմիզի մանկավարժական հանրագիտարանում հեղինակաւոր գրչով մշակել է գեռահասների ազատ ընթերցանութեան խնդիրը, գիտական մանրամասնութիւններ չի պահանջում, եթէ դրանք մինչև անգամ շատ էլ հետաքըրքը պահանջում ու զբոսուցիկ լինէին. միայն ճշգրիտ մեծը և ոչ թէ նորանշանը (կուրեօզը) նա արժան է համարում մակարարել. միայն փորձւած ճշմարտութիւնը և ոչ թէ երկբացականն ու ենթադրականը, ըստ նրա կարծիքին, պեղ պէսք է բռնէ գեռահասների գրականութեան մէջ:

Անարւեստ գրչակիները շարունակ գտադանում են մի կողմից գիտական ծանր բնաւորութիւն կրող նիւթերի և միւս կողմից չընչին նկարագրութիւնների մէջ: Նրանք կամ շատ բան են պահանջում գեռահաս ընթերցողից, կամ՝ ոչինչ: Առանձին նկարագրական հմտութիւն է պէտք, որպէս զի գործիքների, կաղապարների, նիւթերի, փորձի ու շատ անգամ էլ պափկերների պակասութիւնն այնքան էլ զգալի չը լինի: Անվարժ գրողները կարծում են, որ մինչև անգամ զանազան հեղինակներից մէջ բերւած հարս ածները, ծանօթութիւնները (ցիտարները) կարող են մանկական գողովրդա-

կան գրքոյների համար անպատշաճ բան չհամարւելի Զարգացումով տհաս ընթերցողին խօսքի անարգել ընթացքն է գրաւում, իսկ միջանկեալ տարրերը արգելքներ հանելով տհաճութիւն են պատճառում:

ա. Բնական զիտութիւնները: Որովհեփեւ Վագներն ու Կրեպելինը Գերմանիացում իբրև օրինակելի բնագէտ ու բնապատշում գրողներ առանձին ուշադրութեան են արժանացել, արժէ տեմնել, թէ նրանց երկերն ինչ առանձնացագրութիւններ են ներկայացնում:

Նախ մէջ բերենք Համբուրգի մասնաժողովի օժանդակութիւն գեռահասների գրւածքների քննադարութեան համար՝ 1896 թ. մենագրութիւնից հետևեալ բողերը.

«Վանգէրն առարկաները զննում է ոչ թէ իրանց շրջակայքից մեկուսացած, այլ իբրև ամբողջի մասեր: Նա իր փոքրիկ ընթերցողներին չի ձանձրացնում ոչ համակարգութեամբ և ոչ էլ խիստ գիրական հետազոտութիւնով: Միւս կողմից է, նա հեռու է մնում վայր ի վերոյ նկարագրութիւններից: Նա Սովելծողին ոչ մի մեծաբարբառ խօսք, ոչ մի մեծահնչիւն գովասանք չի շռայլում, և սակայն նրա իւրաքանչիւր բողեց տեսնում ենք, թէ ինչպէս ամեն բան իմաստուն կերպով է սահմանւած: Նա երթեմն կափակի և սիրալիր ձևերով է իր նողագրակին հասնում, ու, մին էլ տեսնես, ուղերդութեան ժամանակ նկարագրութիւնն ընդհագելով՝ մի հետաքրքրական բան է պատմում, օրինակ՝ այսպէս սկսելով. «Կարչկար միշ... կարծես թէ նա հէքիաթ պատմելիս լինէր: Մանուկը ջերմեռանդ սրբով ականջ է դնում, որովհեփեւ հէքիաթ է թւում նրան այն, ինչ որ Վագներն ասում է, բայց սակայն կախարդւած թագաւորազունների մասին չէ խօսքը, այլ պատմում են այնպիսի բաններ, որ ամեն օր մանկան աչքի առջևն են <sup>1)</sup>: Վագները գու-

<sup>1)</sup> Նա, օրինակ արեի, ու երկրի աներեակայելի տարածութիւնն իր փոքրիկ ունկնդիրներին հասանելի դարձնելու համար՝ նրանց հետ զէպի արեը երկաթողով ուղերդութիւն է անում և հաշում, որ աւդ փոքրիկ-ները զաւակ կ'ունենան, մամ ու պապ կը դառնան, նրանց թռռներն էլ նոյնպէս և ալբակը 300 դարի անցնելուց եւրոք միան տեղ կը հասնին:

ցէ Կրեպելինից եւր մնար ռժամանակակից գիտութեան դեսակէտից, բայց բնութիւնը բանաստեղծօրէն ըմբռնելում նրան ոչ ոք չէ գերազանցել:

Կրեպելինն իր «բնական ուսմունքը դան մէջ» դրւածքում պրամախօսութեան (զիալոդ) ձևն է ընտրել: Արելի և մէկն ի մէկ օդարորի թւայ, որ նա մի ձև է վերընդորում, որ համապէն իր Ռորինզոնի համար նպաստակայարմար էր համարել և որից վազուց ձեռք են վերցրել: Բայց սակայն Կրեպելինը այդ եղանակն ընտրելով մի աջողակ միջոցի էր դիմել. որովհետեւ այն, ինչ որ պարմական նիսթերի համար աննպատակայարմար է համարում, կարող է բնական գիտութիւնների շրջանից վերցրած նիւթերի համար գերազանցօրէն օգտակար լինել, և որ այդ այդպէս է, հեղինակն ապացուցել է... Երեխաններն են, որ իսկապէս առաջնորդում են խօսակցութիւննը. նրանք փոխադարձաբար իրար հազորդում են իրանց գիտողութիւնները, միմեանց ուսուցանում են հայրը նրանց միայն դրդում է, մասածելու նիւթ է մարտակարարում, այս ու այնպեղ, երբ հարկէ լինում, լրացնում և ուղղում է: Նկատում է, որ հեղինակն ամենուրեք յորդառապ աղբի րից է քաղում, բայց և այնպէս բարձր է պահում այն խօսքը, թէ վարպետը սահմանափակութեան մէջ է երեւում: Տեսնում ես, որ նա ոչ միայն գիտնական է, այլ և մանկավարժ, որ ուսումնարանում է գործել: Խնչողէս գիտէն նա նուրբ կերպով որոշել դասնուվեց, դասներեք կամ դասը դառնեկանի մրացը ջանները: Խնչողէս հմրալից կերպով նա իր ունկընդիրներին առաջնորդում է դէպի ուղիղը՝ առանց նոր ուղք ելնող մանուկների պէս նրանց ձեռքից բռնած դուրի-դուրի ման ածելու...»

Ես էլ այս երկու հեղինակների դրւածքներից մօդաւորապէտ նոյն պատորութիւններն արացայ, միայն թէ Կրեպելինի վերոյրշեալ գրւածքից չի երեւում, որ երեխաններն են պրամախօսութիւնն առաջնորդում ոչ, այդ գերը կարարում է մեծ մասով նրանց հայրը (հեղինակը), իսկ նրանք հօր հետ նորանոր հարցումներ են առաջարկում և իւրաքանչիւրն իր խելքի կտրածի չափ մասնակցում է վիճաբանութեանը ու ճշմարտութեանը հասնելուն նոդասւում: Վաղները աւելի գունազեղ մանրանկարներով, զեկցիկ դարածներով (օրինակ Շնէպի բնութիւնը՝ դրւածքում) նախ սրբինձ

ու ապա գտափողութեանն է մօպենում, իսկ Կրիպէլինը՝ մրցողութեան ոգին հրահրելով, սրում է գտափողութիւնը, վառում է հարցափրութիւնը աննշան։ Թւացող իրերի ու երեսչնորի վրայ սանիկների մանրազննին ուշադրութիւնը դրաւելով։

Անցեալ 1898-թ. Կիբեպէլինի վերոյիշեալ գրւածքը սուսերէն թարգմանւեց<sup>1)</sup>, բայց „Յօսպիտանի և օցանութեան համար կամաց աշխատանքան ձեւ հաւանութիւն չուեց այն հիման վրայ, որ դրամախոս անձերի անուններն այս գրւածքում էլ դրամափեկականի սկզբ խանգարմունք ու դհաճութիւն սիրուի պատճառեն։ Բայց չէ որ երբ 2-3 երեխաններ իրանց փորձառութիւնները, տարակոյսները, կարծիքները մէջ են բերում, նրանքիրանց հասակակից ընթերցողներին էլ մրցնում են այդ զերերի մէջ, նրանց համանման մկուապափերների շարքերին էլ վերարդարւելու առիթներ ներկայացնելով։ Դասագուներից շապէրը այս բանը փորձած կը լինեն ընթերցանութեան դասագրքերում գեղագեղ ընկունւած բնագիտական յօդւածների վրայ, որոնք դրամախոսական ձեր վերածւելով աշակերտներին կարծիս երեակայութեամբ մասնակից են անում այդ վիճաբանութիւններին։ Արժէր հայերէն էլ թարգմանել այս գրւածքը<sup>2)</sup>, որի սպարութեան պատճառով բազմակողմանի հետաքրքրական յօդւածներից կարելի էր օրինակ հնդկեալ ընպրութիւնն անել. Սարդի կիանքը ջրի յարակում ու սենեակում։ Եւեղական լուցկիների առանձնացարկութիւնը և սովորականները. Օճառ սպարաստելը, Թիթեանիկի ձմեռելը, Մկների գաղթելը, Մարգու և մի քանի կենդանիների մկաւոր կեանքի համեմարու-

<sup>1)</sup> Տնօղերս գրելուց լեռու նուն հանդիսում կարդացի ակա դրւածքի մի նոր թարգմանութեան գրախօսութիւնը. Առաջին թարգմանիչ Կ. Պ. Տիխոսիրով բնագրի անունն խկութեամբ է թարգմանել. — Այս գույքը թարգմանութիւններին էլ առաջ չի համարում թերութիւններից, սակայն թէ ներքին և թէ արդարքին լարկութիւններով աւելի բարձր է դասում. Վերջին թարգմանութիւնը, որ պարկերազարդ է, 184 էջ ունի, դինը 1 ո. 50 կոպէկ։

<sup>2)</sup> Հասդար չգիտեմ, բայց կարծում եմ որ Վաղների գրւածքներն էլ ուսուերէն թարգմանւած պէտք է լինին։

թիւնը, Յոյսերի շարժումը, Զկների քունը, Սունկերի դերը օրգանական աշխարհում...:

Այս գրւածքներից զափ գնահավաւած են Գրուբէի Բնական պատկերները, Երէմ'ի Կենդանիների կեանքը, Հ. Մաղիուս՝ «Բոյսերի ու կենդանիների պետքից, Չուզին՝ «Ալպեան աշխարհի կենդանիների կեանքից»։ Բացի սրանցից նրենդէլի «Պատմածքները կենդանիների կեանքից», Խոյմէրի «Աւզեորութիւնը կենդանիների աշխարհում», Շոփէլէրի «Կենդանական պատմածքները» հին ու նոր ժամանակներից, Կառլ Խուսինի «Սպառ բնութեան մէջ» և անդուհի Արարէլլա Քոքլի՝ «Գիրութեան թագաւորութեան դիւթական թագաւորութիւնը»։

Համաշխարհացին մարենադարանական վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ աւհասարակ ժողովուրդը բնական գիտութեանց վերաբերեալ զրքեր քիչ է կարդում, որ այդ քանակութիւնը համեմագել չի կարելի բելեադրիսդականի հետ և չոլէպը է էլ համեմագւիս։ Սակայն եթէ այդ գրքերը հեղաքրքրական նիւթերի հետ նաև գրաւիչ ձևերով մշակւած լինուին, անշուշպ աւելի հարցասիրութիւն շարժած կը լինէին։ Այսպիսի գրւածքներ կազմողին հարկ անհրաժեշտ է թափանցել Վագնէրի ու Կրեպելինի երկասիրութեանց ոգու մէջ։

Մեր գրականութեան մէջ գո՞նէ ինձ յացնի չեն արևմրեան բարբառով հեղինակաւոր բնագէպների երկերից թարգմանութիւններ իրեւ հաւաքական աշխագութիւններ յիշապակութեան արժանի է նորոգ հանդուցեալ Գալուստ Կոստանեանի Զմիւռնիայում 1858 թ. հրատարակած «Թանգարան հասարակաց» (Bibliothéque populaire) 16. հափորներից բազկացած աշխագութիւնները, Վիեննացի «Մարմադարան» կրթական և զբոսալի գերբակաց մէջ մի քանիսը և առանձին լոյս դեսածները։

Մեր արեւելեան գրականութեան մէջ հեղինակաւոր գիտնական ների ժողովրդական գրւածքներից թարգմանել է Ի. Յարութիւննեանցը Հետքուի «Տարկեք բնական գիտութեան», մի առանձին քիմիա հետաքրքրաշարժ բովանդակութիւնով ու մեթոդով. Տ. Ցով հաննիսեանը՝ յացնի Ֆլամարիոնի «Ասպարաշլութիւնը», Լ. Մելիք Ազամեանը՝ Զ. Դարւինի «Աներեւով հողագործը կենդանաբա-

նութիւնից՝ շատ հեղաքըքրական բովանդակութիւնով։ Եթէ բնական զիգութիւնների զանազան ծիւզերից թարգմանւածները համախմբենք, վերոցիշեալներից զատ կենդանաբանութիւնից ցիշելու ենք պրոֆ. Բողդանովի «Խժոռողները», թարգմ. Լ. Մ. Աղամիանի։ Նոյնի «Թոչունների աշնանացին գեղագույնութիւնը» և «Բնի ու ձուի որսը» միասին կազմած, թարգմ. օր. Ն. Օհանեանի՝ բաւականին հեղաքըքրաշարժ գեղեկութիւններով, Ս. Կուզնեցովայի «Զարմանալի որդը», թարգմ. Ն. Ղուլիջանեանցի։ Երամի կեանքն հեղաքըքրական ձևով նկարագրւած է այս գրքոցում, որ—թեթև լեզով է թարգմանւած։ Վ. Լունկուիչի «Կենդանիների աշխարհում», թէեւ հարեանցի, բայց հեղաքըքրական երեցիներ է բովանդակում։ Նոյնը գրել է նաև «Հանրամատչելի բնախօսութիւն» Թ. Հ. Հ. Բ. «Հանրամատչելի գիտական գրադարանին» շարայրւած։ Ալեքսանդրապոլում վերջերս Տ. Պաշմանեսնոց և Ա. Զիլինկարեանց ձեռնարկել են միացած ոչքերով բնական գիտութիւններից մի շարք գրքոյների հրադարակման։ Մինչև հիմա լոյս են տեսել «Կենդանիների բնագգը», թէ նիւթի և թէ մշակման տեսակէցից ու շաղրութեան արժանի, ապա «Մեղուներն» աւելի ընդիր, իսկ երրորդ գըրքոյկը ձեռքս չհասաւ։ Մամուլի դակ են ու պարբասփ են նաև ուրիշները բազմակողմանի բովանդակութիւնով։

Բուսաբանութիւնից, որքան հաւաքածս նիւթերից գոնէ երեւում է, միան երկու գրւածք ունինք։ Էլենշտայնի «Ծաղիկ ու պլուզ», շնորհալի գրչի արդիւնքը Մելիք Մուսեանի թարգմանութեամբ, և լար Ֆիգեի «Բոյսերի կեանքը», թարգմ. Ս. Բ.։ Բոյսերի արյագին գործարանների մասին հեղաքըքրաշարժ գեղեկութիւններ է դալիս, միան թէ թարգմանական դժւար բառերը ծանրացնում են հասկանալու գործը։

Որքան որ զուր կենդանաբանական գրւածքներ ենք թարգմանել, համարեա նոյնքան էլ թելլետրիստրական ձևով նկարւած պատկերներ ունինք կենդանիների կեանքից։ Մրանց մէջ առաջին գեղը կարելի է դալ Աւենարիուսի «Թաւամազ մեղուին», թարգմ. օր. Ն. Տէր-Մարկոսեանցի, ապա Սլիվիցկու «Խորամանկ աղւէսին», պ. Պոչշեանցի ընդիր ու հայացրած թարգմանութեամբ, կարծես հէնց ինքն է հեղինակել։ Ա. Նեղդանովայի «Մուկուչի հաւիկը» կենդա-

բռնացումից գուրկ է, քանի որ խսկապէս աւելի աղւէսի քան՝ Մուկուշի և հաւիկի կեանքն է նկարադրում Խսկ ինչ վերաբերում է նոյն՝ Սլիվիցիու Շնապաստակն ին խսկապէս ոչ բնապարմական և աչ էլ բելեպրիապական դրւածք է, այլ երկուսի մէջ առկան մնացած։ ուստի և ոչ մի և ոչ միւս կողմով տպաւորութիւն կարող է գործեր

Բելեպրիապական ձեռվ ընազիտութիւնից էլ ունինք մի գըրւածք՝ Գրուբէի «Ձրի կաթիլի պարմութիւնը», թարգմ. Մոսկւացի Հ. Ա. Գ. և Շառ դասագրքերում ընդունած լազրնի յօրւածներն երեխ սրանից են քաղւած։ Զուր բնադիպական զբքոյներ հրապարակւցին Պետերբուրգում Մելիք Մուսեանցի թարգմանութեամբ՝ «Անձրւ և ձիւն» Փիվալովսկու և «Տաքութիւն և օդ», հեղ (?)։ Գ. Զաքարեանն էլ դրել է «ջուրը», որ նոյնպէս արժէր կարգալ, թէե այդ երկուսի պէս թեթև չէ։ «Անձրւ և ձիւնը» երկբայական տարրերից աղապ չէ, մշակումն էլ սեղմբեղ անկապար է, իսկ «Տաքութիւն և օդը» գերծ չէ անձշութիւններից։

Նըկըաբանութիւնից ու աստղաբաշխութիւնից էլ թարգմանւել են յացանի սուս ժողովրդական գրող Խուբակինի «Ձրոյցները ընութեան մեծ ու ահեղ երեսիցների մասին», թարգմ. Մ. Տ. Անդրէասեանցի, մի ընտիր գրւածք. և Խունինիչի «Երկրաշարժ և հրաբղխացին լեռներն» ու «Երկրի ու երկնքի մասին» գրւածքները, երկու սն էլ Գիւլ Նազարեանցի թարգմանութեամբ։ Զեռքս անցել է առաջինը, որի նիւթը շատ հետաքրքրական է, բայց ա. կիսում, որ ներածութիւն է կոչւած, օրինակները շատ են կուպակւած։ Թարգմանական գժւար հատկանալի բառերը քիչ չեն և սեղմբեղ նոյն իսկ գրաբառամոլութեան պէս մի բան է աչքի ընկնում, թէե թարգմանցին կարծեմ այդ բանից հեռու մարդ պէտք էր կարծել

Ինչ վերաբերում է արևսատներին, մեր ոչ մանկական և ոչ էլ ժողովրդական գրականութիւնը նրանց մասին գաղափար է պւել Մինչզեռ, ինչպէս այլ առիթով տեսանք, նրանք քաղաքակրթութեան շօշափելի դարբեր լինելով՝ անդես չպէտք է առնւեն։ Շար թերի կը լինէր մեր աշխարհացեացքը, եթէ գաղափար չունենացինք դոնէ ամենազործածական ու հետաքրքրական արտագրութիւնների մասին Միթէ քիչ թէ շապ զարգացած մարդու պարտականութիւնը չէ բաւարարութիւն դալ մանկան օրինակ հեղեւեալ հարցելին, թէ

ինչպէս են շինում թուղթը, ինչից և ինչպէս ապակեղէնը, շաքարը, օճառը... Հարց է, թէ ինչնւ մարդիկ շատ բնական բան են համարում պարմատթեան, աշխարհագրութեան, լեզուի դասագրքերում կցկոուր սեղեկութիւններ տալ այդ մասին, իսկ կապարեալ գաղափար պալը՝ ոչ ԶԷ որ արւեստները ծառայում են բնական գիտութիւնների գործագրութեանը, նրանց վերջնական նպատակին Կան նիւթեր, որ ուղղակի կարելի էր միացնել այս կամ այն բնագիտական, քիմիական, բնապատմական գրւածքին, կան էլ՝ որ արժեր ու ալէպէ էր առանձին մշակել:

(Ա.ԵՐԳԸ ԼԱՂՈՐԴ ԹՎՈՒ)

# ԱՐԴԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԵՐ

ԾԱՆԹԻ

## ԳԵՐԱՍՆ ՓՈՒՆՁ ՄԸ

(ԱՐՁԱԿ ԵՐԿԵՐ)

I

Քեզի, դէպի քեզի կը թռչի հողիս:  
Դարնան շունչին մէկ նոր նւէրն է այս: Ու քու շունչիգ նւէ-  
րին կը տենչամ, որ գարնան ալէս թարմ է:

Երթունքներս կը կծկին օդին մէջ քուկիններդ փընդուելով,  
քան շրթունքներդ: Ախ, կ'ըզգամ, ինչ ջերմ անոնց փափուկ ու  
ամուր շոյանքը, ինչ զինովցընող այդ համբոյր-գինին, որու մէկ  
ումզին ամբողջ արիւնս է ծարաւի:

II

Կարծես մատներուս դակ կ'ըզգամ զեռ քու դաք ու ոզորկ  
դաստիդ, որ աջնակս ալինդ կը սեղմէի ափիս մէջ երէկ իրիկուն  
կը սեղմէի, ու դուն կը քրքջացիր եկրորդական դէպք մը քեզի  
պատրուակ առած:

Եթէ զիտնաս ինչ ազւոր կ'իր դուն այդ պատրւակի թափան-  
ցիկ գիմակին դակ. ինչպէս յափշտակիչ այդ ամընալու, կեղծիքի,  
համոյքի ու հալարպութեան իրարու հիւսւած ցանցին մէջէն:

Եւ ինչպէս ակամայ ցունց կու դար դաստակդ մատներուա  
վայրի մնշումին դակ: Ե՛, այդ ցընցումը, որ կարծես ընդմիշպ  
ափիս մէջէն մոոցւիլ չուզեր. չուզեր, և ինչու արեմ, ևս ալ չեմ  
ուզեր:

## III

«**Ինչու** կը նայիս ալդակս երկար աչքերուս».  
 Կը հարցնես ու կը ժպրիս. կը ժպրիս ինքդ քու հարցումիդ վրայ:  
 Այս, զուն, խորամանկ անուշշիկս, շգիպմս թէ ինչու. կը նայիմ:  
 այդուս երկար, այդպէս գերւած քու խօսնեն, քու խելացի, քու  
 անձնագուր կայծկլտուն աչքերուդ:

**Զգիրես.** Թէ իմ բերնես լսել կուզես Զէ, աղւորս, շրմունք-  
 ներէս ալդ չես լսելու. այդ հաճոյքը չեմ դալու քեզի:

Պաղասխանս մշչքերուս մէջն է:

## IV

Այդ որշափ, որշափ բան կը պահւի եղեր քու փոքրիկ, կա-  
 կաչ հովանոցիդ դասկ:

Այդքան ժպիր, այդքան նայւածք, այդքան սեղմում ու քըն-  
 քընանք. այն ալ երկու խայտացող սրբերու, որոնք կից իրարու-  
 մուտիկ իրարու զարկի ականչ դրած նոյն դաքուովը կը թրթռան:

Թող արել հարիւր դիրք փոխէ, թող զայրոցթէն ամսերուն  
 դասկ մինէ ու ելնէ. իզնւր. ներս թափանցել պիտի չի կրնաց քու  
 փոքրիկ, կակաչ հովանոցէդ. ոչ ան՝ արել, ոչ ալ անոնք, որ մեր  
 եղուէն կու դան իրենց խօսակցութեան աղմուկին հետ:

Մենք չենք խօսիր. կը փափանք միազն Ահ, այդ սեղմ, մակ-  
 րիմ փափսուքը շունչ-շունչի, աչք-աչքի քու փոքրիկ, կակաչ հո-  
 վանոցիդ դասկ:

## V

Ալ նայէի պապկերիդ. ակամայ ծուեցայ ու պագի: Ա՞չ գիրէ  
 որշափ խնդայիր պիտի, եթէ հիմա քովս լինէիր:

Պիտի խնդացիր, ու շրթունքներդ բացւէին պիտի իրենց աղ-  
 ւոր ժպիտին կոկոն բացւածքովը:

Բայց ոչ. դուն խնդալու չեիր, դուն չեիր կրնար խնդար, եթէ  
 հիմա քովս լինէիր:

Հրահրած թուշդ ժպիտէն աւելի լուրջ զբաղում մը պիտի ու-  
 նենար իմ շրթունքներուս դասկ. ու ժպիտի բաց կոկոնին սեղ՝  
 համբոյրի գոց ու դոզդողուն կոկոնը պիտի ծլէր դունչիդ:

Եւ կոկոններու ացդ թեթև ազափոխութեան վրայ, գիտքս,  
ես որշափ պիտի խնդացի, եթէ հիմա քովս լինէիր:

## VI

Եկուր փուինք նորէն խոփերուն մէջ լեռան շեղ լանջին վրայ,  
ուր մամռու ժայռերուն բեկորները հողին կու ճքը կը ծակծըկէին,  
ու վայրի վարդերուն ցիր-ցան թուփերը գեղնին երեսը կը ճան-  
կըռպեն:

Եկուր, ու փոյթ չէ, թէ կուղես, զուն սուպ-քուն եղիր նորէն:  
Վայրի վարդերուն փուշերը դուն հոգդ մի՛ ըներ, ու մի՛ վախ-  
նար բնաւ ժայռիկներու սուր սպառնալիքներէն. նորէն ծունկերս  
քեզի յենարան, նորէն թևս բարձ քեզի:

Փաշէ կապիւշոնդ դէմքիդ, յենւէ ինծի, ու փոյթ չէ, զուն  
սուպ-քուն եղիր նորէն:

Թող միայն, որ կամաց մը փարիմ նորէն լանջիդ. թող, որ  
զգամ բազուկիս տակ սրտիդ ուժգին խենթ զարկերը, ու խոր շուն-  
չիդ ընդհարիլը դրկիս ամուր սեղմումին մէջ. կը յիշես:

Թող, պարզուած հաղարփս, ու փոյթ չէ, զուն սուպ-քուն եղիր  
նորէն:

## VII

Շիծաղդ ու արցունք—հարազափ քոյրեր, որոնք հայեացքիդ  
մէջ անբաժան են իրարմէ:

Ժպրելուդ պէս կը թռջին աչքերդ, ու քու ծիծաղդ լաց է:  
Խոկ այս առողու դուն կու լայիր՝ մինչ աչքերդ կը խնդացին ինծի:  
Ինչու կու լայիր՝ շըսիր դուն. թէ ինչու կը խնդացիր՝ չի  
հարցուցի:

Խնդաց միշտ, հոգիս, ես կը սիրեմ քու խնդուկդ, որու կայ-  
գառ բերկրանքին մէջէն արցունքիդ ցողը կը ծնի:

Քայց ասորընէ ի վեր, ինչու ծածկեմ, քու լացդ ես աւելի  
կանըջեմ. լացդ, որու հոսուն քողին եփեկն աչքերդ այնպէս մըպ-  
տիլ գիտեն ինծի:

Ադամանդ ու գոհար արժէ, և ինքնին ադամանդ ու գոհար  
մըն է. քու ծիծաղիդ ամէն մէկ արցունքի շիթը:

Խայց դին չունի, անգին գոհարս, քու արցունքիդ ժպիուը:

## VIII

Այնչափ խնդրեցի նաւակին մէջ, որ բան մը երգես ինձի:  
Չես զգար, թէ ի՞նչ անուշ պիտի հնչէ ալիքներուն ծփանքին  
վրայ դող ելած ձայնիդ ալեծփումը:

Չերգեցիր:

Աղէկ. բայց փոխարէն դուն ալ պիտի չի լսես իմ երգերս.  
որ դուն ինքդ սակայն երգեցիր իմ զգացումներուս ալիքներուն  
մէջէն:

Պահէ, պինդ պահէ, յամառ սիրունիկս, քու հնչուն երգերդ  
դուն ինձմէ:

Բայց քեղմէ իսկ ծածուկ պահել քու սեփական երգերդ այդ  
ես կրնամ միայն մեզմէ:

Միւնխէն, 1898.

## ՀԱՐԿԵՐԸ ՏԱՇԿԱՍՏԱՆՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ԽԱԺՄԱՆԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

Երկրագործական հարկեր կամ Աշար օրինական պետական հարկերը, որ համարեամ մշտական բնաւորութիւն ունին այս կամ այն շափով՝ վերջանում են: Բայց դա միայն չէ տաճկական հարկացին սխալ մը Թուրքիացի քրիստոնեաների վերաբերութեամբ. զրանցից չեւոյ դալիս են ուրիշները ևս...

Աշար կոչւում է բոլոր հացահատիկներից, խորից, առւոյտից, բանջարեղջններից, ազգիներից, բոստանից (սեխի, ձմերուկի, գարունգի ցանքս) և այլ երկրագործական արդիւնքներից առնւող հարկը:

Տաճկական օրէնքով, եթէ ամեն բան կապար, էր օրէնքի սահմաններում—արէպուք է գիւղացու արդիւնքի  $\frac{1}{8}$ -ը թողնւեր աիրոշը և միայն  $\frac{1}{8}$ -ը վերցնւեր իբր հարկի: Այդպէս է տրամադրում օրէնքը, այժմ այդպէս էլ լնդունւած է գրել պաշտօնական թղթերում և պետական հաղորդագրութիւններում: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ եթէ գիւղացին սպանում է, օրինակ՝ 120 փուժ ցորեն, 15-ը կառավարութիւնն առնէ, 105-ը կը մնայ իրեն և դրանով մի միջին ընդանիք կարող է մի տարի ապրել... Այլ ևս ի՞նչ դժգոհութիւն, ի՞նչ վայնասուն, ի՞նչ արիւն...

<sup>1)</sup> Տես Մուրճ 1899, № 1.

Բայց իջնենք իրականութեան, կարմիր ու արիւնոր իրակա նութեան գիրկը Սկսենք հէնց այս հարկը հաւաքելու սխարէմից։ Այդ սխարեմը, մեր կարծիքով, շաբ բան կը պարզէ ոչ միայն աշարի այլ և ամբողջ տաճկական կառավարութեան բնաւորութեան, նրա նում թադաւորող անդրջրհեղեղեան ներքին կարգերի վերաբերութեամբ։

Ամեն վիլայէթի աշարը ծախւում է հրապարակական աճուրդով։ Միայն աշարը չէ, որ ծախւում է աճուրդով։ Վիլայէթի վարչութիւնն անգամ ծախւում է աճուրդով։ Սա ծազրելի է թւում, չափազանցութիւն, սուր է համարւում... Բայց... Փաքս է։

Բացւում է, օրինակ, երգրումում Վալիի (գուբերնատորի) տեղի Ելգզ-Քէօշկի և Սաղրազամի (մեծ եպարքոսի կամ վեզիրի) շուրջը ֆաւորիտների, ներքինիների կամ կըզ-աղալար-ների ճահճը թունդ է առնում։ ալեկոծւում։ Ամեն մէկն ուզում է իւր թեկնածուն առաջ քշել։ Խսկ մի ֆաւորիտի կամ մի կըզ-աղալարի թեկնածու լինելու համար պէսք է գեղին մեռադ և ապազայի փայլուն խոսքու մներ։ Առանց բախչիչի, առանց ոսկու անկարելի է ֆաւորիտի թեկնածու լինել... ներողութիւն, մոռացայ. մի միշտոց էլ կայ ֆաւորիտի թեկնածու դառնալու համար. դա զեղեցիկ աղջիկն է։ Այս միջոցով յաձախ անձեռնմխի և ամենակարող են հանդիսանում Զերքէզները։ Զերքէզ կոյսը Յինարի հասակ, բարակ մէջք, սև կրակու աչքեր և կամար, խիստ չոնքեր ունի։ Բոտվորի մեղկացած զաւակն ամեն ին։ կը դայ նր ոն գիրանալու համար։ Եւ ուղարկում են Մարմարայի հրաշագեղ ափերի ոչ նւազ հրաշագեղ պալարները ներքին նահանգներից գեղանի, անմեղ կոյսեր, մանաւանդ Զերքէզուհիներ...։

Ավ աւելի է դալիս, նա էլ դառնում է ամենազօրեղ ֆաւորիտի թեկնածուն, նա էլ սփանում է, օրինակ՝ երգրումի վալիութիւնը։ Բայց վալիի ոռնիկը քիչ է. նրանով չի կարող նա ըմարդ դավարի ապրել, իր պաշտպանին միշտ նւէրներ ուղարկել Պոլիս, որ նրա աչքը քաղցր մնայ իր վրայ... եթէ չուղարկի և կամ անկանոն ուղարկի՝ տեղից կը զրկւի... վերջապէս այդ ոռնիկովնա չի կարող նեղ օրւայ համար էլ մի բան դնաւեսել։ Զէ որ ամեն մի փաշայի բարձրագոյն իդէալն է ունենալ Մարմարայի, Ասկեղջիւրի կամ

Բոսֆորի ափերում մի համար՝ արեաց պալատ, լիքը գեղանի կոչսերով և Ալլահի պարզեած բոլոր բարիքներով։ Ծոցը, մեղկ ու ցոփ կեանքը բոլոր թուրք պաշտօնեաների միակ իդէալն է։

Վալին իր այս երեք սրբազն պարտականութիւնները (լաւ ապրել, նեղ օրւայ համար փնտեսել և իր պաշտպաններին Պոլիս փող ուղարկել) կապարհելու համար պարբասար է ամեն ինչ անելու, ամեն սրբութիւն պահելու, եթէ ունի մի այդպիսի բան իր սըրտում։

Նա իր հերթին Պոլսում սեսածն իր վերաբերութեամբ՝ գործ է դնում լայն չափերով իր իշխանութեան պակ գոնւած բոլոր պաշտօնների բաժանման ժամանակ։ Եւ այսպէս՝ վարչական սանդուխորի ամենաբարձր աստիճանից սկսած մինչև յերին զավթիէն շարունակւում է ծախսելու և ծախտելու սիստեմը։

Աշարի աճուրդով ծախսելը մի փառաւոր միջոց է վալիի և նրա պաշտօնեաների ձեռքում փող ճանկելու, հարսպանալու համար։ Նրանք էլ օգտառում են այդ յարմար միջոցից։

Հրապարակացին աճուրդ է նշանակւում վալիանիսոր քաղաքում՝ վիլայէթի աշարը ծախսելու համար։ Ուր իցէ գէշն, անդ և ժողովեցին արծւիքն, ասում է գրաբար առածը։ Խոլոր մեծմեծ գիշակեր վաշխառուները թափուում են չաղաքը, աճուրդին մասնակցելու։ Ամբողջ վիլայէթի աշարը մի վաշխառուի ուժից վեր կը լինի, այն էլ Տաճկաստանի ներքին նահանգների պէս երկրում, ուր գեռ խոշոր հարուստներ չկան։ Դրա համար գրեթէ միշտ վիլայէթի աշարը բաժանուում է մի քանի մասերի և ամեն մի մասն առանձին-առանձին ծախտում։ Ով աւելի շապ և աւելի ճարպիկ կերպով ուժեցրեց վալիին, մութասերիքին, գայմագալին, բաշքաթիթին, վալիի մօպաւոր ու ազդեցիկ բարեկամներին, նրա ծառաներին, ներքինիներին և ազն, և ազն, և ազն՝ նրան էլ կը յաջողւի գնել այս ինչ կամ այն ինչ խոշոր դաւառի աշարը։ Հրապարակացին աճուրդն իր կարգով, այս կուլիսացին գողոնի մասն իր կարգով։

Ում վրայ որ մնաց աշարը, նա այնքան ճարպիկ պէսք է լինի, որ և՛ պետք թեան նշանակած հարկի չափը կամ կապալաղբամը հանէ, և իր, թերևս նրանից շաբ աւելի՝ ուած կաշառքները հա-

նէ, և՝ իր աշխատանքի վարձը շահի: Այսպեղից արդէն պարզ երեւում է, թէ ինչպէս սասպնէ պղպճակների նման օդն են ցնդուում օրէնք ու իր պահանջած  $\frac{1}{8}$ -ը կամ  $\frac{1}{7}$ -ը բայց այդ գեռ քիչ է:

Ամեն մի խոշոր աշախառու յաճախ մանր չափերով ծախում է իր բաժինն աւելի մանր վաշխառուների, սրանալով իր առիւծի բաժինը: Երբեմն սրանք էլ որոշ օգուտ արանալով՝ իրենց միջակ բաժինները ծախում են աւելի մանր կապալառուների, այնպէս որ՝ վերջապէս մի փոքրիկ շրջան, մէկ կամ մի քանի գիւղ մնում է որ և է զիւղական մանր վաշխառուի ձեռք. իսկ այս ձեռքից-ձեռք անցնելը բարդում ու բարդում է աշարի չափը... Ո՞ւմ հոգն է. թող ժողովրդի հոդին գուրս գայ:

Թէ Եւրոպացում, թէ մեզանում շաբերը կարծում են, որ Տաճկատանի վաշխառուները միայն քրիստոնեաներն են, մանաւանդ հայերն ու յոյները: Այդպէս մրածողները կարծում են, որ թուրքն ընդունակ չէ վաշխառութեան, իսկ քուրդը՝ երբէք, երբէք: Միամի՞ւր մարդիկ, որ կարծում են, թէ կրօնը կամ այս ու այն մեղափիզիկական ազգացին կամ բասացին յարկութիւնները կարող են արդելել մարդկանց դառնալ վաշխառու, եթէ շրջապար դնուեսական պայմաններն սպիտում, պահանջում են այդ բանը:

Սշար գնող վաշխառուների մէջ կան հայեր, թուրքեր, հրէաներ, յոյներ և բաւական յաճախ, մանաւանդ վերջին 8—10 տարւայ ընթացքում՝ քրդեր: Վաշխառութիւնը ոչ ազգութիւն է ճանաչում, ոչ կրօն. նա բացարձակ կոսմոպոլիտ է: Յոլոր ազգերի վաշխառուներն իրար նման են: Դա բնական հետեւանք է զբաղմունքի նմանութեան: Մի թուրք և մի հայ վաշխառու իրար աւելի նման են իրենց բնաւորութեամբ, իրենց բարոյականով և աշխարհացեացքով, քան մի թուրք վաշխառու և մի թուրք անմեղ ու խաղաղ երկրագործ: Զբազմունքների նմանութիւնը ծնեցնում է բնաւորութեան և բարոյականութեան նմանութիւն: (Տես Hamon „Les militaires professionnels“:)

ՀԱՅԱՔ-ԴԱՅՐԷՍԻԻ (Հարկերի սենեակ) նշանակած աճուրդին, կարող են մասնակցել զիւղական ամբողջ հասարակութիւններն իբր մի մարմին (in corpore), գնել իրենց զիւղի աշարը, բաժանել ընդունիքների վրայ, հաւաքել և վճարել: Այդպիսի դէպքերում զիւղը

պէտք է ներկայացնէ մի կամ մի քանի երաշխաւոր վստահելի անձեր և հարկէ գիւղական ազգաբնակութեան համար ամենաձեռնուու միջոցն այդ է աշարի ծանր բեռից ազարուելու համար։ Բայց չկայ վարդ առանց փուշին... Այսպեղ էլ նոր ու անդանելի այլանդակութիւններ են ծագում։ Զուս հայաբնակ գիւղերը չեն վստահանում այդ քայլն անել, համոզւած լինելով, որ իրենց վրայ խիստ թանգ կը նսդի մրցութեան մինել որ և է թուրք կամ քուրդ փողապէր վաշխառուի հետ Զուս հայաբնակ գիւղեր էլ այնքան չկան. մեծ մասը խառն ազգաբնակութիւն ունին իսկ այդ դէպքում թուրքերն էլ են գալիս երաշխաւորներ, հայերն էլ Միայն հարկը հաւաքելու ժամանակ թուրքերը մերժում են վճարել, իսկ կառավարութիւնը ծանրանում է հայերի վրայ, նրանցից է առնում և թուրքերի բաժին աշարը. չէ որ ամբողջ գիւղն է վճարող միութիւնը... Էլ ով է հարցնում արդարութիւն. մի բան որ քրիստոնէի վկայութիւնը չի անցնում դադարանում... Եւ մի՞թէ քրիստոնեայի բողոքը նշանակութիւն ունի... Այդ և ուրիշ շար պատճառներ խիստ հազլադիւու են դարձնում գիւղական հասարակութիւնների մասնակցութիւնը աշարի աճուրդների մէջ և աշարը մնում է համարեան միշտ կապալառու վաշխառուների ձեռքը։ Իսկ եթէ զնող չեկաւ, այն ժամանակ մնում է կառավարութեան վրայ, որ և սկսում է հաւաքել իր սուրբին ծառայողների ձեռքով։ Չվճարելու դէպքում լցնում է գիւղը սուարիներով և սմիս ու ոսկոր անում։ Հաւաքումն բոլոր զօրքն ապրում է գիւղացու հաշւով, ծեծում են, վիրաւորում նրա ընդանեկան պատիւը և այլն... մինչեւ որ հարկերը լրացնում են, ապա հեռանում... Սա կոչում է զինւորական էկզեկուցիա...

Նկարագրենք այժմ զլիաւոր դէպքը--երբ աշարը մնում է որ և է կապալառուի վրայ

Կապալառուն վարձում է իսկոյն իր քաթիրը (գրագիրը) և նշանակում (նորից վարձով) աշար հաւաքող հարկահաններ կամ միւլթէզիմներ։ Միւլթէզիմը նշանակում է մի կամ մի քանի գիւղերի համար։ Եթէ նրա շրջանը մեծ եղաւ, նա առնում է իրեն օգնականներ, որ կոչում են Շահնաներ, մանր չափերով, ամեն կալից ցորեն, գարի և այլ հարկեր հաւաքողներ։

Միւլթէզիմներն իրաւունք ունին պահանջելու կառավարութիւնից և՝ զարթիէներ, և՝ սուարիներ, և՝ ուրիշ տեսակի օգնական ուժեր աշարը դանձելու համար:

Խաղաղ երկրագործի բնփեսական հիմքերը քայքայողը բեղելը-էսկէրիէն և աշարն են: Առաջինը քանդում է գիւղացու գունն իր ծանր ու մեծ չափով, իսկ երկրորդն իր ծախելու սիստեմավը, իր վաշխառւական, ամեն տեսակ զեղծումների յարմար ձեռվիլ:

Միայն աշարի մէջ գործադրւող զեղծումները թւելու համար հարկաւոր են ամբողջ երեսներ, տասնեակ էջեր... Հաշւենք միայն մի քանիսը, առանց որ և է սիստէմի:

Գիւղացին ծեծում՝ է կալը, ցորենը թէժ անում՝ պարասպում: Նու իրաւունք չունի կամ ջւալները կամ ամբարը լցնել, մինչև միւլթէզիմը կամ նրա օգնականը չգայ, ըլքափի և հարկը չառնի—այսինքն շիբը թէ 1<sup>1</sup>-ը լրա: Կալի տէրը իմացնում է միւլթէզիմին, որ վերջացրել է, թող գայ չափի: Միւլթէզիմը չի գնում: Նա ոտի քրէհ է ուզում... Կաշառք չգրիր, կը գայ, ցորենի կոյսը կը կնքի նահապետական մեծ փայտէ կնիքով և կը գնայ, ցնոր կարգադրութիւնն Պարահում է, որ զօրեզ քամի է բարձրանում, կնիքը խախուսում... Պարահում է, որ գիւղական անկարգ շները գզում և թէժի վրան են ընկնում, կնիքը խախուսում... Կնիքը քանդւել է. ուրեմն՝ թէժից գողացել է պէրը: Դա դիպում է իբր ապետական գողութիւնն և յաճախ ամբողջ թէժը խլում չի փառս և պարծանս անշապակ դրսանին կամ միւլթէզիմ ազայի կամ նրա չորսլամի կապալառուին Գիւղացին սպիալած է, ուրեմն, կաշառք դալ, որ միւլթէզիմը բարիհամէ շուրով չափել և աշարը վերցնել. եթէ ոչ՝ գիշեր ցերեկ սպիալած կը լինի, երբեմն ամբողջ ընդանիքով՝ ցորենի թէժերի վրայ հսկել:

Յաճախ միւլթէզիմները, երբ իրենց կրքերին (և՝ փողացին, և՝ երբեմն բռփական) բաւարարութիւն չեն տալիս գիւղացիները, թշնամանում են և ձգուում թշնամու գունը քանդել, նրա օջախը մարել: Այդպիսի դէպքում նրանք նոյն իսկ վարձում են մի թուքը, մի քուրդ կամ մի այլ սպար վարձկան և ուղարկում, որ հակառակորդի թէժը քանդի: Հետեւեալ օրը գալիս, գրաւում են բոլորը, մի քան էլ վրայ առնում և նոյն իսկ տիրոջն էլ բանուարկել դալիս:

Գիւղի ամենաազգեցիկ և հիշխանու անձերն անդամ յեղին զարթէի, ողորմելի միւլթէզիմի կամ՝ նրա շահնալի հետ խօսած ժամանակ ամիւլթէզիմ աղա, այաղլարնի էկոփիկմն ով են խօսում (ուր ներդ համրուրեմ!!!): Ենթաղրենք, որ այգպէս սորորանալով, կաշառքներ բալով՝ համաձայնեցրեց միւլթէզիմին գալ, թէժը չափելու Ոչժը, զափթիէի, զինւորի, պետութեան կոպիսո ոչժը նրա կողմն է մէջլիսը, արդարութեան աց ծաղրանկարը. նրա կողմն են զադին ու գայմագամը, միւթասէրիմն ու վալին, եպարքոսն ու նախարարը. իսկ հարկադու գիւղացն ով է պաշտուանում... և միւլթէզիմն անում է այն ինչ իր քէֆն է տալիս. նւագողն էլ ինքն է, սրարողն էլ: Լաւ իմացէք, որ գա միայն քրիստոնեաց ու այնաների հետ չի պատահում, այլ և մահմեղականների հետ: Եոլոր երկրագործ և արհեստաւոր ազգաբնակութիւնը ոնքում է աշարի ծանրքարի, ասորիճանաւորների և վաշխառուների կեղեգումների տակ. Թուրք, հայ, ասորի և նոյն իսկ քիւրդ... ոնքում են, ճգմում...

Պապամեմ միայն մի վակու մահմեղականների կեանքից, մնացածը հասկանալի կը լինի:

Տրապիզոնի շրջանում ապրում են օֆցի կոչւող 60-70.000 հոգի մահմեղական յոյներ: Նրանք չափազանց մոլես անդ մահմեղականներ են, ինչողէս ամեն մի նէօֆիր (նորադարձ): Նրանք տալիս են իիսու մոլեսանդ ու հմուտ ասոււածաբան մոլոներ, որ յաճախ Պոլսի սովորաների գալրոցի գալրոն են կազմում: 1893 թւին նրանց են միւլթէզիմների մէջ անբաւականութիւններ ծագեցին աշարի առթիւ: Օֆցիք բողոքեցին հերթով՝ գայմագամին, միւթեսերիմին, վալիին և ապա հեռագրով նաև մեծ եպարքոսին ու սուլթանին: Նրանց բողոքներն ու ինդիրները ամինդ էր ալթը եղաւ, առանց որ և է հետեւանքի, նոյն իսկ առանց պատասխանի մնաց: Մահմեղի մոլեսանդ երկրպագու խորամանկ օֆցիները մի պարզամաւորութիւն ու զարկեցին Բաթում, որ այնպեղից իսկոյն մի հեռագիր խփեց սուլթանի անդու զական բարեկամ Ախլհել (II կայսեր<sup>1)</sup>): Կայսրը գես-

<sup>1)</sup> Այդ հեռագիրը խփելու զազափարը ուեց Ռիզա ի մութասէրիքը, որ մի բաւական լուսամիր անձ էր և ուզում էր պաշտուանել մողովովին ընդդէմ վաշխառու հարկահանների և կաշառակեր ասորիճանաւորների:

ականի ձեռքով միջնորդութիւն արեց։ Բարձրագոյն զասը, պիանելով գործի վար ձև արանալը, երկու քննիչներ ուղարկեց և 1894-ին գործն անուշի կատեց։ Մի կերպ քննեցրեց, ձախիսեղդ դարձրեց։

Եթէ օֆցի ասպաւածաբաններն այսպան արգելքների հանգիւ պեցին՝ մկանածեցէք ուրեմն, թէ ի՞նչ կը լինէր դաւուր սացացի գրութիւնը։

Միւլթէզիմը չափում է ցորենը և  $1\frac{1}{8}$  (?) լ առնում։  $1\frac{1}{8} \dots$  զա միայն ծաղր է, անխիղմ, անօրէն ծաղր։ Չափելու ժամանակ խեղճ զիւղացին ծալում ձեռքերը, վիզը ծոռում և ողորմելի հայեացքով նայում է, թէ ինչպէս կողոպտում են իրեն, ինչպէս խլում են իր և իր զաւակների բերնի վերջին պապառը... Յաճախ գործ է ածւում, մանաւանդ վերջին ժամանակներս, լուսուրգական կշիռը, որ այդ կողմերի խեղճ զիւղացու համար բոլորովին անձանօթ է։ Մի խաղ, երկու խաղ յետ ու առաջ է վարւում քարը և գողացւում 5-10-20 փութ, մի քանի հարիւր կիլոգրամմ... Յաճախ բերւում են աւելի ծանր քարեր... ուգքով ու ձեռքով վար զարնւում կշեռքի նժարը։ Գիւղացին յաճախ պեսնում, հասկանում է... բայց ձարն ինչ։ Դա ուժեղի իրաւունքն է։ Հողմի յաղթող բարբարոսը Կապիտոլիոնի վրայ իր սուրը զցեց կշեռքի մի նժարը, որ փրկանք պրւող սակին աւելի դուրս գայ, Աւժեղը միշտ արդար է Տաճկապահնում։ Միւլթէզիմը և կապալառուն ացնպիսի ցանցերով են պափել վարչական մեքենան, որ եթէ որ և է խղճապէր իշխանաւոր ուղինայ սլաշտապաննել ժողովրդին այդ վամպիրների ճանկերից, իսկոյն նրա ռոդի ուակը սասպոն են զնում, պեղից զրկում։

Կան պեղեր, ուր ցորնից ու գարուց վերցնում են հարկը մթերքով—ցորեն և զարի, կան պեղեր էլ, որ դրանցից անգամ

Երբ դատու քնեց, այդ լուսամիտ պաշտօնեալի որի ուակը սասպոն դրին փողագոր վաշխառուները։

Վիլհելմ կալսեր խփած հեռագրի մօպաւոր բովանդակութիւնն այս էր, ակազար, զու մեր Սուլթանի մոկրիմ բարեկամն ես. խնդրում, աղաչում ենք քեզ միջնորդել նրան, որ գէթ զործադրել ուակ այն օրէնքը, որ ինքն է որեւ Հարկանանները մեզ կողոպտում են հակառակ բոլոր օրէնքների խակ եթէ մեզ չպիտի աղաքես այս ծանր բեռից, կ'աղաչենք պեղապարասորել, որ զաղթենք ասկէց հեռանանքու։

հարկ ուզում՝ են նազդ փողով։ Իսկ այգու, խորի, տառյափի և այլ աշարներ ամեն պեղ առնւում են հնչուն դրամով։

Մի միջակ բոստանից, կանաչեղջն, ձմերուկ, վարունդ, սեխ և այլն ցանելու համար, բացի արագիսից (հողացին հարկ), աշար առնւում է օրինակ 5 ռոկի (540 դահնեկան)։

8-ը սայլ խորից աշարը լինում է 50 դահնեկան։ Խւրաքանչիւր 8 խորում առոցրից—2 դահնեկան նոյն ձևով և կորեկից, և' փեթակներից և այլն։ Քակորը, կենդանիների աղրից պապրտարուած քակորն (աթար, ԿԱՅԱԿԵ) անդամ՝ ենթարկում է աշարի. 100 հատից կամ մի սալլից առնում են մօտ 10 դահնեկան։

Մշու զայտի մէջ ամենափոքր այգու աշարը  $2\frac{1}{2}$  ռոկի է (116-170 դահնեկան), նոյնն է և ամենափոքր բոստանի համար։ Այս աշարի համար մեծահողի միւլիմէզիմը նշանակում է վճարման ժամանակ 2-3 օր, առառաւելլը մի շաբաթ։ Նթէ փողը չորսեց, խոկոյն կը գայ, տան ցորենն ու գարին կը կշոէ, կր տանի, օրինակ՝ քիլին (մօտ 7 փութ 8 ֆուն ը) 50 դահնեկան հաշւելով այն ժամանակ, երբ զիւզում ծախուում է նոյն չափն 80 դահնեկանով։

9) Խմլի հայ կամ ժառանգութեան հարկի։ Այսա-Քրիստոնեացի թողած ժառանգութիւնն իր ժառանգների վրայ հատուառելու համար վերցուում է օրէնքով  $10\text{--}15^0/0$  բոլոր սպացւածքի արժէքի։ Գնոհապազը կառավարութեան ուաշփոնեաներն են. մի կողմից կաշտոք են ուզում ժառանգներից, միւս կողմից այնքան բարձր են գնահատում, որ խոհապէս իրենց այսացած բաժինը հասնում է իսկական գնի  $30\text{--}40^0/0$ -ին։ Նթէ ժառանգները փող չունեցան պահանջած գումարը բալու, կարւածն ամբողջապէս կամ նրա մի մասը հրապարակացին աճուրդով ծախում, առնելիքը լրացնում են և ապա ժառանգութիւնը հասպատում։ Խոկ եթէ ոչ մի հնար չունեցաւ ժառանգը վճարել կառավարութեան հասանելիք պուրքը՝ ամբողջ ժառանգութիւնը մալալ են անում կամ յարքունիս գրաւում և ծախում իրը պեպական սեփականութիւն։

10) Պետական պատահական հարկեր։ Այս խմբի մէջ մենք մայցնում ենք այն բոլոր պապահական դուրքերը, որ կամ ժամանակաւորապէս, կամ միանւագ գրւում են ժողովրդի վրայ կառավարութեան կողմից։ Այսպէս օրինակ 1867 թ. ին բոլոր քրիստոնեաներին

վրայ մի տուրք դրին իհանէ անօւնու՛ (կաշսերական նւէր), որևէ պէտք է հոգացւէր Սուլթանի ճանապարհորդութեան ծախըը դէպի Անգլիա։ Այդ հարկը զնելու ժամանակ խոսքացնան մի դարի միայն վերցնել և աւաս ոչնչացնել, բայց դարին անցնելուց յետոյ նորից շարունակւեց մինչև որ մի նոր իհանէ լոյս ընկաւ<sup>1)</sup>։ 1877-ի պատերազմի ժամանակ բոլոր ազգաբնակութեան երկու դարւած հարկը միանգամից առնեց առաջուց, կուի նիւթական միջոցները զօրացնելու համար։ Տրւեցան բացարձակ խոսքումներ յաջորդ երկու դարիներն այլ ևս հարկ չվերցնել, բայց պատերազմից յետոյ նորից վերցրին և աւելի զօրացած չափերով ու աւելի զաղանական միջոցներով։

Այս խմբի մէջն ենք մոցնում և կոռք, բեկեարը, անկարիան և այլ ձրի կապարել պրուղ աշխարհանքները. զիւղացիների մօք և նրանց հաշուով ապրող զօրքը, զարթիէնները, ասորիմանաւորները և այլն, որոնց փոխարէն յաճախ խոսքացւում է վճարել, խսկ յետոյ յիշեցնողին բանդն են նեպում, նրա ունեցածը ծծում կամ ամենաուրեցացող դէպքում շշուն գեաւուրք առում, ծիծում, վանդում...

Տաճիկ պաշոննեաների և առհասարակ դամկատկան բնաւորութեան հետ անծանօթ մտրդու համար անըմբունելի կը լինի կոռ ու քեկարի, եկող-գնացող զօրքերին և աստիճանաւորներին կերակրելու ռացական պարագանութեան բոլոր դժոխացին ծանրութիւնը։

Մոնում են դիւղացու դունը 2.4.10.20 զինւած մարդիկն նրանց անսասուններին պէտք է կերակրէ դամփերը. խոսք, դար-

<sup>1)</sup> 1896-ին էլ Տաճկաստանը իհանէ ունեցաւ կառավարութիւնը կաչ արեց բոլոր իր հապատակ անաւագացեալներին կալսերական մի նւէր դալ զնելու համար (որ և զնւեց ու բաժանւեց մահմեղական ամբոխին)։ Հետաքրքիլն այն է, որ այդ իհանէն պարտազիր էր միալն մահմեղականների համար, խսկ քրիստոնեաների համար կամաւոր էր, Բայց իհանէի պաշտօնական հրավարդակում ասւած էր ալսաքս. «Կաշսերական հաւագարիմ հպատակ քրիստոնեանների համար պարտազիր չէ. ով խորին հաւագարմութիւն ունի, նա իր գործով ցոլց կը դարձ կը դարձ (մօժաւորապէս ալզ էր միտքը), Դէմ, թող քրիստոնեալ ուսուան համարձակւի իհանէ չդալ... ԶԵ որ նա իսկուն կը մեղադրւի անհնազանդութեան մէջ, այլ ևս չի ճանաշւի իբր հաւագարիմ հպատակ, կառկածելի կը դառնալ, 96 թ. օգոստում սեպտեմբեր «Արենելք» լրագրում կար այդ պաշտօնական թուղթը».

ման, գարի — ամեն ինչ ձրի... Անկոչ հիւրերին էլ պեսք է կերակրէ: Ո՞րքան պահանջկով են այդ հիւրերը... կերակուրը մի քիչ վագ եղաւ կամ քիչ, ծեծով ու մահւան երկիւզով սրբազում են տան պիտովը բերել իրենց ուզածը: Այդ գեռ տանելի է: Եսւ յդիանալուց յեւոյ՝ նրանք պահանջում են և գոհացում իրենց անասնական կըրքերին: Յաճախ ձիերը տալիս են տան տղամարդկանց, որ տանեն, մի քիչ ման ածեն, կամ առւակից ջուր խմյնեն, իսկ իրենք բռնաբարում են տան կանանց ու աղջիկներին: Ի՞նչ կարող է անել անզէն ու անպաշտան գիւղացին: Նապի էլ որ խօսի, զնոյակը կամ գաշոչնը պարրասփ է նրա համար: Երբ որ և է զիւղացու գուն այդ պապու-հաս-հիւրերը ուր են զնում, զրացիք իսկոյն աշխարում են մի կերպ գաղտնի խլել անից հարս ու աղջիկներին և թագյնել իրենց մօր մինչև հիւրերի գնալը: Տանը ժողնում են պառաւ կամ հասակաւոր կանանց:

Զինւած բռնաբարութեան այս զոհերին պեսնելով, շար եւրոպացի ճանապարհորդներ եկել են այն եզրակադութեան, որ Տաճկաւորանի քրիստոնեաները բաւական անառակ են կամ՝ գէթ անաբարբեր ընտանիքի լնուանեկան սկարիւը: Բայց վերջին ժամանակի աւելի խոր և աւելի ճիշտ ուսումնախրութիւններն ապացուցին, որ միայն զէնքի սպանիչ զօրութիւնը և իրենց անզէնութիւնն են նրանց սրբազում անքարբեր երկեալ: (Տես „Պոլոженіе Армянъ въ Турціи“ գիրքը, Մակ-Առմի յօդւածը):

(Շարունակելի)

## ԶԻՆԻՈՐԻ ԵՐԳԵՐԻՑ

ԱՐԴԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

### ՀՐԱԺԵԴՏ

Մի լար, մայրիկ-ջան, քո թշւառ որդին  
Կարօտ չէ լացի—նա շատ է լացել.  
Մի լար, քոյրիկ-ջան, եղբայրդ անգին  
Այդ արցունքներով շատ է փառապել:

Եւ դու, իմ մանկիկ—եղբայր սիրական,  
Դու ինչ հասկացար, որ սիրուզդ փղձկաց.  
Միթէ քեզ ևըս միսքը սոսկական  
Պաշարել է վաղ, զեռ կեանք չը տեսած...

Ա՛խ, չը կարծէք թէ ընդմիշտ հեռացայ  
Զեր քնքոյց սրախց, կաթոգին սիրուց.  
Ա՛խ, չը կարծէք թէ արդէն մոռացայ  
Զեզ, դադարեցի ևս ձեզ սիրելուց...

Այսուղ՝ երազում ձեզ ամենայն ժամ  
Կ'երեւամ վհապ, արցունքն աչքերիս,  
Այնուղ՝ երազում ձեզ համար կը լամ  
Եւ ձեզ կ'ուղարկեմ տարաբախու հոգիս:

1898 թ. դեկտ. 21.

Խառաւ-իւրու:

## Ա Ռ Ի Բ Ե Ս ...

Բախտից հալածւած,  
Ճամբից մոլորւած,  
Ապաբախտ եղբայր, ասա՞ ինձ, ուր ես...  
Ե՞կ սիրու սըրտի դանք,  
Մեր ցաւերը լանք,  
Ապաբախտ եղբայր, ասա՞ ինձ, ուր ես:

Ե՞կ մէջգան անենք,  
Մեր սազին խփենք՝  
Որոյէս աշուղը հըրապարակում։  
Ցաւը մեր սըրտին  
Ասենք աշխարհին՝  
Որոյէս աշուղը հըրապարակում։

Կեանքըս դառնացաւ,  
Թոյն-լեղի դարձաւ,  
Եթէ քեզ չասեմ, սիրտըս կը պատոի.  
Լցւած եմ մաղձով,  
Կը կորչեմ շուրով,  
Եթէ քեզ չասեմ, սիրտըս կը պատոի։

Բախտից հալածւած,  
Ճամբից մոլորւած,  
Յաւակից եղբայր, ասա՞ ինձ, ուր ես.  
Ե՞կ սիրու սըրտի դանք,  
Մեր ցաւերը լանք,  
Ա՛վ ասուանդական, աւա՞ ինձ, ուր ես...  
1898 թ. 29 դեկտ.

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՒՈԼԻՒՑԻԱՆ

ՄԻՔԱՅԻ, ՑՈՎՀԱՆՆԻՑԵԱՆԻ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

Ֆուրիէ, Լուի Բլան և ուրիշ սոցիալխարներ ևս բացարքում էին նորագոյն պատմութիւնը իբրև արդիւնք զասակարգացին կուների զարգացման:

Մոքի այդ ամբողջ պաշարը՝ Հեգէլի դիալիքտիկան ու Ֆոյերբախի փիլիսոփայութիւնը մի կողմից, Փրանսիական պատմաբանների ու ածած արդիւնքները միւս կողմից՝ այդ ամենը ի մի ձուլելով, սիստեմաբար մշակեց Մարքսը և սրեղծեց մի պատկառելի թէօրիա, պատրմափիլիսոփայական մի աշխարհայնութիւն։ Նա անձամբ մոցրեց երկու ինքնուրոցն միաք։ Նաև գննդեսական վիճակը որոշադրում է քաղաքական գոյութիւնը ոչ միայն նորագոյն, այլ և բոլոր ժամանակներում։ Նախնական զարերում, երբ մարդս աւելի շատ ժամանակ է գործ դրել իր նիւթական կարիքները գոհացնելու համար, — այդ կախումը բնականաբար աւելի զգալի պէտք է լինէր։ Երկրորդ՝ ոչ միայն քաղաքականութիւնը, այլ միաժամանակ սոցիալական, կուլտուրական կեանքի բոլոր միւս արդարացութիւններն ևս վերածւում են գննդեսական պայմաններին, իբրև միակ պատճառական աղբիւրին։

Մարքսը իր գրւածքներից ոչ մէկում չի քալիս իր թէօրիայի ամփոփ պեսութիւնը։ Բայց հիմնական մոքերը ցիր ու ցան գտնում

<sup>1)</sup> Տես Մուրա 1899, № 1.

նոք նրա բազմաթիւ գրւածքներում<sup>1)</sup>: Մենք կը փորձենք ամփոփել:

Իր առաջին զուսպ գիտական աշխատութեան մէջ «Zur Kritik der politischen Ökonomie, (=ի քննադատութիւն Քաղաքագութեառութեան) Մաքսը ուալիս է հակիրճ որոշումը հասարակական ստատիկի (կայական, անշարժ զրութիւն) և դինամիկի (շարժուն զրութիւն):» «Արդիւնագործութեան յարաբերութիւնների ամբողջութիւնը, — որոնք համապատասխանում են արդիւնագործող ուժերի զարգացման մի որոշեալ աստիճաննին — կազմում է հասարակութեան դնդեսական շէնքը, այն իրական խարիսխը (բազիս), որի վրայ բարձրանում է իրաւական ու քաղաքական վիրայի շէնքը» (Եթերբաս, հածերոյկա) և որին համապատասխանում են հասարակական գիտակցութեան որոշեալ կերպեր: Նիւթական կեանքի արուադրութեան եղանակը պայմանառում է սոցիալական, քաղաքական ու հոգեկան կեանքի պրոցեսը առհասարակ. մարդկանց գիտակցութիւնը չէ, որ որոշագրում է նրանց կացութիւնը, այլ ընդհակառակը՝ նրանց հասարակական կացութիւնն է, որ որոշագրում է նրանց գիտակցութիւնը:

Սպահական կամաց լուսաբանութիւնը մէջ հասարակական դինամիկը. Շրենց զարգացման մի որոշ աստիճանի վրայ հասարակութեան նիւթական արդիւնագործող ուժերը միանում են հակասութեան մէջ գոյութիւն ունեցող արդիւնագործական յարաբերութիւնների հետ, կամ՝ իրաւաբանօրէն խօսելով սեփականութեան յարաբերութիւնների հետ, որոնց մէջ շարժեւել են նրանք (արդիւնութերը) մինչեւ վերոշիշեալ աստիճաննին հասնելը: Այդ յարաբերութիւնները շղթայակապ են անում արդիւնագործող ուժերի զարգացումը. այն ժամանակ վրայ է հասնում սոցիալական յեղափոխութեան շրջանը, մնութեական խարիսխի փոփոխման հետ յեղաշրջումը է դանդաղօրէն կամ արագնթաց՝ ամբողջ հակայական վիրահիշենքը: Նոյն միտքը կրկնում է ուրիշ պեղերում և ս:

Բովանդակ պարմութիւնը, Մաքսի թէօրիայի համեմապ, գիտում է իրեւ դասակարգացին կոիւների պարմութիւնն: Հասա-

1) «Die heilige Familie» (1845թ.), Կոմմունիստական մանիֆեստ (1847թ. աշխարհակացութեամբ Էնգելսի), «Փիլիսոփակութեան Թշւառութիւն» (1847), «Zur Kritik...» (1859) «Կապիտալ» (1871) և այլն.

բակութեան գնդեսական կազմաձեռւմը—սկսած այն ժամանակից,  
երբ քայքայւել է նախնական համայնական հողարիրութիւնը—  
մինչ այսօրւայ պատմութիւնը<sup>1)</sup> պայմանաւորւել է դասակար-  
գային հակառակութիւններով՝ հակառակութիւն տիրոջ ու սփրկի,  
պարրիկի ու պլերէցի, աւասականի ու ճորտի, բուրժուայի ու  
պրոլետարի միջև... Ներքին, մշտակայ ուժեր յեղաշրջում են ան-  
դադար արդիւնագործութեան և նրա հետ բոլոր գնդեսական յա-  
րաբերութիւնները. այսօր այդ յեղաշրջման պրոցէսը կարարում  
է մի առանձին արագութեամբ, որովհետեւ բուրժուազիացի արդա-  
դրած վիթխարի արդիւնագործող ուժերը անցնում են նրա կա-  
րողութիւնից, և մի կողմից փութօրէն վարթարացնում են տի-  
րող կապիտալիստական կազմակերպութեան կենսապայմանները, միւս  
կողմից առեղծում են գոյութեան պայմաններ մի նոր հասարա-  
կութեան համար, առանց դասակարգերի, մի նոր հասարակութեան՝  
որ պիտի հաստարւի հասարակական արդիւնագործութեան և  
արդիւնագործութեան միջոցների հասարակական սեփականու-  
թեան խարիսխի վրայ... Խնչպէս որ սկզբներում, մարդկացին նախ-  
նական հասարակութեան մէջ՝ չի եղել դասակարգացին կոիւ, աւա-  
գայում ևս նա պիտի վերանայ: Դասակարգացին անդադոնիզմը այ-  
սօր հասել է այն աստիճանին՝ որ կեղեքւած պրոլետարիատ դասա-  
կարգը իրեն կեղեքող բուրժուական դասակարգից չի կարող ազար-  
ւել ուրիշ կերպ, բայց եթէ միաժամանակ ամբողջ հասարակու-  
թիւնը ազարբերզ ընդդմիշու հարաբահարութիւններից և դասակար-  
գացին կռիւներից... (գես կոմմունիստական մանիֆէստ):

Մարքսը նախ և առաջ գնդեսագէտ էր: Տնդեսագիրութեան  
մէջ նա առաջինն էր, որ մերկացրեց ապրանքի, արժեքի, դրամի  
և այլ գնդեսագիրական կարեգորիաների ներքին էութիւնը, ցոյց  
տալով նրանց իրեն պատմական կապեզորիաներ: Նա առաջինը .  
հետազօտեց կապիտալի զարգացման ու յառաջիւաղացութեան օրենք-  
ները և իր ներհուն զիսութեամբ մահացու հարւած գւեց կապի-  
տալիզմին: Եւ նա առաջինն էր, որ դուրս բերեց գրամաբանօրէն  
ներկայ սոցիալական շարժման նպատակները իրեւ արդիւնք մինչ

<sup>1)</sup> Ալսինքն դրաւոր պատմութ. սկզբնաւորութիւնից մինչև մեր օրերը:

այսօրւաց պատմական զարգացման, դէմ զնելով ուրուպիսպների չյաւիփենական արգարասիրութեան պահանջներին՝ ճակարտագրական, երկաթէ անհրաժեշտութիւնը:

Եւոլիւցիացի գաղափարը հառակաւեց տնտեսագիրութեան մէջ: Տնտեսական էւոլիւցիան Մարքսի համար մի զիալեքտիկական պրոցէս է. ացդգեղ նա հետեւողութեամբ կիրառեց Հեգէլի մեթոդը, միայն փոխանակ գաղափարի ինքնազարգացման՝ զնելով ֆաքտերի ինքնազարգացումը. Նա, այսպէս ասած, մարմին փւեց Հեգէլի մատաֆիզիկական գաղափարին: Նա ցոյց դրեց, որ ցաւելեալ արժէք (Mehrwerth, արժէք, որ գործադրէրը սրանում է գործաւորի չվճարւած աշխատանքից) արդադրող կապիրալը ոչ միայն թշւառութիւն է սրեղծում, այլ և առաջնորդում է դէպի թշւառութեան բարձումը:

Կապիրալիստական մասնաւոր սեփականութիւնը առաջին ժիւրումն է անձնական աշխատանքի վրաց հիմնւած մասնաւոր սեփականութեան. բայց կապիրալիստական արդիւնագործութիւնը արրաջրում է բնական պրոցէսի անհրաժեշտութեամբ իր սեփական ժիւրումը: Դա ժիւրումն է ժիւրման: Այդ վերջինը կը վերահսկապարէ անհարական սեփականութիւնը՝ հողի և արդիւնագործութեան միջոցների համայնական սեփականութեան վրաց՝<sup>1)</sup>:

Ընթերցողը դեսնում է այսպեղ Հեգէլի պրիադը: Մարքսը թէպէտ և մի անգամ խոսքովանել էր, որ ինքը կոքերութիւն» է անում Հեգէլի բառերով, այնուամենայնիւ ըստ երևոյթին հաւաքում էր Հեգէլեան ֆորմուլների անսխալականութեան: Տրիագի փաստաբանութիւնը մեծ եռանդով առաջ դարձ մանաւանդ կնդէլս—Մարքսի alter ego-ն, նրա հայեացքների բաժանողն ու լրացնողը՝ իր պոլեմիկական գրւածքի մէջ ընդդէմ Դիւրինդի: Այդ Փորմուլի կիրառութիւնը մի խաղ է, որ չի կարող միշտ բաղկաւոր լինել: Արգէն Հեգէլի մօտ նա սաստկապէս կազում էր: Դուրս էր գալիս օրինակ, որ Արևելքը, իրեւ թէզ (գրութիւն), ազարութեան գիտակէփից՝ մարդկութեան երեխայութիւնն է պապկերացնում (մինչդեռ գրանից առաջ եղել են բարբարոսութեան ու վայ-

<sup>1)</sup> K. Marx, Das Kapital, հառ. I.

քենութեան ահազին շրջաններ, ուր մարդկացին հասարակութիւնը երբեմն խսկապէս Ռուսաօ'ի փառաբանած դրախտն է վայելել), իսկ նորագոյն, զերմանական աշխարհը, իբրև սինթէզը՝ (համադրութիւն) Հեգէլի կարծիքով՝ ներկայացնում է ազագութեան կատարելագիսլը, ուր իբր թէ ւամենքին էլ ազագ են—մի բան, որ շատ հեռու է ճշմարդութիւնից:

Նոյնպիսի արկածների չենք հանդիպիլ տրդեօք, եթէ սոցիալական էւոլյուցիայի մէջ տրիադի հակաբագրական յաջորդութիւնը միայն տեսնենք: Ապագայ կազմակերպութիւնը լինելու է ժխտումն ներկայ կարգերի, բայց տրիադի համեմափ «բնական անհրաժեշտութեամբ» ապագայ կազմակերպութեան ժխտումը ևս ովհափի վրայ հասնէ. ովհափի նորից, ուրեմն, ժխտուի համայնական սկզբունքը և նորից ուրեմն պիտի հասպատրւի նրա անփիթէզը... այսինքն մասնաւոր, անհապական սեփականութիւնը...

«Տրիադը» Մարքսի թէօրիայի մէջ էական չէ, այլ պատահական մի կէտ, մի ակսիդենտ, որի յապաւումից թէօրիան չի կարող դուժել:

Մարքսը անւանեց իր թէօրիան «Մասկերիալիստական ըմբռանումն պատմութեան 1»), հակառակ իդէալիստականին՝ որը հասարակական էւոլյուցիայի մէջ գաղափարական ֆակտորին է գոալիս առաջնութիւնը: Մարքսիզմը դնում է գնումն առաջնական մղիչ ոչ բայց նա բնաւ չի հերքում գաղափարականի դերը պարմութեան մէջ: Գաղափարը, անհապական, հոգեկան գործոնները մեծ կշիռ ունին, բայց ոչ իբրև տէրեր, այլ իբրև սպասաւորներ գնումնական ֆակտորի:

Անթիւ յարձակումներ եղան մարքսիստական աշխարհայեցութեան դէմ՝ սկսած նրա հրապարակ գալու օրից. նա նոր նոր սկսում է ճանապարհ բանալ դէպի գիտնական սոցիօլոգների բանակը. նրան ձայնակցում են արդէն մի-մի պրոֆեսորներ ու թէօրեգիլներ Գերմանիայում, Բելգիայում, Խորվայում, նաև Ռուսասպանում:

<sup>1)</sup> Այսօր նրան դալիս են զանադան անուններ՝ դնուեսական մատեքիալիզմ, պարմական մարերիալիզմ, դիալեքտիկական մարերիալիզմ և այլն:

Անորարակոյս, մարքսիզմը իբրև պարումափիլիսոփայական մթէօրիա՝ գոակաւին չի ներկայացնում մշակւած, ամբողջական մի սիստեմ։ Այդպիսի սիստեմի ուրագիծը միայն կայ: Աւելի հրաժարվ, գործնական խնդիրներով կլանւած։ Մարքսը և Էնգելսը (վերջինս արդէն միշտ պիտի ցիշւի առաջինի հետ) ժամանակ չունեցան փիլիսոփայօրէն մշակելու և լայն փառատական հիմնարութիւն դալու նորակառուց թէօրիային։ Աշակերտները մեծ եռանդով աշխագում են այդ ուղղութեամբ։ Կառւցի, Կունով, Լաֆարգ, Հուգո և այլն հետագումում են միջին և նոր դարերի պարումութիւնը իրենց սոցիալական, քաղաքական, կրօնական և այլ յեղաշրջումներով, գոնում են նրանց պարճառական աղբիւրը պնդեսական, դասակարգային յարաբերութիւնների մէջ։

Կարարւում է և բացասական աշխատանք այդ թէօրիայի նկարումամբ նոյն իսկ մարքսիստական բանակում։ Էլուարդ Բերնշտայն, մարկսիզմի ամենաբազանդաւոր թէօրետիկներից մինը, վերջերումն ակսել է քննադադել Մարքսի վարդապետութեան շար էական հայեցակիցները։ Մի ուլիշ յացնի սրցիօլոգ, բելգիացի պրոֆեսոր Դը Գրէէֆ, որը դաւանող է Մարքսի իդէալների, իր Transformisme sociale-ի մէջ մերժում է Մարքսիզմի այն դրութիւնը, որի համեմատ՝ իրը թէ ներկայ հասարակութիւնը ընալիան անհրաժեշտութեամբ դիմում է ինքն իրեն դէպի արդիւնագործութեան միջոցների համայնացումը։ Դը Գրէէֆը համարում է այդ դրութիւնը օպտիմիստական և հակագիտական։ Նոյն կարծիքն է յայրնում և պրոֆեսոր Վերնիր Չոմբարդ։

Թէօրիան կանգուն կը մնայ սակայն, նա ունի կենսունակութիւն։ Ճիշտ է, նրա մի քանի դրութիւնները կարարելապէս չեն համապարասխանում իրականութեան, ճիշտ է, նա շար այրող հարցերի պայտախանը չի բալիս մեզ, նա չի բացապրում օրինակ՝ փիլիսոփայական մփքի ծնունդն ու էլոլիւցիան, նա չի բացապրում կրօնների և մասնաւորապէս համաշխարհային կրօնների ծագումն ու դարածումը, իսկ եթէ փորձում է բացապրել, ընկնում է անխուսափելի քաշքացների մէջ։

Ոմանք դադապարպում են Մարքսի մասերիալիստական թէօրիան՝ նրա չափազանց պարզութեան ու միակողմանիութեան հա-

մոր։ Նար սոցիօլոգներ—ի միջի այլոց և ռուս սուբյեքտիվիստները —այն կարծիքն են յայտնում, որ սոցիալական էւոլիւցիան իրեւ վերին աստիճանի հնճուղու մի պրոցես՝ չի կարող կատարւել միմիայն դնդեսական Փաքորով, այլ բազմաթիւ ուժերի ներդաշնակ գործակցութեամբ՝ նիւթականի, մոռաւորի, բարոյականի և այլն։ Բայց այդ առարկութիւնը ինքնին չէզոքանում է, քանի որ մարերիալիստական ըմբռնումը չի ժխտում վերոյիշեալ մկաւոր, բարոյական և այլ մզումների դերը, միայն թէ դրանք դալիս են առաջնական (դնդեսական) Փաքորորից յետոց, որպէս նրա զարգացման անդրադարձումներ։ Մարքսիզմը չի ժխտում անհափի ներկործութիւնը իրեն շրջապատող միջավայրի վրայ, —ինչպէս այդ կարծում են սուբյեքտիւիստները (տես օրինակ՝ Կարեեւ, Основные вопросы философии истории): Մարքսը չէր կարող ժխտել անհափի դերը, քանի որ հէնց ինքը ահագին ազդեցութիւն ունեցաւ ժամանակակից սոցիալական շարժման ընթացքի վրայ։ Մարդիկ՝ որպէս բարձր իմացականութեամբ օժիւած էակներ՝ իրենք են սրեղծում իրենց պատմութիւնը, բայց միայն միշտ ստանալով դնդեսական զարգացումից։ Մարդը միջամտում է սոցիալական էւոլիւցիայի մէջ իր խելացի, նպաստակաւոր գործունէութիւնով, ձգտում է ճանաչել դնդեսական զարգացման ուղղութիւնը և ծառայեցնել նրան իր որոշ իդէալներին։ Այդպէս, դասակարգավին պայքարը՝ որ այսօր իբրև մարդկանցից անկախ և անփոփոխելի մի իրողութիւն՝ դիրում է քաղաքակիրթ հասարակութիւնների մէջ. — այդ արդէն գոյութիւն ունեցող դասակարգային պայքարից օգտւում են մարքսիստները և դարձնում են նրան զէնք ու միջոց՝ իրենց իդէալների իրականացման համար։

Մարքսի սոցիալական թէօրիան, որքան էլ սկակասաւոր լինի, այնուամենացնիւ լաւագոյնն է եղած թէօրիաներից, որ լուսաբանում է մեզ հասարակական պէս-պէս կազմակերպութիւնների պատմական գոյացումն ու առաջդիմութիւնը, եւրոպական քաղաքակըրթութեան աստիճանական զարգացումը. նա լաւագոյնն է՝ որ բացարում է մեզ, թէ ինչպէս նախնական ժամանակներում մարդակերութիւնը կամաց-կամաց վերանալով, ուեղի է տւել գերութեան, դերութիւնը՝ նորտատիրութեան (միջին դարերում), թէ ինչպէս

ժամանակի ընթացքում ճորդագիրութիւնը ևս անհրաժեշտաբար փառալւել է, ծնունդ դալով ներկայ կապիտալիստական կամ բուրժուազական կարգերին։ Եւ հասարակական կազմակերպութիւնների այդ յառաջիսաղացութիւնը բացագրում է նա ոչ միայն հասրարակական արդիւնաբերական ուժերի զարգացումով։ Նա ոչ միայն հասրարակական արդիւնաբերական ուժերի զարգացումով։ Նա ոչ միայն հասրարակական արդիւնաբերական ուժերի զարգացումով։ (Gesetzmässigkeit, զակոհօօնքազնություն) սոցիալական էւոլյուցիայի մէջ, այլ և պարզ ու որոշ մարդացոյց է լինում գործող օրէնքների վրայ։

Մարքսի թէօրիան խիստ կերպով ջոկում է Սպենսէրի, Շեֆլէի, և Կորդանական ուղղութեան բազմաթիւ ուրիշ կողմնակիցների թէօրիաներից։ Մինչդեռ այդ վերջինները ձգում են բացարել մարդկային հասարակութեան զարգացումը նրան օպարպիեցերական, կամ բիոլոգիական օրէնքներով։ Մարքսիզմը բացարում է հասարակական զարգացումը հասարակական պարմառներով։ Տիեզերական գոյցութեան կուհի գեղ նա մփցնում է աւելի ճիշտ գերմին՝ վասակարգային կորիւ, բնական ընպրութեան պեղ գնութեական ընպրութիւն։

Մակայն մարքսիզմը չի հակառակում դարւինիզմին, նա բացարձակ կերպով չի բաժանում մարդկային հասարակութիւնը անանական հասարակութիւններից, նա չի ուրանում, որ կայ ինքնուրոյն մարդաբանական (անտրոպոլոգիական) ֆաքոր, որ կան ցեղական, ազգայնական առանձնացարկութիւններ, որոնք հարիւրաւոր դարերի ընթացքում գոյցացել ու ամրապնդւել են մարդկութեան մէջ՝ աշխարհագրական, կլիմացական, գէօլոգիական և այլ միջավայրերի ազդեցութեան տակ։ Մարքսի մարդերալիստական ըմբռնումը հաւակնութիւն չունի ինքը իր տիրական օրէնք բացարքել ամեն բան, ինչ որ մարդկային է։ Նրա համեմատ մարդկային հասարակութիւնը ծնունդ է երկու միջավայրերի՝ բնական կամ կոսմիքական (տիեզերական) և արհեստական կամ սոցիալական։ Երկուսի միջև կայ մշտնջենական փոխազդեցութիւն։ Անդարակոյս, հասարակութիւնների ճակապագրի վրայ մեծ ազդեցութիւն են ունեցել աշխարհագրական դիրքը, կլիմացական պայմանները, հողի որպիսութիւնը, բուսական և կենդանական աշխարհը և այլն։ Առաջին քաղաքակրթութիւնները սկիզբ են առել մեծ գետերի բերաններում՝ նեղոսի, Գանգսի, Եփրատի, Տիգրիսի

և այլն. Հնդկաստան, Խղիպոս, Միջագեղք, Յունաստան քաղաքակրթութեան նախնագոյն որրանները եղան, շնորհիւ իրենց գիրքին, նպաստաւոր կլիմացին, հողի բեղմնաւորութեան, և այլն—պայմաններ, որոնք նւազագոյնի են հասցնում գոյութեան պայքարը և դիւրին են կացուցանում յառաջդիմութեան գործը:

Բայց կոսմիկական միջավայրի և անորոպոլոգիական Փաքտորի աղղեցութիւնները մի անփոփոխ մեծութիւն չեն ներկայացնում. նրանք փոփոխուում ու մեղմանում են քաղաքակրթութեան զարգացման հետ միասին, նրանց ճակարագրականութիւնը բարածում էր միայն նախնական հասարակութիւնների վրայ (ինչպէս նաև այսօրւայ վայրենի ու բարբարոս ցեղերի վրայ), որոնց արդիւնաբերութեան գործիքները գեռ ևս իրենց զարգացման սաղմի մէջ էին և չէին կարող մրցել իրնութեան ազգակների (Փակտոր) դէմ: Բայց ժամանակի ընթացքում, շնորհիւ իր սեփական ձեռքով սփեղծած արդիւնագործութեան ու հաղորդակցութեան միջոցներին՝ մարդուս միշտ աւելի և աւելի աջողութ է տէր դառնալ բնութեան ռութերին, սանձահարել նրանց կամայականութիւնները:

## ԳԱՐՆԱՆ ՄՈՏԻՒՆԵՐ

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

### I

Նորից բուրեց շունչը գարնան  
Եւ յիշեցրեց քաղցր օրեր,  
Կաշկանդանքից դաժան ձմրան  
Ազագւեցան հոգոյս լարեր:

Մօր է գարուն... և զգում ես  
Պահ մի մոռցւած սրտիդ ցաւը,  
Կուրծքի ուռած... սպասում ես,  
Թէ հա կընկնի ծանր քարը...

Սիրուն գարուն, ինչ լաւ հիւր ես  
Իմ ցաւափանջ սրտի համար.  
Երկար արդեօք խոսդանում ես  
Զիւան ջանիս նոր արև դուլ...

### II

Ես դանջւում եմ քո քրքիջով  
Ծիծառ անմեղ և սիրուն,  
Երբ բնութեան մանուկ շնչով  
Աւելում ես մեղ գարուն:

Իբրև ազնիւ անխոնջ մշակ  
Նորոգում ես քո բոյնը,

Զագեր խնամում հանում աշխարհ,  
Նորից երդում գարունը.

Իսկ ես, նայիր, քանի տարի  
Երգ երգեցի անընդհապո,  
Ճակագուագրին բողոք արի—  
Չբացւեց ինձ գարուն-վարդ.

Եւ իմ բոյնը այս աշխարհում  
Դեռ մնում է աւերւած...  
Եւ բիրու կեանքի ահեղ կուռում  
Ես մի հիւլէ հալածւած...

Ասա, ծիծառ, թնջու անմեղ  
Քո քրքիջով մանկական  
Ես գունջւում եմ... կեանքն էլ անմեղ  
Ինձ թւում է զերեզման...

## III

Օ՛, եթէ կարող լինէի, երկինք,  
Մի շնչով հոգոյս ամբողջ փոթորիկ  
Արայացուելու...  
Եւ կամ մի' յուժկու խոր հառաչանքով  
Կուրծքս ճնշող սարն վայր գլորելու,  
Այն ժամ ինձ մահը ծանր չէր թւալ  
Եւ ոչ պժգալի նորա արհաւիք.  
Զգալով հալւած վշտիս սարերը  
Հանդիսար կնեւոէի ես ինձ մահւան զիրկ:

## IV

Հոգեմաշ թախիծ, սպանիչ մոքեր,  
Թողէք հանդիսար զգացուն հոգիս,  
Կեանքումս զոնէ մի անգամ երգեր  
Ուրախ նւազել յաջողւի երգչիս:

Միշտ խոր հառաջանք, բողոք ու վայեր  
 Սինչ Երբ կրծքիս տակ բոյն դրած մնան,  
 Թրթռան սրտիս մղկան լարեր  
 Զեր շղթաներին մինչ Երբ դիմանան:

Հնգեմաշ թախիծ, սպանիչ վէրքեր,  
<sup>Ու</sup> ազեք հանգիստ զգայուն հոգիս,  
 Կեանքում գոնէ մի անգամ երգեր  
 Ուրախ նւագել յաջողւի երգչիս.

Մի ժամ, մի' վայրկեան գէթ հանգստանամ  
 Ընկղմեմ անհուն մռացութեան մէջ,—  
 Գուցէ ես նորից տանջւել կարենամ  
 Ինձ վիճակ ընկած ցաւերից անվերջ...

# ԶԵՐՔԻ ԵՒ ՊԱՐՏԻԶՊԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՏԻԱՐԱ- ԿՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. ԶԻԼԻՆԿԱԲՐԵԱՆԻ

(Նարուճակութիւն և վերջ<sup>1)</sup>)

Զիցերիպյում՝ այս շարժումը սկսւեց 1882 թւից և 1884 թւին առաջին անգամ՝ ուսուցիչների համար դասընթացներ բացւեցան։ 1893 թւին Զիցերիպյում կային 198 այդպիսի ուսումնարաններ, որոնցից 6-ը ուսուցչական սեմինարիաներին կից, 3-ը ռէալ ուսումնարաններին, 26-ը ուրիշ միջնակարգ դպրոցներին, իսկ 41-ը անկախ հիմնարկութիւններ էին։ Այդ դպրոցներն այցելում էին 7.000 աշակերդ։ Ժընեւի կանոնում բոլոր հիմնարկութիւնների մէջ աւանդողները բացառապէս դպրոցների ուսուցիչներ էին։ 1896 թւին Բերնի կանոնում, նոյնպէս և ուրիշ կանոնների համար պարբռագիր զարձրին։

Փրանսիա։ Այսուեզ 1882 թւին արդէն օրէնքով բոլոր դըպրոցների համար ձեռքի աշխատանքը պարբռագիր համարւեց, որպէս դպրոցի միւս առարկաների նման անհրաժեշտ մաս։ իսկ 1884-ից դա ուսուցչական սեմինարիաների համար ևս պարբռագիր եղաւ։ Սուարիստիկական գեղեկութիւններից երեսում է, որ ժողովրդական դպրոցները 1890 թ.-ին 20.000 էր. իսկ միայն Պարիզում նոյն թւականին 40.000-ից աւելի աշակերդներ կային, բացի ծաղկոց-

ների 23.000 մանուկներից, որոնք բոլորն էլ ձեռքի աշխատանքին մասնակից էին: Պարիզի այդ գպրոցների ձեռքի աշխատանքի համար կառավարութիւնը ծախսել է 486.000 ֆրանկ:

**Բելգիա:** Այսպեղ 1884 թ-ի գպրոցական օրէնսդրութեան համաձայն որոշւեց ձեռքի աշխատանքը մագնել գպրոցներում և այն օրից բազմաթիւ գպրոցներին կից բացւեցին ձեռքի աշխատանքի փոքրիկ հիմնարկութիւններ իր բոլոր պարագաներով: Կառավարութիւնը ընդհանուր ծախսի մի մասը յանձն էր առել. իսկ ուսուցչական սեմինարիաներում և ճեմարաններում նա ներմուծւեց որպէս անհրաժեշտ մաս:

**Անգլիա:** 1890 թւականին, որպէս կրթական անհրաժեշտ պահանջ, որոշւեց գպրոցների մէջ ձեռքի աշխատանքը կարելոյն չափ տարածել և այդ պարագաներ, բացի մասնաւոր գպրոցներից, այլ և ուսուցչական սեմինարիաներում ուսուցիչներ պարբասուիլ: 1893 թւին 353 գպրոցների մէջ մոտաւ սա, ուր 17.875 աշակերդ էր յաճախում:

**Գերմանիա:** 1891 թւականի սպարիսապիկան ցոյց է պալիս, որ ամբողջ կայսրութեան մէջ գոյութիւն են ունեցել 328 արհաստական գպրոցներ: Սրանցից 126-ը պահում և զանազան մարդկանց հսկողութեան պակ. 9-ը կապւած է բարձրագոյն գպրոցների հետ, 12-ը ուսուցչական սեմինարիաների, 40-ը ժողովրդական գպրոցների, իսկ մնացած 141 այս կամ այն դաստիարակչական գպրոցի հետ:

Ռուսաստանումն էլ ձեռագործի աշխատանքը սկսեց առաջ գնալ. 1884-ին ուսուցչական ճեմարանում մուլգ գործեց և ապա տարածւեց գաւառներում. այնպէս որ 1894 թւին ուսուցիչներ պարբասարող 75 հիմնարկութիւններից 31-ի մէջ ընդունեց: Վերջերումն պատերազմական մինիստրութիւնը կաղէտների հիմնարկութիւնների մէջն էլ մոցնել դրեց, այնպէս որ մինչև 1896 թ. 23 այդ պեսակ ուսումնարանների մէջ պարբազիր եղաւ:

Ռուսինայում՝ ու Բոլգարիայում՝ 1893-ին ձեռքի աշխատանքը բոլոր գպրոցների համար պարսպադիր եղաւ. նոյնը տարածւեց նաև Սերբիայում:

**Չեռքի** աշխատանքը ամենից շատ տարածւած և բազմակողմանի դարձրած է չիւսիսային Ամերիկայում: Այսուղ, բացի մաս-

նաւոր հիմնարկութիւններից, պարածւած է ուսուցիչ պատրաստող բոլոր բարձրագոյն դպրոցներում և միջնակարգ ու սուրբին ուսումնարաններում։ Այս երկրում կառավարութիւնը ինքն էլ շար է օգնում։ նոյնպէս համայնքներն, ընկերութիւններն և մասնաւոր մարդիկ նպաստում են պարածելուն։

Բացի յիշեալ պետութիւններից ձեռքի աշխատանքը պարածւած է նոյնպէս Խոպանիացում, Պորտուգալիացում, Իտալիացում, Բրազիլիացում, Աւրագւայում, Ճապոնիացում և ուրիշ երկիրներում։

Այս համառօր պարմական պեղեկութիւններից ընթերցողը պարզ կերպով կը տեսնի աշխատանքի աստիճանաբար զարգացումը և նրա ներկայ դրութիւնը։ Թէ զրանք ինչ նշանակութիւն ունին, ինչ զեր են խաղում մարդու դաստիարակութեան և կեանքի համար, այդ մասին առանձին առանձին խօսելը իմ նպատակը չէ։ Թէև այդ արհեստները այսօր ամեն մի քաղաքակիրթ հասարակութեան մէջ օգտակար և անհրաժեշտ բան են համարւում և օրէցօր աւելի ու աւելի ծաւալ սպանում։

Յօդւածիս վերնագրից էլ երեւում է, որ ես ի նկատի ունիմ միայն պարտիզանական աշխատանքը դպրոցական կրթութեան մէջ։ Պարտիզանական աշխատանքը ես կրկնակի նպատակով եմ՝ ընդունակ այն է։

I. Եթէ մենք ինքափի ունենանք մեր թեմական դպրոցները և Գէորգեան ծիմարաննը, պարզ կը տեսնենք որ աշակերտների մեծագոյն մասը զիւղական դասակարգից են։ հերեւագէս սա նրանց համար կեանքի մի անհրաժեշտ պահանջ է։ Դրանով թերեւս առիթ լինի դպրոցաւարոր աշակերտներին կազել իրանց զիւղի, ընակավացրի, հողի և անմիջիթար դրութեան մէջ ընկած դգէտ ժողովը զիւղի հետո թերեւս դրանով նրանցից շատերն ազատւեն հաղու, Անդըրկաւագեան երկիրները կամ կովկասի այս ու այն քաղաքը թափառելուց, իրանց ոչմն ու ծաղիկ երխաւաբգութիւնը իզուր պեղը օրական պարէն հայթացթելու համար կորցնելու անհրաժեշտութիւնից, այն ինչ նրանց մնունդ պառզ երկիրն ու ծնողները նոյն անելաննելի դգէտ դրութեան մէջ կը մնան, վաշխառուից կը կեղեքւին։ Զէ որ այդ երիտասարդները միջոց ունենալով զիւղերում մնալու իրանց ժողովրդի համար օգնող ու առաջնորդող կարտպետ-

ներ կարող են հանդիսանալ: Եւ մի՞թէ այդ դպրոցները սրանով մասսամբ գիւղական քահանացական հարցի լուծմանը նպաստած չեն լինիլ. քահանացացածը զրանով միջոց կունենայ փոքր ի շատի մարդուավարի ապրել, գրականութեան հետ հազորդակցութիւն ունենալ, ինքը առաջ գնալով առաջ կը գանէ նոյնպէս իրան յանձնած հօպը թէ բարոյապէս և թէ նիւթապէս:

II. Պարփիզպանական աշխատանքի համար անհամեմուս աւելի քիւ ծախս է պէսպ և աւելի հեշտ է զլուխ բերել քան միւս աշխատանքները: Միւնոցն ժամանակ այս աշխատանքը, բացի իր բարերար ազգեցութիւնից դպրոցում, կարեոր և նաև գործնական եառողնին կեանքի ու ամեն մի անհատի համար. իւրաքանչիւր մէկը կը ցանկաց իր փոքրիկ կորոր հողի վրայ, եթէ ոչ բանջայեղները զէթ թփեր, ծաղիկներ, ծառեր ունենալ և դրանցով զբաղել: Անգամ հող չունեցած դէպքում՝ նա կարող է իր այդ ցանկութիւններին ծաղկամաններով էլ գոհացում գոալ, ևն:

Սա մի ճշմարգութիւն է որ մարդկացին ցեղի կու լուռական կեանքը միշտ ձգուում է առաջ գնալ, զարդանալ, լինի նու պեսութեան, գիտութեան, զրականութեան և այլ բանների մէջ: Էնականաբար նոյնն էլ լինելու է դպրոցական կեանքի վերաբերմամբ, բացց նա բոլորովին այլ, ինքնուրոյն զարդացում ու առաջալիմութիւն ունի: Իրօք, դպրոցը միանգանայն այլ բան է քան քաղաքագէտների պարլամէնտներում կապարած դործերը, զիտութեան ու դեղաբեկութիւնների մէջ աշխատելը, արհեստի ու վաճառականութեան համար մեծ մեծ ծրագիրներ առաջարկելը, փիլիսոփաների, աշխարհի կոմ աստղաբաշխների քննութիւններն ու հետազոտութիւնները: Այն միանգանայն այլ բան է գպրոցը իր փոքրիկ, ըստերեւոյթին աննշան ու համեստ դրութեամբ մի քանի պարզ ու հասարակ պատկերի մէջ իր նախնական և գիտութեան արդգերով: Այսպես ուսուցչի առաջ բոլորովին մի նոր աշխարհ է բացւում, նոր աշխարհ է նրա հանդէպ նարած, նոր կեանք, նոր սերունդ է այսուեղ և այդ նախնական արդգուն նոր ձեռնուգ, նոր մեթոդով է առանդւելու, որի մասին նախորդ սերունդը քիւ գիտէր: Հին, անցած զնացած ժամանակի վերջն ու նոր ծնունդ առած ժամանակի սկզբնաւորութիւններն այսուեղ են իրար ձեռք ձեռքի գոալիս որպէս առուներ, որոնք մե-

ծանալով պէտք է աշխարհի անիւներն առաջ մղեն։ Ահա նրանք այսպիզից են սկիզբն առնում, այն մենացած մարդկանց ձեռքով։ Այսպիսով գպրոցը լինում է նրանց առաջին ուզեցոյցն ու կարապետը։ Ճշմարիք է, կան մարդիկ որոնք այս գպրոցներին շափ քիչ նշանակութիւն են դալիս։ բայց նրանց հիմքերն առաջ բերելը իմ այժմեան նախագահից դուրս է։ Նոյն իսկ այդ գպրոցների սրորին դասարաններում սովորած մեր մեքենական արդարին ձևերը, ինչպէս գրիչ բանելը, մարմիի դիրքը զրելիս, փառերի ձևերը, թւանշանները և այլն մեր կեանքի մէջ պէտք են և մէնք գրանցից չենք կարող հետանալ։ Նոյն այդ գպրոցներում, թէե քիչ, բայց և այնպէս մրաւոր ուզգութիւնը, զննական ուսումը, առարկաներ գի սելն այսպիզից է սկսում, որոնք հետզհետէ ուզգութիւն սրանալով, բարեյածող հերեւանքների կը հասնեն։ Արդէն հողերանօրէն հասպար Փաքու է, թէ որքան մեծ նշանակութիւն ունին առաջին մանկական հասակում կարարած գործերն և կրթութեան զօրեզ ազգեցութիւնը մարդու համար։ Որչափ մարդ հասակաւոր լինի, կարծես այնչափ էլ թարմ մանկական կամ պարանեկական լիշողութիւններ կ'ունենայ։ Թէե նոյն անձնաւորութիւնը կեանքի միւս փարիների, նոյն իսկ մօրիկ անցեալի գէապերը մուացած կամ թուլ կերպով կը լիշէ։

Հոգեկան հիւանդի համար էլ աւելի պարզ ու թարմ են մնում մանուկ կեանքի լիշողութիւնները, ինչպէս այս կամ այն ուխտագեղին օպարութեան գնալը։ Մինչև անգամ նա մահւան ժամերին մացրենի լեզով է ազօթել սկսում։ այն լեզով՝ որ գուցէ նա փաս։ Նեակ փարիներ չէր խօսել։ Ահա այսպէս է ազգում նոյնպէս անշուշու մարդու գպրոցական առաջին փարիների գասաւանդութիւնը իր կեանքի լիշուագաց փարիներում ևս՝ (թէե զա ոմանց համար կարող է բալորովին անզիփակից կերպով լինել) որոշելով նրա կարարելիքներն ու մրածողութիւնները։ Որչափ կուլպուրան առաջ գնաց, այնչափ էլ այս բանը աւելի կը ճանաչէի ու աշքի կ'ընկնի և այնշափ աւելի ուժ ու նշանակութիւն կը սրանան ժողովրդական և միջնակարգ դպրոցները։ Ներկայ հանգամանքների ու պայմանների մէջ պէտք է ժողովրդական ու միջնակարգ դպրոցների մանկավարժութիւնը մեր կեանքի, նրա պահանջների ու ձգութների հետ կա-

պել. Նա պէսք է ժամանակի պահանջները միշտ ի նկատի ունենաց կեանքի համար ծառացէ: Այս դպրոցը, մանաւանդ ժողովրդականը, պէսք է բուն գործնական կեանքին յետ դառնաց, որ նշանակում է դէսի բնութեան դիմէ:

Նոր ուզգութիւն պիփի տրւի դպրոցի առարկաներին. ինչպէս օրինակ տղաների համար ձեռքի աշխատանքի վարժութեան դասեր, իսկ աղջիկների համար եփելու և պնացին պիփոլքներն հոգալու դասագւառ թիւն: Դպրոցական պարտիզանութիւնը այս բանի հետ շատ կատ ունի: Եթէ այս պահանջները մանկավարժորէն մի փոքր աւելի մօսից քննենք՝ այն ժամանակ կը գետնենք, որ այս առարկաների մէջ զնողութեան համար մեծ նշանակութիւն ունեցող մեթոդիկական առաջադիմութիւն կայ գործնական կեանքի համար: Ինչպէս, օրինակ, ինչ բան է տղաների ձեռքի աշխատանքը՝ եթէ ոչ գծագրութիւնը և երկրաչափութիւնը կեանքի մէջ գործադրել: Եփելու դասերն ընդանեկան կեանքի մէջ ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ կուլուրական աշխատանքը խոհանոցի մէջ գործադրել: Սա նշանակում է գործնական բնական ուսուցումն և բնական պարմութիւն. իսկ դպրոցական պարտիզանական աշխատանքը կուլպուրական կեանքի ժամանակ մի գործադրւած բնական գիպութիւն է: Այսպէս, այս առարկաները միաժամանակ իրար հետ անմիջապէս կապւած են և չի կարելի մէկին կողմնակից լինել, միւսի դէմ կաւել, քանի որ բոլորն էլ ծառայում են գասարիարակութեան. իսկ աշխատանքը բնաւորութիւն զարգացնող դլխաւոր միջոցներից մէկն է, ոյնին իսկ կեանք է: Ծուլանալ, ոչինչ չանել մահ է. սրա համար էլ մանկավայրժութեան գլխաւոր նպաստակներից մէկը բնաւորութեան կրթութիւնն է, մի բան՝ որ մեզանում մոռացութեան է գրւած: Գործնական, կուլպուրական աշխատանքը միայն կարող է դասարակութեան իդէտական նպաստակին հասցնել: Արդաքին հանգամանքները, ինչպէս օրինակ փողի, նիւթականի, վարժ ուսուցչի և այլ բաների ողակասութիւնը կարող են մեզ առ ժամանակ յետ կանգնեցնել այդ առարկաները ճիշտ իր ժամանակին գործադրելուց, սովորեցնելուց. բայց սա երբէք չի կարող զօրեղ պարզաւ լինել այդ առարկաները ուսումնաբանից հեռացնելու, բաժանելու: Փորձը միշտ ցոյց է դաշիս, որ դրանք գործադրելի, հարկաւ որ և օդրա-

կար են, այսպիսով իհարկէ ուշը պիտի դարձւի նաև ուսուցչի պարագանութեան վրայ, քանի որ սա էլ գլխաւոր փեղ է բռնում։

Ուսումնարանական պարպիղի կարևորութիւնը գուցէ շատերը լաւ հասկանան, սա զննողական ուսման ժամանակ լաւ միջոց է և ոչ պակաս նշանակութիւն ունի դաստիարակութեան համար։ Նա-  
պերը այս աշխատանքից կարող են փախչել կամ նրա նշանակու-  
թիւնը հասկանալով կամ չուզենալով իրանց բորիկութիւնը ցոյց  
փալ կամ՝ չցանկանալով իրը թէ կեղագութել։ Ամանք էլ, որ  
աւելի հասկացող են համարւում, այդ չեն անում նրա համար,  
որ կարծում են թէ դրանով ուսումնարանի բարձր, վեհ,  
իրէալական նպատակը կը առորացնեն և իրանց երեալայական գա-  
ղափարները կը կորչեն։ Սակայն ամեն գէպքում էլ աշխատանքի  
դաստիարակութիւնը միշտ էլ կը մնայ դպրոցների դաշտափարական  
հիմնական խնդիրը։ Մանկավարժութեան յառաջ գնացած մասը չի  
կարող նորից յետ գնալ։ Եթէ մենք այսօր առաջւայ պէս մանկա-  
վարժութեան նպատակ ընդունենք հասկացողութեան և զդացմուն-  
քի (Խղճի) (Verstand und Gemüth) կազմակերպութիւնը, այլ նրա  
փեղ բնաւորութեան կրթութիւնը, այսինքն օգտակար գործելը,  
ապրելը, աշխատանքը՝ այն ժամանակ այլ ևս բնագիրութեան դաս-  
աւանդման մէջ չի կարող լոկ բնական առարկաների ճանաչելն ու  
համեմապելն նպատակ ընդունել։ Նրա հետ մենք պէտք է մի քոյլ  
էլ առաջ գնանք և բնութիւնը ճանաչել, դիրավետել կարողանանք,  
նոյն իսկ կուլուրական ուշխատանքը որպէս նպատակ ընդունենք։  
Այսուղի ի հարկէ հասկացողութեան կրթութեանը ոչ մի արգելք  
չի լինիլ, այլ դրանով նա կը սրւի ու կը կազմակերսւի նիշէ, օրի-  
նակի համար, մի աշակերտ Փիղիկացից դասեր առնելով իրանից մի  
ելեքորական մէքենայ, զանդակ կամ սրա նման մի բան շինէ, այն  
ժամանակ մի՞թէ ուսուցիչը նրան չի ասիլ, որ իրօք Փիղիկան լաւ  
է հասկացել, և մի՞թէ այս զործնական աշխատանքը նրա միաքը,  
հասկացողութիւնը աւելի չի սրիլ՝ քան լոկ մէքենայական կերպով  
սովորելլը։ Մարդ ակտուայ ինքն իրան մրածում է՝ ուրեմն ինչու-  
համար միւս առարկաների հետ էլ այդպէս վարւել, երբ զործնա-  
կանը ամեն կողմից օգտակար է։

Բնագիրական դասերի շնորհիւ մենք ուղացի հոգու մէջն էլ

ենք թափանցում, նրան անունդ մագսակարարելով։ Վերջապէս ժամանակ է, պէտք է փորձել այդ գոեսակ մեռած բնազիսութիւնների դաստանդութիւնը կենդանացնել. բաւական է այդ դասերով լոկ ու ցամաք կենդանական, բուսական կեանքը նկարագրելը. սրանք ըստերեւոյթին կան, բայց իրօք աչքակապ զննողութիւններ են. այդ կերպ պարապելը, այդ կերպ զննողութիւնները նրանց երբէք խկական կեանքը չեն պարզիլ։ Այդ նպարակին կարելի է հասնել՝ երբ պղաներն իրանք կենդանի կերպով մասնակցեն բնութեան այդ կերպ պարապելը, այդ կերպ զննողութիւնները նրանց երբէք խկական պիտութիւնների դաստանդման մէջ պարոցական պարտիզպանութիւնը պատուի զների, պազարու ծառերի հոգագուրութիւնն ու գիւղապնիքեսութիւնից պարզ հասկացողութիւն գույն է։ Սրանք հնարաւոր կը լինին՝ երբ գոլրոցը սեփական պարպէզ ունենաց, ուր լողաները գոլրոցի մէջ զննած, գոեսած, կլինին, բնական գիտութիւնների դասերի մի մասը կարող լինին զործնականապէս մշակել, կենդանի կերպով մասնակցելով։ Սա է միակ հնարաւոր ճանապարհը, և, ինչպէս գոեսանք, դարերի ընթացքում յացընի մանկավարժներն այդ մի չոյն են առաջարկել։ Կարծեմ կարելի է այնպէս անել, որ նոյն իսկ գոլրոցների մէջ առանց մի մեծ փոփոխութիւն ձգելու, առանց որ և է զգալի ծախս, զժւարութիւններ առաջ բերելու այս առաջարկածները հնարաւոր լինի գործադրել։ Այդ որարիճաւույլ փորձեմ մի թեթե ուրագիծ դալ, նոյն իսկ առանց գոլրոցական ժամերի թիւն աւելացնելու ու ծանրութիւն առաջացնելու։ Եթէ զարոցն խկապէս դաստիարակող է ուղում լինել, այն ժամանակ նա պէտք է զարոցական պարտիզպանական աշխատանքը պարտաւորիչ դարձնէ։ Այս բանը պէտք է նրա գլխաւոր ուղղութիւններից մէկը լինի և առաջնակարգ խնդիրների կարգում դասելի։ Այս զէպքում ի նկատի ունենալու չէ, թէ այս կամ այն դասարանը շաբաթական 16, 24 թէ 30 դաս ունի. կամ թէ դարոցական պարտէզը փոքր, մեծ կամ նոյն իսկ 50 քառակուսի արշին է և կամ թէ զարոցը դարեկան 5—50 կամ 100 սուբլի դարեկան այդ առթիւ ծախսելու է. այդ ամենը միևնունն է։ Դըպրոցական պարտիզպանութեան աշխարանքի էու թիւնը, հիմնական ուղղութիւնը ամեն մի հանդամանքի մէջ էլ միևնունն է մնալու Մի

փոքր մօպից ինկառի ունենանք մեր դպրոցներում եղած բնական գիրութեան վերին աստիճանի խեղճ դրութիւնը, հէնց օրինակի համար վերցնենք նոյն իսկ բարեխիղճ, գործից հասկացող ուսուցչին. նա աշխատում է այդ առարկան աշակերպներին բոլորովին վերացական, անհետաքքիր չգարձնել. և ի՞նչ կարող է անել, ինչ բանի կը հասնի... Ասենք, օրինակ, խնձորենու մասին է խօսքը. նա վերցնում է մի քանի ճիւղեր, դասարան է բերում ու այդ ամենը մի ժամանակ ընթացքում բուսաբանական կողմից զննել է բալիս, բացապրում, պատմում. և—վերջ Այսպէս էլ միւս բոյսերի և կենդանիների վերաբերմամբ, և այլն: Տղան թողնում է դպրոցը և մըրնում է կետնքի մէջ. միթէ այժմ կարելի է հաւաքալ, որ նա իր սովորածը կարող է գործադրել: Ֆաջողութիւնը միանդամայն կասկածելի է, քանի որ առօրեայ կեանքը միշտ էլ ցոյց է բալիս, որ այդ կերպ սովորած դասը, նոյն իսկ հէնց հետեւեալ կամ մի քանի գասեց ցեղոյն՝ մեծ մասով արդէն մոռացւում է: Անցնում է մի քանի տմիս, ուսուցիչը կրինել պալիս փանում է, որ զբանցից շատ բան աշակերպների գլխից ցնդւած է. և այդ հասկանալի է: Հոգեբանօրէն դա պարզ կերպով բացապրուում է, առանց դզաներին կամ ուսուցչին մեզագրելու: Եթէ աշակերտն ուրիշ առիթներ չունենայ ամբողջ խնձորենին փեսնելու, բազմակողմանի կերպով զննելու, նա շատ անգամ գունձենին ինձորենուց չի կարող զանազանել: Հէնց այդ փորձն է, այդ զննողութիւն է, որ անգրատգէտ պարսիդանին կամ նրա նման մէկին ծառերը լու ճանաչելու, նրանց կուլտուրական սկայմանները իննամելու կերպը և՛ սովորեցնում և՛ նրան վարժեցնում է. մենք էլ ասում ենք նա փորձւած է, փորձ ունի. թէև նա դպրոց չէ յաճախել և ոչ ոք նրան բնագիտական զասեր չէ պահել:

Ո՛չ, դպրոցական պարտիզանական աշխատանքը, մեր ժողովը այս նեղ դրութեան մէջ, մեծ լրագետական խնդիրներից մէկը պէտք է համարւի. նա մեր կեանքի մէջ նշանակութիւն է ունենալու: Սրա հետ ի հարկէ մոռանալու չէ, որ դպրոցական պարտիզանական աշխատանքը, դաստիարակութեան փեսակետից էլ շատ մեծ նշանակութիւն ունի: Մինչեւ անգամ՝ կարելի է ասել, թէ դաստիարակութեան գործնական գործադրութիւնը այսպեղ աւելի զօրեղ

կերպով աչքի է լնկնում՝ քան միւս բնագիտական առարկաների մէջ։ Գուցէ մեզանից շաբերը այս կամ այն դրբի մէջ գոնեն այն-պիսի յօդածներ, նիւթեր, ուր խօսում է ծառերի մշակութեան, սյուղների օգորի, ազդեցութեան, արտահանութեան, նրանց շքեղութեան՝ իբրև գեղեցկութեան առարկայի, կերակրի կամ պատղների յժարմ գործածութեան և այլ բաների մասին։ բայց այս ամենի մասին դպրոցական չորս պատի մէջ լսելը կամ կարգալը բոլորովին այլ բան է, քան պարագում, կենդանի ծառի մօտ գեսնելը, զննելը, անձամբ փորձելը, խնամելն ու հոգ տանելը։ ահա հէնց այսպեղ է գըրնւում ծառի, բոյսի խսկական դաստիարակչական մամենուր։ Եթէ այդպէս է, ուրեմն ամեն մի դպրոց պարագանոր է դպրոցական պարագէղ ունենալ, որի մի մասը պատղառու ծառեր են լինելու։ Երբ պատղառու ծառերի մասին դասեր լինեն, այնպեղ պէտք է պարապել, խօսել, բացապրել։ և իւրաքանչիւր դասարան, եթէ ոչ մի քանի, գոնէ մի պատղառու ծառ պիտի ունենաց, նրա վրայ ամեն դեսակի փորձեր պիտի անեն, պատւասպելու, խնամակարութեան ձեւերը պիտի սովորեն։ Այս բանը միւսելու է առաջին դասարանից և շարունակւելու է մինչև վերջին դասարանը, այսինքն մի քանի դարի շարունակ։ Ահա այսպեղ է աշակերտը սովորելու ծառի, փայտի, ծաղիկների, կոկոնների, դերեւների, պատղների, սրաւասպելու և այլ բաների մասին։ Նոյնպէս այսուեղ են գործնական կերպով սովորելու դարնան ժամանակ անպէտք և պատղառու ճիւղերի որոշելը, կորելը, արմարի հողի փափացնելը, պարարագանելու դեսակները և այլն։ Ամառն ու աշունքն էլ նոյն ծառերի պատղաբերութեանը, հիւանդութիւններին հետևել, իրանց արածի հետեւանքը գեսնել ու վարժել և եթէ հնար է սեփհական աշխատանքով ձեռք բերած պատղով վացելել։ Այս կերպ վարւելով դղաները ոչ թէ միայն դըրոցական վերջին դարուն կարող են աշխատել, այլ ամբողջ ուսումնարանական դասընթացի ժամանակ։

Արգեծք սրա համար շաբ ժամանակ է պէտք. ի հարկէ ոչ, կը պարասխանեմ։ Ուսուցիչը ամեն մի բնագիտական դասին հեշտ կերպով կարող է, գոնէ շաբաթը մի անգամ 10-15 րոպէ ժամանակ գտնել. դղաներին այդ ծառերի մօտ դանել որպէս զի նրանք այդ ծառի իւրաքանչիւր շաբաթւայ փոփոխութիւնը դեսնեն, զննեն,

խօսին զրա մասին թէ ի՞նչ փոփոխութիւններ են պատահել, համեմատեն և այլն: Եթէ դասի ժամանակ չբարձարւի, կարելի է նոյն իսկ գասերի վերջն այդ նշանակել: Այսպեղ ուսուցչի աշխատութիւնն ու հմըռութիւնը մեծ գեր կարող է խաղալ. առհասարակ նա այն դիսակ նիւթերի մասին է խօսելու, որոնք բոյսի համար էական նշանակութիւն ունին. կամ թէ պիտի այնպիսի ծառեր ունենալ՝ որոնք այդ կիմային շարժար են և կարելի է ընդհանրացնել ժողովրդի մէջ և կամ թէ այնպիսի պարագու ծառեր ներմուծել, որոնք թէ այդ կողմում գործածական չեն, բայց կարելի է աճեցնել և օգուտել: Այս պարագանով էլ պէտք է վաղօրօք զրանց մասին կանոնաւոր ծրագիրներ մշակել, որոնք այդ կիմայի և հանգամանքի մէջ գործնական են կամ կարող են լինել:

Այժմ մի այլ հարց. սրա համար շամբ փողի կարիք կը լինի. գարձեալ ոչ: Այդ ծախոն այնչափ չնչին է՝ որ նրա մասին խօսելն աւելորդ է: Ո՞ր դպրոցը մի կոր հող չունի, կամ չի կարող ձեռք բերել. սերմեր և մարտադ ծառեր ճարելն էլ մի առանձին մեծ ծախս չէ: Մնում է ինամարարութիւնն ու պարարպացնելու գեսակները և նիւթերը. վերջինս մեր երկրի համար շապ չնչին արժէք ունի: Դալով մի քանի կարեսը գործիքների, բահ, փէտափ և այլն. սրանք էլ կամ գպրոցն է ունենալու (զրանք բաւականին երկար ժամանակ կարող են գործածւել), կամ աշակերպներն իրանք ձեռք կը բերեն և կամ նոյն իսկ ընդհանուրից կոպէկներ հաւաքելով կարելի է լրացնել. այսպեղ միայն ցանկութիւն ու սիրու է պէտք: Խնձ սխալ չհասկանալու համար թող ընթերցողը չընդունէ թէ զրա համար պէտք է ծառերի սերմերը ցանելով աճեցնել կամ յերոց նրանց զանազան գեղեր գեղագուսել: Ոչ, սա բոլորովին այլ գործ է, որը ուրիշ կերպ ծառերի ուսումնարան է առւում: սրա համար շաբ աշխատանք, հոգագարութիւն է պէտք և աւելի քան մասնագիտական ու ապագա; բարիների գործ է և ոչ դպրոցական: Բացի ուսումնարանական պարտիզականական աշխատանքից, ես կ'առաջարկեի այդ պարտիզի հետ կատել և ունենալ փոքրիկ փորձնական դաշտ: (Kulturfeld): Սրանով բացի պազարու ծառերից՝ հնարաւոր կը լինի այլ բուսաբանական առարկաներով նոյն կերպ զբաղւել ու գործադրել: Այս գեղում առհասարակ մշա-

կւելու է այնպիսի բոյսեր, որոնք գարնանը ցանելով աշնանը հասնում վերջանում են. օրինակ, հայաբոյսերի տեսակներ, դգումներ, լրիներ, ոսպեր, կանեփ, ճակընփեղ և այլն: Իւրաքանչիր գասարան իր ուսուցչի առաջնորդութեամբ գարնանը պէտք է դրանք ցանէ և մինչև նրանց հունձը շարունակ նոյն խնամաբարութիւնը, խօսակցութիւնը, հոգաբարութիւնն ու զննողութիւնը լինելու է: Այս խօսակցութիւնները ի հարկէ պարբուժում է լինելու, այսինքն գողաները ուսուցչի հետ միասին այդ դասի կէսը իրանց ցանածները պիրի զննեն ու միւս կէսը դասարանում կրկնեն, լրացնեն, կապակցեն, համեմատեն և գործադրելու եղանակը դուրս բերեն: Նոյնպէս աշխաբելու է նոյն գործնական կերպով կցել բանջարեղէնների դասաւանդութեանը՝ թփերի պատուիների (քրյովնիկ, ելունիկ, զեմպանակ և այլն) դասաւանդութիւնը, նրանց ցանելը, խնամաբարութիւնը, զործադրութիւնն ու օգուազը և այլն:

Այս բոլորի խնամաբարութեան համար պէտք է իւրաքանչիր դասարան օրական փոփոխակի երկու երկու տղաներ ունենայ: Սրանց պարբականութիւնն է առաւոտները միւսներից շուրջ դալ դպրոց և դասերից առաջ ջրել (եթէ կարիք կայ ի հարկէ), աւելորդ կանաչները մաքրել և այլն: Մինչև անգամ նրանցից ումանք իրանց ցանկութեան համաձայն, եթէ ժամանակ ունին, կարող են ճաշերից յեկոյ էլ գալ ու աղասի կերպով աշխափել: Այս կերպ լինելով ամառայ արձակուրդներին էլ պարբէզը անխնամ չի մնաց:

Եթէ դպրոցական պարբիզում դեռ տեղ մնայ, այն ժամանակ պէտք է ծաղիկների մարդեր պատրաստել. ինչպէս օրինակ տեսակ պեսակ վարդենիներ, մանուշակ, շուշան, և այլն: Ցոյց դալ վարդենիների, ծաղիկների ազնւացնելու, պատուատրելու կերպը, աշնանը ծաղիկների մի մասը ծաղկամանների մէջ փոխադրելու ձեր, որով նրանք ձմեռն էլ բնութեան այդ փոքրիկ հրաշալիքներից զրկւած չեն լինիլ և ծնողների, ազգականների անւանակրչութեան կամ ծննդեան տօնի առթիւ սեփհական աշխափանքով դլուխ բերած ծաղիկներից ընծաներ կը պատրաստեն: Ոնում է մի բան, արդեօք դպրոցի պարբիզում դաշտային, մարդագետնի և ճահճային բոյսեր պէտք է պահել թէ ոչ: Սրանք արդէն բուն բնագիրական և զննողական դասերի համար նշանակութիւն ունին, քանի որ սրանց

առհասարակ արհեստուկան կերպով չեն աճեցնում, բազմացնում, այլ  
աւելի բնական կերպով են առաջ գալիս, թէև զիւղական դպրոց-  
ների կամ գիւղացի աշակերների համար կարող է նոյն խոկ գրն-  
տեսական կողմից էլ ծառայութիւն անել: Բայց դպրոցական պար-  
պիզում առաջին տիզը ողեզք է պալ պատապու ծառերին, փորձնա-  
կուն գաշտին և բանջարանոցին. քանի որ սրանց աճեցնելով,  
նրանց վրայ խնամք տանելով, պղաներն ուրախութիւն են զգում,  
մարգկացին կուլուրական աշխատանքին մասնակից լինում ու նրա  
վրայ ու շք գարձնում, աշխատում Միենոցն ժամանակ աշակերդները  
դպրոցական պարփիզանութեամբ զբաղւելով՝ նրանց մէջ կամայ-  
ական հետաքրքրութիւն կը զարթնի, որի հետեւ անքը լինում է  
այն՝ որ նրանցից մի մասը, թերեւ շատերը իրանց զների համար  
մի մի փոքրիկ բանջարանոց, ծաղկանոց կը պատրաստեն: Նրանց հա-  
մար այժմ ազատ ժամանակ բոյսերով, ծաղիկներով հետաքրքրւելն աւե-  
լի ու աւելի գրաւիչ կը գառնայի Ներեանքը լինում է այն, որ  
փղալք ազատ, մաքուր, թարմ օգի մէջ աշխատելով աւելի կազմա-  
կերպւած թռփեր, առողջ մկանունքներ, գւարթ կեանք կ'ունենան.  
մի խօսքով բնութեան թարմութիւնը նրանց թարմացնում է: Բայց  
դրանցից նախապաշարմունքների, սնուփիապաշտութիւնների ամենա-  
մեծ թշնամին՝ ինքը բնական դիրութիւնն է և հէնց սրա մէջն էլ  
կացանում է այդ առարկայի բարոյական նշանակութիւնը: Ինչպէս  
ասացի, նորից կրկնում եմ, որ այս գիւղակերպովն էլ նա պէտք է  
զպրոցներում խնամէի, գիւղակից կերպով զննէի, աւանդւի. սրա  
համար էլ այդ առարկան, որի մի մասն էլ զպրոցական պարփիզա-  
նութիւնն է, դաստիարակող և բնաւորութիւն կազմակերպող դասա-  
ւանդութեան համար անհրաժեշտ է: Դպրոցական պարփիզանու-  
թիւնը աշակերդներին միջոց գալով անձամբ ամեն մի բոյս, ծա-  
ղիկ, տերեւ, պղուղ քննելու զննողութիւն և զգացարանների վար-  
ժութիւն է պալիս. մի բան՝ որ նոյնպէս մարզու համար մեծ նշա-  
նակութիւն ունի, քանի որ քչերը կարող են իրանց զգացարանները  
ճիշտ գործադրել և կանոնաւոր ըմբռնել: Աս մեր մկրի միակող-  
մանի զարդացման մի պախարակելի կողմն է մեզ սովորեցրել են. շաբ  
անգամ միայն ակնոցներով գրքեր կրանել: Բայց չէ որ խսկականը  
անձամբ, փորձով ձեռք բերելով շապէ գնահատելի է, քան պատճ

թղթի վերայինը։ Այսպէս չանել և բաւականանալ չոր ու ցամաք գառերով՝ կը նշանափէ, շնորհիւ ժաւանդական օրէնքի, մեր տղաները ժամանակի ընթացքում ոչ կանոնաւոր տեսնել, ոչ ճաշակել և ոչ էլ հոգորդի պիտի կարողանան բառիս բուն նշանակութեամբ։ Պարուիզպանական աշխատանքը նոյնպէս առաջացնում է էսթետիկական հետաքրքրութիւն դէպի գեղեցիկը, բարձրը։ իսկ սրանք զգացմունքների վրայ բարերար ազդեցութիւն ունին։ Սյս աշխատանքը իր ծշմարդութեամբ ոչ թէ միայն բնաւորութեան կազմակերպութեանը օգնում է, այլ դրա շնորհիւ տղաները գեղեցկի հասկացողութեամբ ոգեսորում են։ սա էլ ի հարկէ նրա խղճի կամ զգացումների վրայ խոր ազդեցութիւն ունի։ Ծշմարտութիւն, գեղեցկութիւն սրան են պատկանում։ ուրեմն կը նշանակէ նա իսկապէս ծշմարիս, կրթող ուսուցման առարկաց է։ Զեռքի և պարուիզպանական աշխատանքի միջոցով տղաները ձեռքի վարժութիւն, կարգապահութիւն, ծշմարդութիւն, մաքրութիւն, խնայողութիւն, համբերութիւն, ճաշակի, գեղեցկի զարգացումն և ուշադրութիւն ձեռք կը բերեն։ Վերջապէս աշխատանքի շնորհիւ պղայք գործելու ձգումը, ընդունիքի, կեանքի կարիքները աւելի շուրջ և աւելի ճիշտ կերպով կը զգան։ Այսպիսով աշակերգները միրաւոր, խելացի դասողութեան ու գիտակցութեանը գործնական, զննական կերպով են հասնում։ իսկ այս բանը նշանակում է թէ իրանք իրանց ընդունակութիւնները կեանքի իսկական պահանջների համաձայն են գործադրում, նրանցով զբաղւում, ինքնուրոյն կերպով գործում, սեփական ուժերով անկախ առաջ գնում ու կապարելագործում։ Ահա պարուիզպանական աշխատանքի էական առաւել կողմերը։ ահա այս տեսակ գործոցի գասաւանդութիւնը շարկանոնաւոր կերպով կը լրացնէ դաստիարակութեան նշանաւոր և էական մոմենտը։

Այս ամենը կապարելու համար ի հարկէ մեծ զոհաբերութիւն պէտք չէ, մանաւանդ երբ այդ ամենը փոքրից սկսւի և պարեցարի ընդլացնացւի։ Եթէ ուսուցիչներից ոմանք այդ բանի համար այնչափ էլ պատրաստի չեն՝ այդ էլ հեշտ է լրացնել։ բաւական է, որ նրանք ցանկութիւն ունեն ան գրքերի, գիտակ մարդկանց միջոցով թէօրիան և գործնականը սովորել, անձամբ փորձեր անել։ Նամանաւանդ բնա-

կան գիտութեան ուսուցիչներն այս դէպքում՝ որպէս պապրաստի մարդիկ՝ միւսների համար օգտակար կարող են լինել։ Երբ վերոյիշեալները մեր միջնակարգ դպրոցներում ներմուծւի և գործադրւի, երբ նրանք օրինակելի փորձնական դպրոցական պարագէջներ ունենան՝ ահա այդ ժամանակ գործը շաբ հեշտանալով, մի գեղեցիկ օր էլ մեր երիտասարդութիւնն ու ժողովուրդը կուլպուրական այդ պրդից օգտւելով՝ յառաջ կը դիմեն։

---

## ՀԱՅԵՐԵՆԸ ՄՇԱԿԵԼՈՒ ՆԻՒԹԵՐ

(Կարդացած Բերլինի հայ ուսանող ժողովում, 1897)

ԳՐ. ՎԱՆՅԵՍՆԻ

Երբ մարդ թերթում է մեր վեպերը, բանագիրները և առասարակ գեղարվեստական դրամները, ակամաւ ան եզրակացութեանն է գալիս, որ մեր հեղինակները կմամ լիզի ճաշակ չունեն և կամ լիզու չըգիտեն, էլ չեմ միշում գիտական, հասարակական և հրապարակավիճ լողածները, ուր առհասարակ սակաւ կարենի է պատահել ճաշակով և մրածւած լողածների՝ լիզի կողմից:

Ամեն մի հեղինակ, ամեն մի բանագիր (ՌИТЕРАТОՐ) պիտի ջանալիք լիզուն պարզ թեթև և զիւրընթեռլի անելու—Շատ անբավանդակ զըրւածներ կարգացում են միմիան ընդուրի ու թեթև լիզի չնորո՞իւ և շատ շարերը մնում են առանց ընթերցողի լոկ լիզու ծանրութեան և ոճի անկանոնութեան սպառմառով. մեր լիզուն իւր բարբառներով մի բուրաստան է, որի բաղմաթիւ նիւթերից բանագիրը պիտի փնջէ միայն տղնիւը, դուրեկանը, թեթեւը եւ սովորականը.—Ալէտք է զրել կարճ, պարզ եւ նւազային<sup>1)</sup> եւ խուսափել ծանր ու անդուրեկան տարրերից, սա ոչ թէ մի առաջնորդող կանոն, ալ արիւն ու մալմին պիտի լինի ամեն մի բանագրի համար—Մենք սական ոչ միայն չենք առաջնորդում մի որ և է կանոնով, ալ և, որ ցաւալին է, արեղջում կամ հնութիւնից առաջ ենք քաշում անպիսի ձևեր, որոնք գեմ են թէ կենդանի լիզին, թէ գեղարվեստի պահանջներին և թէ գրարական դրամաբանութեանը:

Այս անդամ մենք կ'աշխատենք ցայց տալ մինը, ապա, նեղինեռէ շարերը... Վերցնենք օլինուակ եցուցիչ—ացուցիչ (ցուցիչ) մասնիկը, որով

<sup>1)</sup> Այս պարբերի մանրամասն բացադրութիւնը և լիզի գեղեցկութեան էական հիմունքներն ընթերցողը կը գործի մեր լողածում, «Հակերէնի նւազակնութիւնը» «ՄուբՃ» 1897.

այսօր ածականներ և գուականներ են կազմւում: Համողեցուցիչ, խռովեցուցիչ, պարբաւութեցուցիչ, վրդովեցուցիչ, գրգռեցուցիչ, ներկայացուցիչ, և այլն և այլն սովորական և մերին առաջճանի ընդհանրայած ձեւներ են մեր առաջնակարգ բանագիրների մօղու—դա մի կոպիր զրաբար ձև է և հնացած, ուր սական դորա կիրառութիւնը վերին առաջճանի սահմանափակ է; առաջին, սրովներու ալլ ձեւը անկարելի է զիւրութեամբ արդառաննել չնորհու երկարութեան ու կոպտութեանը, երկրորդ՝ սրովներու գրաբարը ունի զորա մի աւելի կարծ և ընտիր ձեւը՝ ինչ—վերջաւորութեամբ, զոգոից խոռովից վրդովիչ և ալլու, ու վերեխնի պարզ կրծագումն է: Մենք մոռացութեան ենք քահել տոս վերջին աւելի նոր և ընտիր ձեւը, ուժ գալով առաջինի կիրառութեանը: Խճ ծանօթ կինդանի բարբառներում առաջին ձեւը բարսութին չունի աճն լայնի պարճառով, որ լեզի զարդացման ընթացքին հակառակ կը լինէր ադպահոի անճունի ձեւների պահպանումը, և մենք, զօրացնելով դորա կիրառութիւնը, ոչ միայն մեր գեղասիրական պահանջներին դէմ ենք զնում, ալլ և, լեզվի զարդացման ընթացքին հակառակ, մի առաջին թռիչք ենք կաֆարաւ գէպի մեռած և անշահ հնութիւնը, սրեղծելով ձեւներ, որ մենք ինքներս անկարող ենք արդարաւաննել: Թող, օրինակ, ընթերցողը փորձի սովորականից մի քիչ արագ հոլովել հեռենեալը, ներկայացուցիչ, ներկայացուցիչով, ներկայացուցիչով, ներկայացուցիչներից, ներկայացուցիչներով և ալլն և պիու նկատի, որ դիւրին զործ չէ կարարածը: Հարիւրից իննալառնը չի կարող ալդ ձեւը ուղիղ, արդարաւաննել: —Եթէ մենք հաւերս մեր զրածը չենք կարող արդարաւաննել ում համար ենք զրում հասկա, չինացիների...»

Թող ընթերցողը համեմարէ նաեւ ալդ ձեւներից ելած ածանցները, ներկայացուցչութիւնն, ներկայացուցչութեամբ, ներկայացուցչութիւնից... կամ երդմնիցութիւնն, երդմնեցուցչութիւնից, երդմնեցուցչութիւններից, և կամ նախազդուշացուցչութիւնն, նախազդուշացուցչութիւնից,... նախազդուշացուցչութիւններից և ալլն և ալլն, ուր չորս հար սուր և ծանր բազաձների (ց. չ.) կուռակումը անկարելի է զարձնում բառն արդարաւաննելը: Արանք դէմ են մեր լեզւի ամենառարբական կանոններին, սրանք բարբարութիւններ են, որ օր առաջ պէտք է վանել մեր զրականութիւնից:

Դնչապէս: կը հարցնէ ընթերցողը, թնչով փոխարինենք զրանք:

Անցեալ անզամ մենք գերանունների պակասու մարնանիշ անելով, պուց տունք և նորա զարմանը, զա լեզվի ներկայացրած ձեւներից խելացի կերպով օպուսելն էր: Անտեղ պակասն ենք լրացնում ունեցածով, ալսորեղ վարը պիտի փոխարինել լաւով:—Այսպէս—զրգուցուցիչ, պիտի լինի զրգուցիչ և կամ, պէտք է վերջնել զրան լիովին համազօր և համապարասիան արար ձեւը, խռովեցուցիչ=լոռվարար, ուրախացուցիչ=ուրախարար:

Սէս ձեերը միան արդաքուսոր են փարբեր, ներքուսոր ոչնչով չեն զանագանւում միմեանցից, սրանց արդալաղուած միտքը թւարանօրէն նունն է, Վերջին ձեերի առաւելութիւնն ան է, որ նրանք փափուկ, դուրեկան և հաճելի են ականջին, կարծ են, հեշտութեամբ են արդասանւում ու դըրւում, ազնիւ են: Այսպէս ուրեմն, մենք կ'ուղղենք հերեւալ ձեերը.

համովեցուցիչ=համովիչ կամ համովարար,  
 խոսվեցուցիչ=խոսվիչ—խոսվարար  
 վրդովեցուցիչ=վրդովիչ—վրդովարար  
 սթափեցուցիչ=սթափիչ—սթափարար  
 զրազեցուցիչ=զրազիչ—զրազարար (?)  
 մերկացուցիչ=մերկուցիչ—մերկարար (?)  
 բարուականացուցիչ=բարուացուցիչ—բարուարար (?)  
 թարմացուցիչ=թարմարար—թարմացնող  
 ամբողջացուցիչ=ամբողջարար—ամբողջացնող  
 նւազեցուցիչ=նւազալար  
 նւասորեցուցիչ=նւասորիչ—նւասորար  
 բաւականացուցիչ—բաւարար,  
 պար բաւորեցուցիչ—պարուորիչ—պարուաւորական  
 հանդարուեցուցիչ—հանդարտիչ—հանդարուեցնող  
 հանդսուացուցիչ=հանդուցիչ (?)—հանդիսուարար  
 կենդանացուցիչ=կենդանարար,  
 ուրախացուցիչ=ուրախարար, ուրախալի,  
 գոհացուցիչ=գոհարար.  
 զզուշացուցիչ=զզուշարար  
 (ազարեցուցիչ)=ազարիչ—ազարարար  
 (կումեցուցիչ)=կումարար.  
 վարժեցուցիչ=վարժիչ.  
 վհարիցուցիչ=վհարիչ  
 զրդուցուցիչ=զրդուցիչ և ալին...

—արար ձեսվ են կազմւած հետեւալ ընտիր ածանցները—ազդարար (ազդեցուցիչ), լուշարար (լուշեցուցիչ), չարարար (չարեցուցիչ), վարար (վարարող, վարարիչ) և որքան կոպիտ ու անդուրեկան են փակադում զրած ձեերը..

Կալ և մի երբորդ ձե, չէզոք լի վերջաւորութեամբ, կարծ, կոկ և վերին աստիճանի նւազալին ու փափուկ, սովորական թէ զրաքարում և թէ մանաւանդ կենդանի բարբառներում, որ սական մոռացութեան է մարտնչուում ոգիրութեան չնորհիւ, այսպէս՝ թխել են զզեցուցիչ, զարիութեցուցիչ, ծանծրացուցիչ, մոռանալով զարհուրելի, զզւելի, ծանծրալի ընտիր ձեերը: Վեր-

Ջին երկու դարւակ ընթացքում սկսւեց և ընդհանրացաւ ապշեցուցիչ, սոսկացուցիչ=ապչելի, սոսկալի:

Կաէց ցուցիչ մասնիկի կրծադրման նաև մի չորրորդ ձեւ, մահացու—փռխանակ մահացուցիչ.

**բաղկացու=բաղկացուցիչ,**

ինձ թւում է, որ ազդ ձեռվ կարելի էր կրծադրել.

**ներկալացուցիչ=ներկալացու,**

**ներկալացուցչուհի=ներկալացուհի**

**երդմնեցուցիչ=երդմնեցու (երդումարմբ)**

Ով մի կողմը թողնէ ողիտութիւնից առաջացած սովորութիւնը և մի դասն անգամ կրկնէ վերջին ձեռքը առաջինների համեմատութեամբ, պիտի համոզվի, որ մեր առաջարկը վերել կրծադրման հիմամբ ոչ կամացական, ոչ էլ բռնազրօս է: Մեր ականջի և լեզվի համար գերադասելի է վերջինը:

Ավագէս ուրիմն՝ քանի որ ացուցիչ, եցուցիչ կամ ցուցիչ մասնիկն արդասանելը վերին աստիճանի դժւար է, քանի որ նորա հերքն անգամ չկաէ կենդանի բարբառներում, քանի որ նա վերին աստիճանի անդուրեկան է, և նորա կիրառութիւնը լեզվի զարգացման ընթացքին հակառակ, մենք առաջարկում ենք ազդ մասնիկը իսպառ ջնջել մեր լեզվից ու զրականութիւնից, փոխարինելով՝ համազօր իչ, արար, ցընող, ցու և լի մասնիկներով:

## ԱՆՑԵԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԸ

ԵՐԻԱՆԴ ԴԱԶԱՐԵԱՆԻ

(Շարունակութիւն և զերջ<sup>1)</sup>)

Ծանր և տիսուր պարզականութիւն է՝ բանձնառու լինելու անցած օրերի մասին... Յիշարակելով անցեալի երազակին գեղեցկութիւնները՝ մարդ ակամաչ աչքը դարձնում է ներկայի վրայ, ակամաչ ցանկանում է խմանալ թէ ինչ կապ, ինչ առընչութիւն կաչ անցեալի և ներկայի մէջ, և որքան արդարացած են ներկայումս անցեալի երազները, լուսերը, Ներկան, աճն ներկան, որով մենք ապրում և դանչւում ենք,— մի կարարեալ հակասութիւն է մեր սորասածի և լուսերին ինչնուն է հակասութիւնը,— ամեն բանում. մեր ամբողջ կեանքը հակասութիւն է՝ աճն, ինչ որ լինելու էր և աճն, ինչ որ է... միմենաց հակապարկերներ են կարարեալ: Ահա ալդ անցեալի և ներկայի հակասութիւնը, երեակալած ու սպասած իդէալի հառն ներկայի՝ ծայրակեղ, վրգովեցուցիչ իրականութեան հակասութիւնները՝ ահա թէ ինչ է ներկալացնում մեր այժմեան կեանքը, ահա ինչ հոսանքներից է առաջանում մեր այժմեան կեանքի փոթորիկը... երկու հակասութիւններ, ծայրակեղ հակասութիւններ: և հարկի

1) Տես սկիզբները Մուրճ 1894 №-ներ 10 և 12:

Դորոգ հանգուցեալ-կեռ ևս երիտասարդ հեղինակի լոդւանի ալս վերջին կոտորը, զրւած ու լանձնած մեղ լոդւածի երկորդ մասը տպւելուց ինորոյ, մենք իւր ժամանակին չոպագրեցինք զինաւորապէս վերջին դողերի պարճառուվ, որոնց մէջ մենք նկադիցինք առնչութիւն հեղինակի անհարական կեանքի մի դէպքի հերու: Անձնական պարճառը վերացած լինելով՝ տպագրում ենք այս վերջին մասը, առանց որ և է փոփոխութեան, լոկ որպէս հեղինակի մի աւանդ:

Հանգուցեալ և. Պարզաբանից մեռմ են մեզ մօդ այլ ձեռագրեր լանձնւած մեղ, մեծ մասութիւններկաչ լոդւածից լեցող:

ԽՄԲ.

ամեն մարդ չի զգում ալդ սպանիչ հակասութիւնների պարզառառած ալլող կակիծը. ոմանք չափազանց կուշո և բազգաւոր լինելոց, շառերն էլ չափազանց աղքատ ու ճնշած, նւազած, բթացած լինելուց՝ անընդունակ են գառել հասկանալ մեր կեանքի ներքին, ողեկան, բարուական թերութիւնները, ի՞նչ կարող է հասկանալ և զգալ հասրակաշի վաճառականը, որի կարծիքով կեանքի մէջ ամեն բան առեպուր է, որ բացի կոպէկների ու մանէթների տեսակէտից՝ ուրիշ բարուական հիմք չունի իր բոլոր մըրքերի ու ձգումների մէջ, Առեփուր—ամեն բան առեպուր... Ապրանքի առեփուր, մարդկանց լարաբերութեանց առեփուր, ծանօթութեան, բարեկամութեան, ընկերութեան առեփուր, վերջապէս խղճի, զգացմունքի, սիրու և աղելութեան առեփուր... Ամեն, ամեն բան՝ առեփուր. Այս է մեր վաճառական և, առհասարակ՝ հարուստ, ապահով դասակարդի բարուականութիւնը՝ նրա հաւարու հանգանակը, Վնչ կարող է հասկանալ և զգալ խեղճ արհեստաւորը, կամ երկրագործը, որ ամբողջ օրը կռացած աշխատանքի վրայ աչքը չի էլ կարողանում բարձրացնել դէպի Աստուծու երկինքը, որ ամբողջ իր կեանքում զբազւած է վազւան կոր հացի խնդրութիւնը Բարուական իդէալ, հոգեկան վսեմ պահանջներ, —ալդ ամենը անհասկանալի, անմարչելի բաներ են նրա համար. Նա ինքը կեանքի ճնշող հանգամանքների զոհն է, նա ինքը, իր սիփական շնչքի վրայ դանում է անարդարութեան ծանր լուծը. բայց նրանում չկաչ զիտակցութիւն, չեաչ ինքնաճանաչութիւն—ե նու իր ալդ ճնշւած, զրկւած ու անարդւած դրութիւնը համարում է բնական, անխուսափելի և իր առօրեակ կորուծ չոր հացի ու խմած սառը ջրի համար՝ անդադար փառք է բալխս Ասրծուն կեանքի հակասութիւնները սրան ևս անհասկանալի են, ալդ կողմից ուս բազգաւոր է...

Մնում է մի դասակարգ, մնում են մի խումբ մարդիկ հասսրակութեան մէջ, կարծես միանց դրանց համար լինի հնարած ամեն դեսակ բարուական հասկացողութիւններ. ե՛ խիզ և՛ զգացմունք, և՛ պարզաճանաչութիւն, ե՛ սէր, ե՛ դանչանք, ե՛ աղելութիւն. Այդ մարդկանց զժւար է ինտելիգենց անունը բալ, որովհետեւ շաբ փչացրած ու խեղաթիւրած է ներկալում ալդ անունը. ինտելիգենց անւան բակ ալճմ մեր մէջ ապրում և զորում են կարարեալ ժուլիկներ, հացկաբակ անբան անասուններ, վերջապէս մաքնիչներ, դաւաճաններ... Խիզճ, պարզաճանաչութիւն, մարդկանքին պատուի և արժանաւորութեան հասկացողութիւն՝ բալորավին գոյութիւն չունին ալդ դեսակ «ինտելիգենց» մարդոց համար. Խակ ալն մարդիկ, որոնք առաջնորդում են խիտը բարուական մկզբունքներով, որոնց համար կեանքի մէջ ամեն բանից բարձր է՝ իրանց համոզմունքներն ու զաղափարները, որոնք չնորհիւ իրանց ամուր համոզմունքների ու բարուական նուրբ պահանջմունքների կեանքի մէջ միշտ հալածանքների ու զրկանքների են մարդնը լուած, —զրկւած են նուն իսկ ամենահասարակ, բարբական լարմարութիւն-

Ներից ու վայելքներից՝ ալդպիսիները շատ անդամ զրկւած են լինում նաև ինտելիգենտ անունը վայելելու իրաւունքից. Ազդ այն մարդիկն են, որոնց համար խղճի զարտասրանը ամեն բանից բարձր է, որոնք զիրեն անկեղծ հաւատալ, անկեղծ ոգեորել ու գրաւել, որոնց համար գոլութիւն ունի կեանքի մէջ բարուական գեղեցկութիւն, հոգեկան վսեմ ու աղնիւ ձգումներ, որոնք զիրեն վ'րջապէս խորը սիրել ու տանջւել. — Այդ ընդունակութիւնով կարելի է չափել նաև մարդու բնաւորութեան ազնւութիւնը... Իդէալի և իրականութեան հակառակութիւնը ամենից շատ վիրաւորանք ու տանջանք նրանց է պատճառում. Այդ բանը մենք զիրենք մեր սեփական փորձից, մեր սեփական կաշու վրաէ դդացածից... Այս ասեցի որ սիրելու և տանջւելու ընդունակութիւնով կարելի է չափել մարդու բնաւորութեան ազնւութիւնը. Ճիշտ է, որովհետեւ սիրել ու տանջւել կարելի է ոչ միայն մի կնոջ համար, այլ և մի գաղափարի, մի բարձր իդէալի համար, այլ և հայրենիքի, ժողովրդի, մարդկութեան համար. Այն ոէրը, որ մեզ ոգեստում, կազդուրում էր պատրանեկան հասակի մէջ՝ սէր զէպի զիրութիւնը, սէր զէպի վերացական ճշմարդութիւնը, սէր զէպի ազնիւը, բարձրը, իդէալականը՝ այդ սէրը ներկատումս դառել է մեզ համար տանջանք, պատրունաս. Այժմեան կնանքի իրականութեան մէջ բոլորովին հարկաւոր չին այն սրբութիւնները, որոնցով մենք ապրում էինք, որոնցով մենք երդում էինք. Օրինակ՝ ազնւութիւնը... Մեր պարանեկան հասակում ունեցած ազնւութեան զաղափարը այժմ կարելի է գտնել միայն գրքերի մէջ՝ այն գրքերի, որոնցով մենք սնւել ու մեծացել ենք. Այն երեելի գրքերի, կամ, աւելի ճիշտ ասած՝ նրանց անման հեղինակների քարոզած ազնւութիւնը շատ բան էր պահանջում մարդուց, — այնքան շատ, որ ազնւութիւնը, փառքը և անձնուրացութիւնը համանիշ խօսքեր էին մեզ համար. Մինչ հիմա էլ երբ ես մրածում իմ որ և է մարդու հասարակական զործունէութեան մասին՝ շատ անդամ միրս է գալիս ուստ բանադրեղծի նշանաւոր ուրանաւորը՝ «Դոբրոլիւրովի վշապակին» նւիրած...

Суровъ ты былъ. Ты въ младые годы  
Умѣлъ разсудку страсти подчинять;  
Училъ ты жить для славы, для свободы,  
Но болѣе учишь ты умирать.  
Сознательно мірскія наслажденія  
Ты отвергалъ, ты чистоту хранишъ,  
Ты жаждѣ сердца не далъ утоленья;  
Какъ женщину, ты родину любилъ,  
Свои труды, надежды, помышленья  
Ты отдалъ ей. Ты честныя сердца  
Ей покорялъ, и азъ.

ի հարկէ Դոբրոբիւբովը մի բարոյական հսկաչ էր և նրա գործունեութեան օրինակը չի կարող պարզադիր լինել ամենքի համար։ Այս, օրինակին հետեւելը մեր, հասարակ մանկանացուներիս ոչժերից վեր է, բայց ևս խօսում եմ այսուեղ միայն գաղափարների, հասկացողութիւնների մասին։ Մենք էլ ալդպէս էինք հասկանում ազնւութիւնը։ մնր համոզմունքով աղենիւ չէր նա, ով մրածում էր մի կերպ, վարւում էր ուրիշ կերպ, ով չէր աշխատում կեանքի մէջ իրագործել իր սիրած ու պաշտպանած գաղափարները։ Իր մոքերին, համոզմունքներին հակառակ գործելը ամենամեծ սրուրութիւնն էր համարւում մեզ համար։ Դեռ աւելի ևս, ազնւութեան գաղափարը մենք միշտ կապում էինք յառաջադիմութեան, լուսաւորութեան, աղադամրութեան հետ։ մեր կարծիքով՝ հին, պահպանողական, աւանդական մոքերի ոէր մարդը չէր կարող աղնիւ լինել՝ բառիս բուն նշանակութեամբ... Այս պարուառով, պահպանողական լրագրները՝ «Մեղու» «Նորդիար», «Արձագանք» գեռ մինչև հիմայ էլ մեր աչքում երեւում են, որպէս անազնիւ հրադարակութիւններ։ Խսկ «Մշակը», ընդհակառակը, ամենից շատ մեզ դուր էր գալիս իր ազնիւ, անխարդախ, ճշմարդախօս ուղղութիւնով։ Գրիգոր Արծրունին մեզ համար ազնւութեան, արդարադադութեան, անկեղծութեան մի կարտարելատիպ էր։ Նրա աղնիւ ու առաջադէմ զաղափարներամ ներշնչած լողւածները, նրա պարզախօս, անվախ ու համարձակ պղկեմիկական գրւածքները մի մի ուժեղ հարւածներ էին, որոնցով նա մեզ շարժում, շնցում, դուրս էր հանում միր զաղափարական թիւրիմացութիւններից... Մանաւանդ նշանաւոր էին մեզ համար նրա յարձակումները տգիրութեան, խաւարի, ասիական կոպիտ հասկացողութիւնների դէմ։ Այդ կողմից ևս նա մեզ սաստիկ դուր էր գալիս։ Արծրունու լօբելեանի առթիւ ևս, բոլորովին ինքնաբերաբար, մի փոքրիկ ոտանաւոր գրեցի, որպես գովում եմ նրան հէնց ալդ կողմից։ Այդ սրանաւորը, որպէս անկեղծ սրտից բզիսած մի արդիւնք, որպէս կարծիք մի անփորձ երիտասարդի, որը բոլորովին ինքնուրացն ու ազատ կերպով լավանուած է իր կարծիքը մի նշանաւոր գործիչի մասին։ կարևոր է։ Մանաւանդ որ նրանում արդարաւուում է նաև մեր այն ժամանակւալ սեփական աշխարհականողութիւնը... Ուրանաւորը հետեւալն է։

Երանի նրան, որ գիտէ ապրել  
Գաղափարների բարձր հոսանքով,  
Որ գիտէ սիրել ճշմարդութիւնը  
Իր աղնիւ հոգու բոլոր ողբերով։

Որ գիտէ կուել տգիրութեան գէմ,  
Հալածել մութը կէս գիշերալին,  
Եւ ալդ կուփ մէջ զոհել ամէն բան,—  
Ասին հրադարանք, վակելք մարդկալին։

Ալդ բոլորի գոեղ նա սրանում է  
Անսիթ, հոգեկան մեծ զւարճութիւն,  
Ալդ բոլորի գոեղ նա ժառանգում է  
Սէր, համակրութիւն և անմահ անուն:

Ես մինչև հիմայ էլ պատրաստ եմ սփորագրել այս որանաւորի գոակ, որովհետեւ նրանում լաւցնա՞մ մոքերը մազի չափ անդամ չեն փոխել ինձանում:

Խօսքս ազնւութեան վրաչ էր, ուրեմն մեր հասկացած ու դաւանած ազնւութիւնը՝ պահանջում էր մարդուց զոհաբերութիւն, անձնուրացութիւն։ Հաւարձ՝ առանց գործի—մեռած է, այնպէս էլ ազնւութիւնը՝ առանց զոհաբերութեան,—չէզոք ու անգործ ազնւութիւնը՝ մեռած, անօդուր բան է...

Ալդ գեսակէտից՝ ազնիւ չեն նրանք, ուլ ոչ օգուտ է գոալիս ուրիշներին՝ ոչ վեսամ. ազնիւ չեն այն չէզոք անձնուրութիւնները, որոնք սահմանափակում են լոկ իրանց և մօտիկ բարեկամների շահերով, ինգուրեսներով—ազնիւ չեն այն բոլոր պատրաստ ու «ազնիւ» քազաքացիք, որոնք լոկ իրանց կեանքը զանազանակերպելու համար՝ ձեռնարկում են այս կամ այն օդուակէտ գործին, այս կամ այն ընդհանուրի շահերին ծառալող փոքրիկ բարեկարգութեան... Ունկ որ իր խաչը չի վերցնում ու չի դալիս իմ չետեցից՝ նա չէ ինձ արժանիու—Չիսուսի այս խօսքերը շատ լաւ բնորոշում են մեր ունեցած հասկացուղութիւնը՝ ազնւութեան մասին։ Այս գեսակ հասկացողութեամբ կեանքի մէջ մոռնողը՝ ինչ եղրակացութեան կը գաչ երբ ամեն օր իր շուրջը նկատէ, որ մարդիկ սովորաբար և՛ խարում են, և՛ կեղծում են, և՛ զոդանում են, և դաւաճանում են միմնանց, — ու դարձեալ շարունակում են ապրել, ու դարձեալ նրանց լեզւի վրաց գործածական խօսքեր են. «ազնիւ մարդ», «պատրաստ քազաքացի», «անկեղծ բարեկամ», «հաւարարիմ լնկեր» և այլ ուրիշ տեսակ անդեղի խօսքեր, — ինչ եղրակացութեան կը գաչ մաքուր և չապականած մի երիտասարդ, երբ իրականութեան մէջ դեռնի, որ աշխարհում ամեն թան թարս է, որ կեանքի մէջ անբարուկան, խարերայ, կեղծաւոր մարդիկ՝ ազնւութեան ու առաքինութեան դափնիներ են վախելում, իսկ ճշմարիտ ազնիւ, ճշմարիտ ու գործունեալ, անձնազոհ մարդիկ հալածւում են մեր մէջ անշարութեան, աղքաղութեան ու ցեխերի մէջ են անցկացնում իրանց օրերը... Այս զատարկ խօսքեր չեն, ընթերցող, այս մեր կեանքի իրականութիւնն է. խոճի, զդացմունքի և բարուականութեան հակասող իրականութիւնը. Կրկնում եմ. ինչ կը զգաւ մի երիտասարդ, որի մէջ խիղճը զեռ չէ մեռած, որի զգացմունքները զեռ թարմ են՝ գեսնելով մեր կեանքի ալդ խորը հակասութիւնը՝ զազափարի, իդէալի հետ և քանի մարդ զգալուն ու մաքուր է հոգեսպէս, քանի ուժեղ են նրա բարուական համոզմունքները, թանգ են նրա համար նվիրա-

կան դարձած սկզբունքները՝—այնքան էլ դժւար կը լինի նրան ականագրես լինել, համոզւել ու չօշափելի կերպով զգալ որ կեանքը, առօրեալ կոպիր կեանքը՝ ոչինչ կազ չունիւ աղնիւ զաղափարի ու խգէալի հետ, որ մարդիկ ամեն մի բոպէ դաւաճանում են այդ զաղափարին, որոքի դակ առնում և հանգիստ խղճով ապականում են ամեն դեսակ սրբութիւն... Մարդիկ ամենալի օր ոչ միայն իրանք զաւաճանում ու ողնակով են անում ամեն գեսակ տուրբ գաղափար, այլ և հալածում, անգութ կերպով ոչընչացնում են ամեն դեսակ այնուութեան, վսեմ զաղափարի, կամ սկզբունքի ներկայացուցիչներին... Մեր ալֆմեան, առօրեալ կեանքում՝ շատ սովորական բան է գառել այն պահանջը թէ՝ մարդը պիտի աղնիւ լինի, թէ աղնուութիւնը առաքինութիւն է, թէ աղնիւ մարդիկ արժանի են պատւի, չարգանաց... Այդ իս ինքն ըստ ինքեան, բայց երբ աղնիւ մարդը զուրս է գալիս մեր մէջ՝ իր վսեմ համոզմունքներով ու ձգութեաներով, և մեզ հրաւիրում է գործի, —մենք (մեր ալֆմեան հասարակութիւնը) կասկածով ենք վերաբերում դէպի նա, բամբասում, աշխագում ենք անւանարկել նրան, աշխագում ենք արագ աւորել նրա մաքուր անունը... Մեր հասարակութիւնը չի հաւաքում նրան, չի ընդունում նրա ձեռնահասութիւնը, որովհետեւ աղնիւ սկզբունքների ու զաղափարների դէք մարդը անդանելի է նրա համար՝—կեղծաւար, շողոքորթ մարդոց հովանաւորող, պաշտպանող ու սիրող հասարակութեան, և ալբակո՞ւ մոնելով կեանքի մէջ, շվեկով մեր հասարակութեան զանազան խաւերի հետ՝ զրքերի ու բարուական համոզմունքների ազգեցութեամբ գատփարակւած, մնւած երիտասարդը մի շալք գառն փորձերից, անաջողութիւններից չեղու՞ կադարելապէս հիասթափւում է իր ավերացական երանութիւնից, համոզւում է, որ կեանքը ոչ գիրք է և ոչ զաղափար... Կեանքը մի կոշու կոպիր իրողութիւն է, փաստ է, որ ունի իր սեփական րայսոն Շեթե-ը, իր սեփական որամաբանութիւնը և մեր հասարակութիւնը ապրում է այդ իրողութիւնով, այդ կեանքով. կեանքի պրոցէս կադարելը, ապրելու վափագը ամեն բանից բարձր է հասարակութեան համար, —թէ բարձր զաղափարներից և թէ աղնիւ զրքերից, և այլ պատճառով՝ լոկ աղնուութիւնը, համոզմունքների ու խղճի հերենելը, սուրբ նպատակների ու ձրդութեանիր դէք լինելը՝ համարում են մեր մէջ վերացական, օդալին, անհասկանալի բաներ, հանդիպում են կեանքի մէջ ոչ միայն խոչնոտունների, այլ և կադարպի հալածանաց, Հիասթափւած, ջախչախւած, բանջւած երիտասարդը ակամալ հաշուում է այն մոքի հետ, որ աղնուութիւնով, համոզմունքով ու բարձր զաղափարներով չի կարելի ապրել կեանքի մէջ... որ առօրեալ, գործնական կեանքը պահանջում է մարդուց բարուական սովորութիւն, բարուական զիջումներ, Մեր պատանեկան անցեալի, փալուն, ճաճանչաւոր անցեալի չիշարակը այդ է մնացել մեզ համար, Ո՛րպիսի դառն չիշարակ:

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՃՈՒՂՈՒՐԵԱՆ, ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ. — Աղա սուրբ Սարգիսը եւ  
Մալաք տատի հաւատող. գիւղական կեանքից. Թիֆլիս. տպ. Մ.  
Նարաձէի, 1899 թ. 63 էջ. գինը 15 հ.

Ով կարդացել է Ճուղուրեան քա-  
հանակի «Մոռացւած աշխարհները»,  
նա նկարած կը լինի, որ Ճուղու-  
րեանը մի անուշաղիր գրող է, և որ  
այդ—նլա բնորոշ չափկութիւնն է:  
Նրա գրելու շնորքը ինքն իրան չի  
ճանաչում, ինքն իրան չի կրթում  
ու կանոնաւորում. և այդ հանգա-  
մանքը իրը ճեղիւանք բալիս է մի  
երեսկթ, որին մենք «անուշաղրու-  
թիւն» անունն ենք բալիս, աւելի  
բարմար արդաշագութիւն չունե-  
նալու պատճառով: Անուշաղիր լի-  
լը նրա գրւածներում երեսում է  
ամեն կողմից. թէ նիւթի ընդրու-  
թեան, թէ գրւածքի մասերի փո-  
խազարձ կապի ու դասաւրութեան,  
թէ նիւթը մշակելու եղանակի, թէ  
գրւածքի ձեր ու լեզվի և թէ նոյն  
իսկ հրաժարակութեան կողմից: Սա  
մի անարեսոր կերպով գործող շնորք  
է, որին անծանօթ են գործելու ե-  
ղանակներն ու ճանապարհները: Ու-  
րիշ անդամի թողնելով մեր չափոնած

կարծիքի հիմնաւորելը նրա միւս  
գրւածներից բերած փասփերով՝ այս  
անգամ կանգ կ'առնենք մեր գրա-  
խօսելիք գրքովի վրայ <sup>1)</sup>), որ մի  
դեռակ մարմնացումն է Ճուղուրեան-  
գրովի պակասութիւնների:

Ճուղուրեանի պէս գրողին, որ  
իրականութեան պարզ լուսանկարն  
է բալիս, որ ոչինչ չի ստեղծագոր-  
ծում սովորաբար, այլ կեանքի էջերն  
է միան արրաջբում, ուրիշ չար-  
կութիւնների շարքում՝ աւելի լիշտ-  
ութիւն է հարկաւոր քան երեսա-  
կալութիւն. որովհետք նրա դւածը  
դէպքերի և դիրքերի պարզ պաշ-  
կերներ են, հասարակ, երես ու ան-  
գարդ, ուր չկա: հոգեբանութիւն,

1) Գրքուկը նոյնանուն պատմը-  
ւածքի արդադապութիւննն է, որ լուս  
է բեսել Նոր-Դարի 1896 թ. 8, 10,  
11 և 12 Նո ում: Ենթարկել է  
փոփոխութեան արդադապւելիս թէ-  
ոչ չենք կարող ասել. չենք համե-  
մադել:

բնաւորութիւնների ընդհարում, կըրքերի խաղ ու մրցում. նա երեսն է վերցնում, այն ինչ որ երեսում է. նա չի թափանցում ներսը. Եւ ալդ լիշողութիւնը, ուրիշ խօսքով՝ երեւակալութեան ալդ առաջին քալը, թէն ունի էլ բաց նա շար անկիրթ է, խառն ու անորոշ:

Գրքովկի նիւթը Ա. Սարգսի շաբաթին կադարտող սովորութիւններն են. նկարագրած է մի նորհապետական ընդունիք: Ազդ ընդունիքի պապի անունը նա շփոթում է և մոռանում քաս էջից լեռով. մի տեղ նա Վարդան է (Էջ 21), ալլ ուեղեր՝ Հանէս (Էջ 35). Ազդ ընդունիքի անդամները սորդամարդիկ, կանաչը և մանկունք թուով քառասունն են (Էջ 36). մի ալ ուղ ալդ ընդունիքի ամիսիան տրուք, օչախի շուրջը երեսուն հոգրվ մի շրջանու են կազմում (Էջ, 62): Մեզ մի քիչ զժւար է թուոմ, բազմաթիւ նահապետական ընդունիքներ տեսնելուց լեռով, երեսակալել մի ընդունիք, որի անդամների <sup>3/4</sup>-ը արուներ են, մի ընդունիք, որ ունի «Նարսներ» և «մանկունք» ու «աղջկունք»! Խօսք է՝ ասւել է, առանց մի բովէ ասածի մասին մուածելու կամ նկարագրածը լիշելու...

Տարբ Ա. Սարգսի պարումութիւնն է անում. թոռներից մէկը հարցնում է՝ Ա. Սարգիսը կենդանի է. դադո՞ն ասում է. ուրեմն այն օրւաէ պարմածս չես լսել. երեխաներն ասում են՝ այն օրը նա ուշ առան եկաւ. — «Հա զըրթ, ասում է դադո՞ն, որ լուսումարանից եղի եկար» (Էջ, 41): Նկարեցէք, որ դադո՞ն իր ակնար-

կած պարումութիւնն արել է «ընթրիքից լեռով» և վերջացրել «կէս գիշերից անց», աշակերոը կանոնաւոր զպրոցի աշակերո է... Իսկ ալդ ժամանակ, ինչ խօսք՝ որ դաս չի լինի... Այս աշակերոի անունն էլ մի տեղ Միկիթար է դուրս գալիս (Էջ 56), ուրիշ տեղեր՝ Դրիգոր (Էջ, 48): Եւ ալլն:

Այս ամենը ցոչ է դավիս, որ ձուղուրեանի լիշողութեան մէջ նկարագրելիք դեսարանները կցկուուր, անկարգ ու անորոշ հն դուրս գալիս. անձերը որոշ չեն, դէպէերն իրար են խառնուում՝ որ նշանակում է թէ նրա շնորքը կրթւած չէ, իսկ ինքն անձանօթ է գրելուն, թէն մօտ եօթ դարւակ գրող է և անկատկածելի չնորքի դէր. ալսուեղ, ինչ խօսք՝ որ կարող է նաև մասամբ անփութութիւնը դեր խաղալ:

Գանք նիւթին, դրա հետ միանգամաճն և հեղինակի շնորքի մի ալլ կողմին. Ըստ երեսութին նրա նազարակն է նկարագրել Ա. Սարգսի շաբաթին զիւզում կադարտող սովորութիւնները. բայց նա ուղղակի և միմիան ալդ նպատակին չի դիմում, ալլ խառնում է մի քանի բան իրար հետ և ոչ մէկին էլ կարգին չի հասնում, ու ալդպիսով նպաստում է, որ գրքովկն ինքն ըստ ինքնան քիչ արժանիք ունենար. Գրքովկի մի խոշոր մասը Ա. Սարգսի մասին եղած աւանդութիւններն են բոնում, որ ըստ էութեան կապ չունին սովորութիւնների հետ. նրանց կապը օրգանական չէ և մէկը միւսին չէր վկասի, եթէ բացակաէր. Մի տեղ հազիւ գծւած է ուսումնարան լաճախող աշակերոի.

նախապաշարումներից ազատող  
մորքի և նահապետական հաւատի  
ընդհարումը, որ խսկի գրւածքի  
նիւթին չի վերաբերում և կարող է  
ամենեին չլինել. բոլորովին կարող է  
դուրս ձգւել և Մալաք դատի վայր  
ընկնելը փռած ցորենն ուժելու ե-  
կող խողերին խուկելիս. լիովին աւե-  
լորդ միջնադէպ է. Խնչ էլ ընդրելու  
լինէք ալս գրքուկից, որպէս զըր-  
ւածքի զիմաւոր նիւթ, միշտ դուրս  
ձգելու և կապ չունեցող բաներ կը  
գոյնէք:

Այս ամենն ապացուց է, որ ձու-  
դուրեանը քիչ է ճանաչում այն ան-  
հրաժեշտ չափութիւնները, որ պիշ-  
տի ունենալ մի բելլերիստական  
գրւածք, ալս ցոյց է տալիս, որ նրա  
չնորքը չի իմանում իր անելիքն ու  
նրա սահմանները, ընդրութիւն չի  
անում կարենորի և անկարենորի, հար-  
կաւորի և աւելորդի, զիմաւորի և  
մասնաւորի միջն:

Նոյն երեսութիւն է ձեր աչքին ընկ-  
նում, երբ նաևում էք ձուզուրեանի  
գրելու ձերին. Նոյն «ամսուչաղրու-  
թիւնն» ամեն տեղ: Կարծ կապելու  
համար՝ մի քանի դիմ միահն:—Ո՞չոց  
անեմ Աստոծ—երթկից դուրս նակե-  
լով,—ո՞չ անեմ, կարաղութիւնը  
գլուխս ա զալիս և ալլն (Էջ, 6).  
«Երթկից դուրս նակելով» ինչ արաւ  
ասողը... գրելու այդ ձեր կարելի է  
միան թարերախաղերում դործ ա-  
ծել և ոչ պատկերներում՝ կամ վէպե-  
րում: (Տես նոյնալիս և Էջ 16). Այս  
կարծ խօսակցութիւնը լսեցէք.

—Վահա, ով դատի ջան. ով դի  
խեղիլ—ալս ու այն կողմից հար-  
ցրին երեխակքն ու պատանիները:

—Սուրբ Սարգիսը, —խորհրդա-  
ւոր ձախով և կախարդական հայեաց-  
քով պատրասխանեց դատը:

—Ո՞վ ա սուրբ Սարգիսը, դատի  
ջան.— հարցրեց նրա թոռներից պա-  
տանին:

Ի՞նչ է նշանակում «կախարդա-  
կան հայեացք» ալս գէպքում և ընդ-  
հանրապէս. Բնչ է նշանակում «թոռ-  
ներից պատանին», Բնչ պատանի, չը  
որ այնորիդ աերիսաներ ու պատա-  
նիներ» կաէին: Մի ալլ տեղ՝ (Էջ 37)  
եղ ու մեզ ուժութեց վարու դան ան-  
դամները «կագեցան, և սափորներով  
սաւը ջուրն էլ աներկիւզ զիմներին  
քաշեցին...»: Ինչացու է ալսորել  
աներկիւզ բառը. և նոյն բեսակ ան-  
դեգի բառեր ու խօսքեր ուրիշ դե-  
ղերում: Ի դէպ՝ եղումեղը ասի՝  
միրս եկաւ. նեղինակն իր նահապե-  
տական ընդանիքի աւանդապահ ան-  
դամներին ս. Սարգսի ուրբաթ օրը  
եղումնեղը է ուրացնում. որքան  
մենք գիտենք, այդ օրը փոխնձի  
պասն են միան բաց անում. հետե-  
ւալ օրն է միան կարարեալ ու-  
ժիսը, երբ խաչիլ են ուրում... Գըր-  
ւածքի լեզուն նուզուրեանի խառն  
ու անկանոն լեզուն է, ուր զրաբարը,  
աշխարհաբարն ու զաւառական խօսք  
ու գարձւածները կազմում են մի ան-  
ներդաշնակ հարենանութիւն, որ սա-  
կան ալս անդամ շատ լաւ ներդաշ-  
նակում է գրքուկի շփոթ բովան-  
դակութիւնն, ալս ամենի վրալ աւե-  
լացրէք վաս սրբազրութիւն ու ս.  
Սարգսի ուղրմելի պատկերը...

Այս զրքուկը ձուզուրեանի ան-  
լաշող գրւածքներից մէկն է, և թէ ոչ  
ամենաանկանուն ու վարը: Հետա-

քըրքրական է ազգագրական դեսակէտից, եթէ հեղինակը հաւաքարմութեամբ է իր պատկերում մէջ բերել այն, ինչ պատմում են Մալաք տարիները ու Սարգսի մասին։ Մալաք տարի ասելով՝ ու Սարգսի հայ է եղել և կուել է մեր պիտի հաւաքարմութամբ Ռւլիանոս թագաւորի և թուրքերի դէմ կռւում էլ մեռել է։

Կամ հասարակական դեսակէտից հետաքրքրական ուրիշ գծեր, օրինակ՝

վերը բերած աշակերդի և նահապերական հաւատրի ընդհարումը։ Մալաք տարի՝ թուռներին աղօթել սովորդնելը և նրանց պառշաճի լեզենդաներ պատմելը, բայց դրանք իսկ որ գծեր են, հեղինակը բաւականաշափ չի վեր հանել ու լաւ պատկերացրել, որ կարելի լինէր կանգ առնել, զնահագրել նրանց ու եղրափակումների դալ։

Ն. Աղբալեանց

ԵԱՆԹ. --«Դարձ» վէպ, արգաւուպած «Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, ուղարան Մ. Դ. Ռուբինեանցի, 144 երես, զինն է 40 կոպէկ։

Երեք վարդասպետացու, երեխ կջմիածնի ճեմարանը նոր աւարդած, Շիրակի մէջ ամարալին ճանապարհորդութիւններ են անում։ Առքա պիտի վերագառնան կջմիածնին սարկաւագ ճեռնաղբելու և արտասահման ուղենորւելու համար, այնուեղ տարւածարանութիւնն պիտի սովորեն և նոր ուժերով պիտի դան-ա... նորէն հոգի և ողեսրութիւնն մոցնելու այդ սուրբ կարգերուն և աղօթքներուն մէջ և բծախնդիր ճշութեամբ ու կանոնաւորութեամբ... կարարելու մեր որբակրօն պապերու մեղի աւանդած ամէն մէկ ծէսն ու կարգը։ Վէպի սկզբում չափնւում է վարդապետացուներից Արքաշէս Սիւրաքեանը միայն, որը գալիս է Խլծկոնքի վանքը սպասելու իւր ընկերներին։ Նոյն վանքը ամարանոց է եկել Ալէքսանդրապոլից Քանեանների ընդունիքը։ Պարսն Քանեանը

իրաւաբան է, լայն զարգացման և հասարակական ձգութմների տէր մի մարդ։ Սրբնց հետ է նաև տիկին Քանեանի քուր Շուշանիկը, որը Ֆիլիպում մանկաբարձութիւն է սովորում։ Քանեանների մենակութիւնը նրանց մօտեցնում է Արքաշէսին։ Քանեանը նրա հետ վէճի է բանւում, որը մենք ծանօթանում ենք թէ Քանեանի և թէ Արքաշէսի հակացքների հետ։ Արքաշէսը մասնաւորապէս մթերմանում է օրիորդ «Շուշիկի» հետ. սրանց չարաբերութիւնները արդէն խիստ մօ ։ Են զառնում — հեռու զրուանքներ ձորերում, երկար խօսակցութիւններ։ Եւ անա, երբ այդ մթերմութիւնը ամենամեծ ասրիճանին էր հասել, երբ Արքաշէսը սպասում էր նշանակւած ժամի հասնելուն, որ Շուշիկի հետ զրուանքի գնալ, որի համար և... ընդրած էր ձորի ամենէն ժամուոք ու ամենէն

սիպ շաւիղներէն մէկը, որ վերը արտերը կը հանէր, պէտք էր, որ վերելքը դժւար լինէր, ազդ անհրաժեշտ էր, անա այդ մոմէնդին գալիս են Արդաշէսի երկու ընկերները՝ Մինասը և Սերոբը, որոնք ուրախութիւնամբ բարեւում են Արդաշէսին, բայց շուրով նկատում են, որ նրանում ինչ որ փոփոխութիւն կաչ Միքանի ժամանակից չետու հասկանում են իսկական պատճառը, չանդիմանում են Արդաշէսին և դեմում են որ նա ամենենին չի էլ ցաւում, երբ նրան ասում են, որ կը հարկազգրւին աճեռնազրւողներու ցանկէն դուրաձգելու, ալ մի փոքր ցնցւելուց յնտու պարասիւմում է աև շատ ալ խելացի բան կ'ընեն», Արդաշէս Մինասը զզալով թէ Արդաշէսի խօսքից դառնալու լուրը ինչքան պիտի ուրախացնէ իրենց հակառակորդներին, վճռում է, ինչ զնով էլ լինի, երան դանել էջմիածին, քանի որ Արդաշէսը հրաժարւում էր նրանց հետ գնալ, և լուս ունի որ էջմիածնում նրան խելքի կը բերէ, Ռւսորդի դիմում է հենց իրեն, օրիորդին, նրան շողոքորթելով, որ եթէ ողենաց Արդաշէսի վրաց ունեցած աղդեցութեամբ կարող է անապէս անել, որ նա վերադառնաւ էջմիածին և չը դրժէ իւր խոսրումը: Եւ իրաւ օրիորդի հեր խօսելուց յետու Արդաշէսը վճռում է գնալ էջմիածին, բայց ոչ ձեռնադրւելու, ալ շուրով անսրեզ հաշիները մաքրելու, որ գնաւ բըժը կական ֆակուլտէտի համար պարարասուելու: Այսպիսով կատարում է Արդաշէսի «Դարձը» անելամններից դէպի «դուրսինները»:

Վէպը հոգեսրականութեան մասին մեր ժամանակներում գոյութիւն ունեցող երկու ծալրահեղ կարծիքների պատկերացումն է: Մեր պահպանողականների բանակում վերջին ժարիներս աչքի է զարնում մի հոսանք-դեռ գպրոցը չաւարդած, կեանքի և նրա կարիքների մասին ոչ մի գաղափար չունեցող երիտառարգներ, համարեա պարանիննը, կուսակրօնութեան երդում են փակու: Դրանց զեկավարները շապ լաւ են հասկացել ազդ ձեփի նշանակութիւնը, որովհետեւ եթէ երիտառարգը զեանք է գուրս դալիս, ու լաւ ծանօթանում է կեանքի հետ և եթէ նա գուրկ չէ գոյութեան կուսում անհրաժեշտ քաջութիւնից, նա երբէք հոգեսրականութեան չի դիմում<sup>1)</sup>: Եւ ինչու ընդունի մի պաշտօն, որը, սկզբունքի տեսակէտը մի կողմը թողնեանք, ոչ մի առաւելութիւն չը դալով հանդերձ մի ստւար խմբի կողմից արժանացել է վարաջաւոր կամսեազլուս անարգական անունին: Կեանքում հոգեսրականութիւնը դուրսիւն ունի իրեն մի անհրաժեշտ շարիք, որի անհետանալու համար ժամանակ է հարկաւոր միան: Որ ժամանակի, իրաւ է, մեր հոգեսրականների ձեռքում կալին հիմնարկութիւններ, որոնք ալս կամ ան կերպ և ախտապարհաստութիւն և լաւ ձգուումներ ունեցող մարդկանց կարիք ունէին—զրանք էին գպրոցները և նրանց կաւած քները: Աչժմ ազդէ չը կաչ, էլ հասարակական ձըդուումներով մարդր ինչ դործ կատարէ

<sup>1)</sup> Ազդ հակացքը գոյնում ենք անձիչդ:

փարաջակի հովանաւորութեան դակ, և կեղեցական արարողութիւններ կամ աշխարհական սոով քարոզներ, արժեքէ միթէ զրանց համար գիտութիւն և ընդունակութիւն պարապեցնել Ասենք Տաճկաստանում և Պարսկաստանում մեր հոգեորականների ձևուքին զեռ բաներ կան, բայց այն էլ անոնով միան, իսկ Փաքտորէն ալդրտեղ էլ բան չի կարելի անել, ևոկ կղերականներին անհրաժեշտ է ուժեղացնել իրենց բանակը, Խելքը զըլիխն և կեանքին ծան օթ մարդը նրանց ծուղակը չի ընկնիլ, ուրիշն հարկաւոր է որսալ քանի զեռ խակ են, քանի զեռ զիտեն աղջակին եկեղեցու, Գերմանիակի և ասուածաբանութեան անոնով խելքը կորցնելու չափ ոգերսել:

Այս ինդրի վերաբերմամբ բաւական մրածելու նիւթէ է դաւլիս Պ. Շանթի ալս վէպը, բայց միան մրածելու նիւթի: Իրին վէպ դա մեր կարծիքով շատ թողլ է: Հէնց ամենագըլիստրը—Արքաշէսի դարձը, ախար ինչպէս եղաւ, ոչ ոք չի կարող հասկանալ. Դէպքեր չը կան, որոնցից երեար, որ նա խխար ուժեղ, բողոքող բնաւորութիւն ունի. որ նա իւր ընկերներին հակառակում է և տւած խոսքումից չմտ է մեռմ. բայց արդ բոլորը լամառութեան բավարութիւնն է անում, կարծէք նա բարկացած է, որ ընկերները նրան խանգարեցին Շուշիի հետ պատուի երթալու, և նրանցից վրէժ է առնում: Ընդհակառակը նա մի թողլ բարօրինակ բնաւորութեան դրէք մարդը ալդպիսի բան կ'անէ: Եւ որան հեղինակը պատկերացնում է իւրին հոգեորականութեան խոսքում գալու ժամանակ:

Ինչու պէտք է ձեզմէ պահեմ, օրիորդ, ես իմ ընկերներու մէջ միշտ մասնաւոր գիրք մը ունեցած եմ, և այդ ինձի շողոքորթած է. ուրիշ բան է զգալը, որ շրջապատողներուդ վրաչ ազգեցութիւն մը ունիս, մարդ կարծես ուժ կ'զգալ իւր մէջը, և հիմա կը գիտակցիմ, որ իմ վարդապետանալու որոշմանս շատ նպաստած է այդ զգացումը: Ինարկէ տղաբական է այդ փոքրիկ մնափառութիւնը, գուցէ և ծիծաղելի, չըգիտիսմ, բայց այդպէս է»: (Գլուխ թ.): «Ե, ինարկէ ծիծաղելի է: Շատ էլ «ընկերներու մէջ միշտ մասնաւոր գիրք մը ունեցած էք», պարոն Արքաշէս, հապա անս, որ «շրջապատը միշտ նեղ և գոց կուգալ», որ «այդ զգացումը (գոցութեան) առաջ ալ բարդամ կերպով միշտ ձեր մէջ ունեցել էք, որ մի առանձին սէր էք ունեցել զէպի բնութիւնը, որ, ինչպէս ասում էք, ո... և որոնք (կրօնի դասերը) ինձի ոչ հետաքրքրած են, ոչ ալ զբաղեցուցած. իսկ ընդհակառակը ձեր (օրիորդի) բնական գիտութիւնները ես միշտ սիրած եմ ու ձեր կասկածածէն ալ քիչ մը աւելի ծանօթ. մասնաւորապէս կենդանաբանութիւնը ու բիոլոգին: Մի կարծէք թէ միան ձեղի է ծանօթ Դարւինի, Ապեննէրի ու Հիւքուէի երկերը»: (Գլուխ Գ.): Նմէ ուրիշն ալդպիսի բաներ կան, ապա աչդ բոլորն ուր էին հոգեորականութեան խոսքում գալու ժամանակ:

Եւ միթէ լուրջ և ուժեղ բնաւորութեան դրէք մարդը ալդպիսի բան կ'անէ: Եւ որան հեղինակը պատկերացնում է իւրին հոգեորականութեան

թեան դէմ իւր անձով բողոքողի մի օրինակի Աւրիշ բան է, եթէ նա չունենար ալդ լարկութիւնները խօսք տալուց առաջ, և կեանքի հետ շրփւելուց դրանք առաջանալին, Քայլ ոչ, նա առաջ է աւս լարկութիւնների տէրը եղել. իսկ թէ ինչ էր նրա վարդապետանալու խոսքնան զլիսաւր շարժառիթը - ալդ էլ տեսանք նա մինչե անգամ խիստ ուրախնում է, երբ օրիորդը նրան լավորնում է Քանեանի խօսքերը «թէ դուք խելացի, մաքուր և ուժեղ բնաւորութեան տէր տղաէ էք», նա այնքան իրեն կորցնում է, որ բացականչում է. «Ահա, որ ուժեղ բնաւորութեան տէր եմ, ալդ առաջին անգամ ձեր բերնէն կը լսեմ. և Ասուած զիտէ, թէ որքան ճշու է ալդ. միան ճշմարիտ է, որ ուժեղ բնաւորութիւնները շար կը սիրեմ», (զլուխ Թ.), Այս բոլորից երեսում է, որ Արդաշէսը մի «խոխառ» է և որ նա կեանքի մէջ էլ մի բան չէ կարող լինել. նրա գործերում ապագալի համար լաւ գրաւականներ չկան.

Քայլ հերաքրքրականն ան է, թէ ինչպէս Արդաշէսը իւր աշնքան հակառակ հակումներով ընկել էր հոգնորականութեան ճիրանների մէջ: Արդաշէսի իրեն բացարութիւնը խիստ անբաւարար է: Արդաշէսի նման մարդիկ մեր երիտասարդ հոգնորականների մէջ շար կան: Այս ունեղ զլիսաւորն ան է, թէ ինչ միջոցներով են պատանիներին վարածալի հովանաւորութեան տակ մըդցնում: Վէպում այս կողմի պակասութիւնը խիստ զզացւում է: անհրաժեշտ էին և վարդապետացունե-

րի ուսուցիչների ոփակերը, որոնք Քանեանի մէջ զարմանք են կարուցել, թէ ինչպէս իրենց լուրջ կրթութեամբ մուլ են մեր քաղաքակըրթութեան համար պատիւ չբերող ալդ դասակարգի մէջ: Ապա անորոշ է թողնւած Արդաշէսի անցեալը, նրա հակումները ուժեղ կերպավ չեն արտակարուած: Պէպքեր, Քաքտեր են պակասում, որոնցով մենք կարողանալինք համոզւել որ Արդաշէսը ալդ կեանքի համար չէր սրեղծւած և աւելի ես սրբանց ուրախանալինք նրա գարձի համար: Մի օրինակ, Տուրքինեի Բազարավը ընկերոջ մօտ եկած օրւաց հնց հետեւեալ առաւորը կանուխ վեր է կենում, փալքր վերցնում, գնում է շրջակալքում թափառելու և վերագանում է ցեխոտի, ձևոքին անադումիական փորձերի համար մի քանի գորտ բռնած: Մի գէպք, որ աշնքան խիստ բնորշում է Բազարավի Հակումները և միանգամից զգալ է ուալիս, որ սա զարդարկ բաների վրաէ ժամանակի կորցնել չգիտէ: Եթէ Արդաշէսի գալրոցական կեանքից մի գէպք լինէր նկարագրւած, որից մենք կարուանալինք զենոնել նրա հակակրանքը գէպի ծէսերը, ձևականութիւնները և իմանալինք թէ նա ինչ է ուզում դրանց տեղ, ան ժամանակ Արդաշէսը պ. Շանթի նկարագրութեամբ մեզ հասկանալի կը լինէր, մասամբ գոնէ: Գուցէ կ'ասեն թէ Խծկոնքում ժամերգութեան դեսարանն արդէն ապացուց է: Քայլ չէ որ ալդ ժամանակ նրա մէջ արդէն ընկել էին վոփոխութեան սաղմերը. և որ զլիսաւորն է, նա չէր

ուզում, որ իրեն Քանեանները գեն-  
նեն աղբոր ժամաշապիկ հազած:

Եւ ալսպիսով վեպի հիսուածքը  
աւելի լաջող կարելի կը լինէր հա-  
մարիլ, եթէ Արտաշէսի բնաւորու-  
թիւնը աւելի խնամքով լինէր պատ-  
կերացրած, Արտաշէսի և նրա ընկեր-  
ների զպրոցական կեանքից գենաւ-  
րաններ լինէին, որոնք ցուց դաշին,  
թէ ինչպէս այնպեղ ամեն բան տուր  
զգացմունքներ քննեցնող և անհարա-  
կանութիւնը ձնշող ուղղութիւն ունի,  
նրանց ուսուցիչների և զեկավարնե-  
րի տիպերը լինէին, թէ ինչպէս սրանք  
պարանիներին գեռ զպրոցի պարե-  
րի ուհմանում վարաչաէ են հազ-  
ցընում և հնարաւորութիւն չեն դա-  
լիս կեանքի հետ ծանօթանալու, և  
վերջապէս նրանց ըստի ապէս սզեո-  
րելուց իւրոք վարզապերանալու խոս-  
ում առնում, որից չիտ կենա-  
լոց ամաչում են խեղճ պառանի-  
ները. Ապա Արտաշէսն ընկնէր մի  
կեանքի մէջ, որ ակընաչքնի գեն-  
ներ, թէ առանց վեղարի էլ մողո-  
վըրին կարելի է ծառապէլ, այն ժա-  
մանակ ամեն բան պարզ կը լինէր  
մեղ համար:

Բացի Արտաշէսից միւս տիպերն  
էլ թուլ են, Բաց հիանալի է վաւ-  
նահալրը, այնքան բնական, որ մարդ  
իրեն անմիջապէս մի վանքի վանա-  
հօր լոցի դռանն է զգում:

Մեղ թւում է, որ ու. Շանթի աւ  
վեպը շուալ զրութեան արդիւնք է.  
խնամքով վերաբերմունք դեպի վեպի  
դեղարւեաւականութիւնը չէ եղել  
նդել է ցանկութիւն, որքան հնա-  
րաւոր է պարզ պատկերացնել երի-  
քասարդ վեղարաւորների հայեացք-

ների նեխւածութիւնը, անշունչին  
շունչ դալու ցանկութիւնը, իսկ  
սրանց գործի անբնականութեան  
ամենաչնչին օրինակ անզամ պակա-  
սում է, բացի ժամերգութեան առ-  
թիւ վասահօր հեր ունեցած վէճից:  
Վէպը ունի զեղեցիկ նկարազրա-  
կան կտորներ. ինչպէս վանքի ներ-  
սի նկարագիրը առաւորեան ժամեր-  
գութեան ժամանակ—որը այնքան  
հիանալի է. չնոք կարող մեզ  
զրկել հաճուքից և նրա մի մասը  
չբերել ալարեղ.—«Պուրսի նորածին  
լուսը եկեղեցին նեղ ու երկար փոք-  
րիկ պատուաններին հազիւ ներս  
կը սպրգէր. և թանձր խաւար էր  
զիզւեր անկիւնները, սիւներու երեսը  
և գմբէթին փոսին մէջ»:

«Խորանին վրայի զսդ մը մոմերու  
ուժասպառ լուսերը վարզապետի  
արդասանած իւրաքանչիւր բառէն  
կարծես կը սառառապին, դեսակ մը  
հիւանդութ զեղնութիւն թափելով ի-  
րենց անմիջական մօրիկ փոքր դա-  
րածութեան մը վրաւ, որ հետզհետէ,  
որքան հեռու այնքան աւելի կը զու-  
նաթափւէր, կը մարմբէր մինչեւ որ  
մութի շիրորեսն մէջ վերջնակա-  
պէս խեղգէր»:

«Վարդապետը սիւնին դակը ար-  
ձանացած իր աղօթքները կը ծամֆմէր  
իրարու երեկ. . . ապլն (լ. գլուխ).—  
Տուրբնեմի զրչին է բարուկ!»

Բաց և կան ալսպիսի սխալներ  
էլ. մեր կարծիքով առաւոր կանուխ,  
զեռ չլացրած, քաղցած փորով եր-  
բէք հնարաւոր չէ այն գեսակ երկար  
ու բարակ վէճ ունենալ, ինչպիսին  
նկարալրւած է լ.լ. գլխում, թէն  
ու հասարակ բան է, բայց ուշազրու-

թիւն է զրաւում. ուաք վէճերն էլ  
օրւաց մէջ իրենց ժամանակն ունին՝  
երեկովեան և զիշերը, երբ մարդու ջղե-  
րը աւելի լարւած են, Յիշում էք Շու-  
դինը—զօրաւում ու պէտուշկօն.

Բայց չնակելով այս բոլորին իւր  
չոշափած խնդրի պատճառով մանա-  
ւանդ «Դարձը» մեծ հետաքրքրու-  
թեամբ է կարդացում:

Մար. Յար.

## ՄՈՒՐՃԻ ՄԻ ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆԻ ԱՌԹԻՒ

Խմբագրութիւնս սրացել է տպագրութեան համար հետեւեալ գրութիւնը:

19 մարտի 1899, Ասորախան.

Յարգոյ Խմբագիր!

«Մուրճ»-ի տարւոյս լունարի համարում կարդալով պ. Ա. Ա. գրախոսականը «Յովհաննէս եպիսկոպոս Հահիաթունեանցի կենսագրութեան» մասին՝ հարկ եմ համարում սոյն նամակով ուղղել այն մի քանի սխալ-ներն, որոնք թուղթագրութեան նորա կողմից:

1. Գրախոսն ասում է, որ իրը թէ վշինալ գրքի մէջ վերապարմած և նոյն իոկ արտադրած է պ. Երիցեանի «Ամենալն Հալոց Կաթողիկոսութիւն» զրքից մի քանի տասնեակ էջեր (որու գրքի էջ 51—102 և չարկապէս էջ 70—102), այն ինչ պ. Երիցեանի գրւածից փոխ առած կաէ միմիան 16 էջ, 70—94.

2. Ասուած արուր եպիսկոպոսի ասներից մէկը, Արիստակէսը վարդապետ չէ ձեռնադրւել, նա Զմիւնիալից զնացել է Աղէքսանդրիա, իրըն աշխարհական և, ալդ կոչման մէջ էլ մնացել է. զո՞նէ քննադադրած զրքի մէջ չկատ որ և է հիմք ենթադրելու թէ նա ձեռնադրւել է երբ և իցէ:

3. Թաղիադեանցի մասին կարգած ծանօթութեան մէջ (էջ 99) ասւած է. «էջ 244-ի տողերից կարելի է եղրակացնել թէ հեղինակը կարծում է որ Թաղիադեանցը Հնդկաստանից 1831-ին Երևան և 1832-ին Էջմիածին վերադառնալուց չերոք՝ նորից ուղղակի Հնդկաստան վերադարձաւ. բայց դա սխալ է. մեզ չակտնի է որ Ա. Պոլսի Հալոց պարրիարք Աղանի Սրբիանոսի ժամանակ (նա պարրիարք էր 1831—39 թ.) Թաղիադեանցը կ. Պոլսումն էր և ուսուցչութիւն էր անումա:

Մեզ միանդաման զարմացնում են վերտողնեալ խօսքերը. 244 երեսում մենք միալն ալս ենք ասել «թէ ալս վերադարձից չերոք Մեսրովը նրքան ժամանակ է մնացել Էջմիածնում և իրը է հեռացել—չդիրենք», և միթէ ալս տողերից կարելի է եղրակացնել թէ մենք կարծում ենք, որ Թաղիադեանցն Էջմիածնից 1832 թվին ուղղակի Հնդկաստան է վերադարձել. Թէպէտ և ալդպէս ասելով՝ աւելի հիմնական կարծիք չակրնած կը լինէինք քան պ. գրախոսը, որ կամնում է ասսծ լինել, թէ Թաղիա-

ղեանցը Եջմիածնից նախ Պոլիս է զնացել. Նթէ պարոնին լաւցրնի աղբւրն, որի վրայ հիմնում է, Յովհաննէս քահանակ Մկրտանի կաղմած կենսագրութիւնն է, պարզ է ուրեմն, որ աղդ խօսքերով նա մեղանչում է և աղբիւրի դէմ Յիշեալ կենսագիրն, ընդհակառակն, կարծում է որ նա, Թաղիաղեանցը Եջմիածնից ուզզակի Նոր Զուղա է զնացել (Էջ 91) և ոչ Կ. Պոլիս, որ եկել է միան 1838 թվին. «Մեսրովք կը ժամանէ ի Կ. Պոլիս չամին 1838 մայս ամսուն, որ ադին պարուարք էր Տէր Սոբիաննոս... վերածանեալն Աղաւնի» (Էջ 98).

Այսքանով վերջացնում ենք մեր խօսքը. լսո՞ որում չենք կամենում կանգ առնել պ. գրախօսի մի քանի սխալ հակեացքների և անճիշտ ըմբռումները վերայ, զորա մասին կայ ընթերցողների դարաստան.

Ա. Ե.

### Պ Ա Տ Ս Ա Ս Խ Ա Ն

Նամակագրի զիմումը պրնթերցողների դարաստանին» ընդդիմախօսի կողմից լռութեան դրւած կետերի վերաբերմամբ՝ նախ ենթալլել է ուալիս ան թէ, Ա. Ե.-ի կարծիքով, այդ ամի քանի սխալ հակեացքները և անձիշտ ըմբռումները» իբր թէ այնքան ակնյակնի են որ ամին ընթերցող կը նկատի. և սպա «Ընթերցողների դարաստանին» դիմելս առնյայտ թողած կետերի վերաբերմամբ զգացւում է իբր մի սրւելածգութիւնը դրախօսի ոչ միան հասկացողութեան այլ և բարեխողութեան վրայ Գրականութիւնը աւղագիտական պարսաւներ չի սիրում. բայց աղդ հանգամանքը սրփում է մեզ աւելի երկարաբան լինել. Շուապում ենք անցնել-մեզ առաջադրած երեք չափոնի կէտերին:

Աէք 1: Մեր գրախօսականի մէջ, վերաբերեալ պ. Նրիցեանի դրքից փոխառնելուն, ծանրութեան կէտը գրւած էր այն քանի վրայ, որ Շահիաթունեանցի կենսագրութեան համար, մեր կարծիքով, հարկ չկար պարմել իւր բոլոր ընդարձակութեամբ այն իրողութիւնները, ուր Շահիաթունեանցը անձնագիւ երկրորդական դեր է կարարում կամ բնու դեր չի կատարում, հետեաւպէս շնորհմներ են և ոչ բուն առարկացն (Շահիաթունեանցի կինսագրութեան) վերաբերող. մահաւանդ որ աղդ իրողութիւններից ոմանք արդէն յայտնի են պ. Նրիցեանի Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւն գրքից. Արիստուկիւս եպիսկոպոսը, ուրեմն, Ակադում էինք մենք, ոչ միան շնորհմներ է անում, այլ և ազդ շատ ընդարձակ շնորհմների մէջ պարմում է մի այլ հեղինակի գրքից արդէն յայտնի իրողութիւններ. Ահա մեր գրած և Ա. Ե.-ի ակնարկայ գողերի գլխաւոր իմաստը Ա. ամենից առաջ պէտք էր իմաստից բռնել. Մեր գրածի իմաստը կը պարզէր, Ա. Ե.-ին այն, ինչ որ բաւականաչափ որոշ չեր վերը ակնարկւած դողերի մէջ. Աական ահա մեր իսկական խօսքերը.

...«ներկաչ դէպքում ալդքան ընդարձակ շեղումների անհրաժեշտութիւնը մեղ համար ակնչափուի չեղաւ, նամանաւանդ որ գրքի մի տեղում դրա համար հարկաւոր է եղել վերապատմել և նոյն խակ արտադպել պ. Երիցեանի «Ամենակն Հայոց Կաթողիկոսութիւն» գրքից մի քանի տասնեակ էջեր (տես գրքի էջ 51—102 և լատկապէս էջ 70—102):»

Խ դիմաց այն հերքումի, որ անում է Ա. Ե. Ն իր նամակում այդ կէտի վերաբերմամբ, ուր նա բնաւ ուշադրութեան չի առնում մեր տողերի գըլ-խաւոր խմասրը, մենք մեր գրախօսականի վերոլիչեալ տողերը կարող ենք ուղղել միմիան ալսպէս:

...«ներկաչ դէպքում ալդքան ընդարձակ շեղումների անհրաժեշտութիւնը մեղ համար ակնչափուի չեղաւ, նամանաւանդ որ գրքի մի քանի տասնեակ էջերում հարկաւոր է եղել նորից պատմել այն, ինչ արդէն յատնի էր պ. Երիցեանի «Ամենակն Հայոց Կաթողիկոսութիւն» գրքից (տես գրքի էջ 51—94) և նոյն խակ ընդարձակ արտատպումներ անել այդ գրքից (տես լատկապէս գրքի էջ 70—94):»

Եւ իրաւ, բաց ենք անում գրախօսած գրքի էջ 51, ուր շօշափելում է Էջմիածնի միաբանների բողոքի խնդիրը ընդդէմ Յովհ. Կաթող. Կարբեցու, որը միւսում է Գրիգոր արքեպիսկոպոս Երդինցու սոսկական բողոքազրով Կարբեցու դէմ. ալս բողոքագիրը, որը ոչ մի կերպ չի վերաբերում Շահսաթունեացի կենսագրութեան, դրւած է զրքի էջ 52—56. Արդ, ալդ նոյն բողոքագիրը, թէն աշխարհար ար թարգմանութեամբ, գտնում ենք Երիցեանի վերը լիւած 2-րդ հարորի 161—164-րդ էջերում: Ալս գրախօսած գրքի էջ 56—69 դրւած է ութ միաբանների բողոքագիրը Կարբեցու դէմ. Բայց ալդ նոյնը, միաւն աշխարհարար թարգմանութեամբ, տպւած է պ. Երիցեանի գրքի էջ 165—178:

Ալսպիսով ուրեմն, գրախօսած գրքի 51—69-րդ էջերում գոկումէնդապին եղանակով պատմած իրողութիւնները յայտնի էին ընթերցողներին պ. Երիցեանի գրքից: Ալդ ենք կամնցել ասել վերապատմն խօսքով, որ վերը շոկեցինք անորից պատմելու խօսքով, որովհետեւ առաջինով կարող էր հասկացւել թէ Արիստ. եպիսկոպոսը ոչ միաւն նոյն դէպքերն է պատմում ինչ արդէն Երիցեանն արել է, ալլ որ ալդ 51—69 էջերում ևս հեղինակը իրը թէ Երիցեանի գրքից է օգտւել Խոկութիւնը սա է, որ նոյն ացդ էջերում Արիստակէս եպիսկոպոսը այն գոկումների բնագիրներն է հրատարակում, որոնք աշխարհարար թարգմանութեամբ արդէն չափնի էին ընթերցող հասարակութեան պ. Երիցեանի գրքից: Մենք հարկ չենք համարել մեր գրախօսականի մէջ ալդ հանգամանքը շեշտել այն պարճառով, որ Արիստակէս եպիսկոպոսի գրքի ալդ էջերում հրատարակած բնագիր դոկումէնտները Շահսաթունեացին վերաբերեալ ոչ մի նոր բան չեն պար-

զում քան ինչ պարզել էր նոցա աշխարհաբար թարգմանութիւնից պ. Երիցեանի գրքում:

Զնակած գորան՝ ինքն ըստ ինքեան աճարժէք բաներ չենք համարել թէ ալդ և թէ ալ զովումէնքները, որոնց առիթով գրել էինք՝ «Ազդ կորոները, շար կարեոր 19-րդ դարի Հայոց հոգհորականութեան պատմութեան համար, ափսոս է հրատարակիլ միջանկեալ էջերի ծևով. նոքա պէտք է լարուկ գրւածների մէջ իրենց տեղը գրնեն և կամ ուղղակի հրատարակեն իբրև պարզ նիւթեր»: (որեւ Մուրճ անցեալ № 1, էջ 87, ձախ սիւնակ):

Երբ Ա. Ա.-ն մեր գրածի դիմաց ուղղակի լայրնում է թէ «աճնինչ պ. Երիցեանի գրւածից փոխ առած կատ միմիան 16 էջ, 70—94-նա պ. կարարելապէս զանց է առնում աչն շարժառիթը, որով մննք լիշել էինք Արիստակէս հայիսկոպոսի գրքի 51—70 էջերը և փեղիք է տալիս ընթերցողին կարծելու, թէ մննք անհիմն կերպով լիշարակած լիննք ալդ 20 էջերը և վեաս գրախօսւած գրքի:

Արդարադաւմը, մեր զրախօսականի համեմատ, հասկացում էր զրքի էջ 70—102, Ա. Ա.-ն շրկում է՝ «70—94»: Սուսակելով զանցք որ ալդ ճիշդ է, թէն չենք կարող երաշխաւոր լինել, թէ ալդ 25 էջերում իսկական արրարարածը «16 էջ» է և ոչ աելի: Անուամենաչիւ թնբես աւելուրդ չէ աւելցնել, որ Ա. Ա.-ն էջերի թիւը հաշւելով՝ հաշւի չի առել չորս երեսի մի զոկումէնոր (էջ 80-83), որ Արիստ. եպիսկոպոսի գրքում ընադրով է առաջ բերւած, իսկ Երիցեանի գրքում թարգմանաբար:

Այս կէտին վերջ ուալուց առաջ ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում հերեւեալ հանգամանքի վրայ. հեղինակը, իւր գրքի՝ 70-րդ էջում զայտնում է՝ «...ավանորու օգտւում ենք պ. Ազ. Երիցեանի գնահարելի աշխարհութիւնից»: և ծանօթութեան մէջ զնում աղքիւրը ալսպէս. «Ամենան Հայոց Կաթողիկոսութիւնը և ալն մասն թ. եր. 183—228»: Հեղինակը իւր ալդ խօսքիրով կամեցել է լայրնել թէ ինչ որ աճնուհերե պարմւելու է՝ Երիցեանի գրքից էլինելու Բայց արտադպութեան ձեռվէ լինելու ալդ, թէ ոչ՝ ալդ խնդիրը նա թողնում է անորոշ ընթերցողի համար. չակերտներ նա զնում է միան զոկումէնտների սկզբում և վերջում, և ընթերցողը անորոշութեան մէջ է մնում թէ՝ արդեօք զոկումէնտներից զուրս դողերը ումն են: Յետու, օգտւելը Երիցեանից համում է 79-րդ էջին, և 80-երորդից մկանում է մի զոկումէնոր, որի համար գրած է ալս ծանօթութիւնը՝ «Թուղթը խորաւութիւնից փորած լինելով՝ տեղ-տեղ փշրել է»: Բայց թէ զա թէ Երիցեանի գրքից է թէ ոչ՝ ալդ նա չի լայրնում. և հարկ կը լինի հեղինակի միջամրութիւնը, որ պարզվի թէ ալդ զոկումէնորը հեղինակի ունիական աղքիւրից է: Բայց դեռ չպրծանք, Ալդ սեփական զոկումէնտից յիտոյ շարունակում է պարմութիւնը զարձեալ անչակերտ և չակերտաւոր:

տողերով մինչև էջ 94-ի կէսը։ Ումն են պատկանում գէթ չակերպաւոր դոկումէնները, —ոչ մի խօսք ալդ մասին։ Բանից զուրս է գալիս որ դուքա շարունակութիւն են Երիցեանից արւած քաղաքների։ Բայց ալդ կը հասկանու միայն երկու գիրքը իրար հեր համեմատողը, որը կարող է չաշողութեամբ վերջացնել իւր ալդ անշահ զործը գիշեր լուսացնելով։ Սուկընթերցողը ալդ չի կարող իմանալ — Բայց դարձեալ չպրծանք, որովհետեւ էջ 94-ի կէսից շարունակում է պատմութիւնը անչափերու տողերով մինչև էջ 95-ը, որից արդէն սկսում է մի դոկումէննոր որ տեսում է մինչև էջ 100-ի կէսը։ Եւ դարձեալ ոչ մի ծանօթութիւն ալդ մասին։ ու ընթերցողը կարարեալ անկազութեան մէջ է թէ արդեօք ալդ դոկումէննոր սեփական է թէ շարունակութիւն է Երիցեանից արած փոխառումների։ Դարձեալ ուրեմն պէտք է դիմել Երիցեանի գրքին ու ժամերով որոնել թէ անդուղ կամ արդեօք ալդ դոկումէննոր թէ ոչ։ Մի զրախօսից արդէն չափից զուրս չափ պահանջում արդեօք, երբ նորան դարապարտել են ուզում անվերջ պրպումների՝ հասկանալու համար ան, ինչ գրքի հեղինակի պարտքն է պարզած զնել ընթերցողների առջե՞ն

Եւրոպացին վաղուց վճռել է ալդ տեխնիկական ինդիրը, չափնելով որ ծանօթութիւն պէտք է զնել տմեն անգամ մի քաղաքածք անելիս, ցուց դաշտով աղբիւրը (գրքի անունը, էջը)։ և երբ ալդ կանոնը չի պահանւած սիստեմական կերպով՝ գրախօսը պիտի տրփնջաւ հեղինակից դորան վերաբերեալ որ և է սեսալմունքի համար, և ոչ թէ ընդհակառակը։

Կէտ 2. Արիսուակէս Ալթուննեանցի մասին ալլ աղբիւր ունեցած չլինելով՝ ընդունում ենք որ նա աշխարհական է մնացել, և ալժմ չենք կարող մարդնանիշ լինել այն տողը որը մեղ առիթ է տուել կարծելու թէ նա ձեռնադըրուած է եղել։ Երեկի մեզ սիսալցնողը այն հանգամանքն է եղել որ Արիսուակէսը Պոլիս և ապա Զմիւռնիա դրկւեց ուսում սրանալու և ապա ձեռնադըրելու լուսով։ Ալդ կէտը չամենալն զէպս զուրկ է կարենութիւնից։

Կէտ 3. Թաղիադեանցի առիթով Ա. Ե. Ն վերաբրադրուժ է իւր գրքի մէջ գրածը ալսակէս՝ «244 երեսում մենք միայն ալս ենք ասել թէ ալս (= Հնդկաստանից) վերադարձից յերու Մեսորովը (= Թաղիադեանց) որքան ժամանակ է մնացել իշխանում և երբ է հեռացել — չպիտենք»։ Եւ զորանից լեռու Ա. Ե.-ն մեզ հարց է ուալիս՝ «միթէ ալս տողերից կարելի է եղրակացնել թէ մենք կարծում ենք, որ Թաղիադեանցն էջմիածնից 1852 թւին ուղղակի Հնդկաստան է վերաբրածելու Մենք սուրբազնեցինք «միայն» խօսքը, որովհետեւ Արիսուակէս եղիսկոպոսի ակն գողերից արդարի հրէաւտը բան կը վինէր եղրակացնել թէ հեղինակի կարծիքով Թաղիադեանցը ուղիղ Հնդկաստան գնաց։ Եւ ինչու ոչ Զինաստան Տպաւորութիւնը բոլորովին ալլ կը վինէր, սական, ևթէ Ա. Ե.-ն նեղութիւն կրած ու մի քանի ոող էլ շորունակած լինէր իւր գրքից քաղւած քը։ և ընթերցողը կը կարդար հետեւալը։

«Թէ աւս վերադարձից էերոյ Մեսրովը (=Թաղիազենց) որքան ժամանակ է մնացել Էջմիածնում և թըր է հեռացել—չդիտենք. ունինք նորա մի նամակն ևս առ Ներօէս Կաթողիկոս, գրած Լալկաթաէից (=Հնդկաստանում) 1846 թ. հոկտեմբերին, որով օգնութիւն է խնդրում հայրապետից...»:

Առ ահա աւս դողերից մննք կարելի ենք համարել եղբակացնել «Թէ հեղինակը կարծում է որ Թաղիազենցը անորից ուղղակի Հնդկաստան վերադարձաւ», քանի որ հեղինակը Էջմիածնից հեռանալու ժամանակի մասին անպարասիսան հարց դալուց անմիջապէս էերոյ վիշտակում է Ներսէս կաթողիկոսի Հնդկաստանից Թաղիազենցի գրած նամակ սփանալը 1846 թւին. այդ մէկի և նկարի ունիցեք, այժմ որ Թաղիազենցին նւիրւած է 15 երես (էջ 231—246), ուր վիշտած է նորա երեան, Էջմիածնին, Հաղպատի, Թիֆլիս, Շուշի, Հնդկաստանի մի քանի քաղաքներում եղած լինելը, և ոչ մի անդամ չի վիշտակում նորա եղած լինելը Կ. Պոլսում. Ահա ինչու անպատճեն չհամարեցինք մեր գրախոսականի մէջ վիշեցնել թէ գրքի հեղինակին և թէ միաժամանակ մեր ընթերցողներին, որ Թաղիազենցը նախքան Հնդկաստան վերադառնալը՝ Կ. Պոլսում եղաւ, ուր նա ուսուցչութեամբ պարապեց. Ազդ երկու իսկ երրորդը ահա:

Մեր վիշեցրած իրողութիւնը աւելորդ չպիտի համարէր դրքի հեղինակը նամանաւանդ, որ դորանով մի յայտնի չափով լուծումն էր սրանում նորա դւած հարցը՝ թէ երբ է հեռացել Թաղիազենցը Էջմիածնից՝ 1832-ից ինքուց Քննադարութեան մէջ ընդունւած մեթոդի համաձայն, երբ մի հեղինակ չգիտէ ճշտութեամբ մի եղելութեան ժամանակը, ապա նա պիտի աշխարի գէթ ժամանակի մերձաւոր սահմանները որոշելի Երբ 1832-ից էերոյ միայն 1846 թւականն է վիշտում,—դորանով տեղիքէ ուրուում ընդունելու որ վիշեալ անձը հեռացաւ Էջմիածնից ոչ աւելի ուշ քան մինչև այդ տարին, բայց երբ վիշեցնում էնք նորա եղած լինելը Կ. Պոլսում Ստեփանոս Աղաւնիի ժամանակ, որը պատրիարք էր մինչև 1839 թւականը, ուրին հարցը լուծելու համար մենք շահում ենք արդէն եօթ տարի, քանի որ անորոշ ժամանակամիջոցը փոխանակ 1832-ից մինչև 1846-ը երկարցնելու, այժմ կ'ընդունենք իրրե հաստատ՝ 1832-ից մինչև 1839-ը. Այժմ բանից երեսում է որ, հայր Մկրեանի ասելով, Թաղիազենցը եկած է եղել Կ. Պոլիս 1838-ի մայիսին. դարձեալ մի տարի վաստակ. նոյնից իմանում ենք թէ նա Կ. Պոլիս գալուց առաջ Նոր-Զուղա է եղել—դարձեալ առնւազն մի տարի վաստակ, որովհետեւ Էջմիածնից Նոր-Զուղա դնալը, անդեղ մի առժամանակին համարին, իշտած կ'ասէինք՝ հնչապէս Արիստակէս եպիսկոպոսն է անում, —մերը է հեռացել—չդիտենք», ինչպէս Արիստակէս եպիսկոպոսն է անում, —մենք կ'ասէինք՝ հեռացել է 1833-ի և 1836-ի միջերքը»:

Սական կանգ առնենք, ալսքանը աւելի քան բաւական է ցուց տալու համար որ Արխագակէս եպ. Սեղբակեանին վերագրած կարծիքը մենք դուրս ենք բերել ոչ թէ բոնազրօսիկ կերպով, այլ շաւ կշռելուց է՛տուց Ցուց տւինք նաև, որ մի տեղեկութիւն աւելցնելով Արխագակէս եսլիսկոպոսի բաւական է մենք մի աւելորդ բան չենք արել, քանի որ այդ տեղեկութիւնով մի լազարի չափ պարզում է այն հարցը, որ Արխագակէս որբազանը դնում է իւր գրքի մէջ, բայց որին ինքը միայն չզիտինքով է պարասիստում. Մենք զգուշութիւնը դեռ աւելի հեռուն էլ ենք բարել գրելով՝ Արխագակէս եպ. Սեղբակեանի գրքի այս ինչ բողերից սկսրելի է եզրակացնել թէ հեղինակը կարծում է որ..., ասել է թէ մեզ նման ամեն մի ընթերցող կարող է այդ նորնը եզրակացնել ծակ թէ Արխագակէս եպիսկոպոսը գիտէր արդեօք մեր հազորդած տեղեկութիւնը բաց հարկ չի դարել փշելու, թէ չգիտէր—այդ մենք գուշակել չենք կարող. ըստ մեզ՝ սիսալ է գործել որ չի լ'չել, եթէ միայն գիտէր. բայց մեր գործը չէր գրքի սահմանից դուրս՝ հետամուր լինել հեղինակին, գրախօսի համար գրքում տպածն է քննութեան առարկան:

Ա. Ե-ի ալդ նոյն կէտ Յ-րդի առարթով կարող ենք ասել, որ մեր գիտեկութեան համար թաղիադեանցի Կ. Պոլիս եղած լինելու մասին Յովհաննէս քահանաւ Մկրեանի կազմած կենսագրութիւնը չէ աղբլւր ծառակել, և ալդ պատճառով մենք չենք ամեղանչած և աղբլւրի դէմո. որպէս և չենք մեղանչած հեղինակի գրածի դէմ. ալ, ընդհակառը, շափ հաւատարիմ ենք մեացած մեր ունեցած թէն ոչ լիակատար և պարահական աղբիւրին. Ուրախ կը լինէինք եթէ փշեալ կենսագրութիւնը մեր ձեռքի դակ եղած լինէր. այն ժամանակ մեր տեղեկութիւնը աւելի ևս լիակատար կը լինէր.

Ա. Ա.

# ՆԱԻԹԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՖՐԻԴՐԻ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

## II

ԲԻԲԻ-ԷՅԲԱԹԻ ՊԵՏԱԿԵՆ ՆԵԽԹԱՅԻՆ ՀՈՂԵՐԻ ԱԺՈՒՐԴՅ

16—18 փետրւարի 1899 թ.

16—18 փետրւարի Բաքւակ արքունական պալատի դահլիճում տեղի ունեցաւ Բիբի-Էյբաթի պետական նաւթափին հողերի աճուրդը,

Ինչպէս գուշակել է ինք՝ աճուրդը չափ բազմամարդ և աղմկալի էր. Աճուրդին բացի գուշական արդիւնագործներից մասնակցում էին նաև մեծ թուվ օրար քաղաքացիներ, նոյն խոկ մալրաքաղաքներից եկած վաճառականներ:

Համաձայն նախնական չափարարութեան՝ 16-ին փետրւարի կէսօր-ւակ ժամի 11-ից Բաքւակ նահանգի և Դաղստանի շրջանի պետական կալւածների կառավարիչ պ. Շապոչնիկովը, ներկալութեամբ կովկասի լեռնակին վարչութեան II շրջանի կառավարիչ պ. Դաւրիլովի և այլ աստիճանաւորների, սկսեց աճուրդին մասնակցողներից ընդունել ծրարների մէջ փակած չափարարութիւնները իրանց կանխավճարով՝ 12<sup>1</sup>/<sub>2</sub>, ժամին գահին մգաւ գուղիս նահանգապետ պ. Ռոգէ աճուրդին նախագահելու Մինչ այդ ժամանակ ներկալացրած էին մօտ 170 փակած ծրարներ և դրամ մօրաւորապէս 4—5 միլիոն ռուբլի: Ուղիղ ժամը մէկին նահանգապետութիւնների հասարակութեան հարցեց՝ արդեօք ոչոք այլ ևս ներկալացնելու չափարարութիւն չունի. և հինգ րոպէ անցնելուց իւս, երբ նոր չափարարութիւններ ներկալացնող չեղաւ, նորից խօսեց և լավոնեց, որ աճուրդի նիստը արդէն բացւած է համարում և այլ ևս չափարարութիւններ չեն ընդունելու:

